



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





6 NOV 2011

ՆՇԻԿ ԵՐԷՑ

391. 89

Q-83

# ԳՈՂ ՄԺԴՕ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՄՆԻՔՑ



ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ  
Տպարան «ԱՐԱՔՍ»  
1902

ԳՈՂ ՄԺԴՕ  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

12 JUL 2013

46473

### ՅԱՌԱԶԱԲԱՆ

Իմ գրական նախախայրիկն է եղել 1897 թուին լոյս ընծայուած «Ժուռկոնոյա ետ.», բանաստեղծական վեպը, որ բաղկացած է վաքսուն փոքրագիր երեսներից՝ Թաւրիզաբնակ Տիար Թադէոս եւ Տիկին Սրբառայ Ամասունեանց վաղամեծիկ էմմա դասեր յիշատակն նուիրուած, որից գոյացած արդիւնքը նուիրել էմ վապուրականի որբերի օգտին եւ որի նկատմամբ ժամանակին համակրանքով գրեցին «Արևնիս», «Փիւնիկ», եւ «Արեսելիս», ազգային լրագիրների պատուարժան հմբագիրները, որոնց փաշտեալականներից յորդորուած՝ ներկայ գրեցիս էլ հրատարակուի եմ հայ որբերին մի ծառայութիւն մատուցանելու մտնով: Տպագրական ծախսերը հստեղուց յետոյ՝ մնացած հատոյթի գուտ արդիւնքը՝ որբերի օգտին եմ նուիրելու:

Ինչպէս տեսնուի եմ յարգելի ընթերցողները, անուն կամ փառք չանելու մտնով չե, որ յանձն եմ առել սոյն աշխատասիրութիւնը. գրուի չը դնելով իսկական անունս, այլ Պետրոս Առաքեալի՝ գեղեցիկ սանարի դուան առջեւը նստող մուրացիկ անդամալոյծին ասած խօսքերից յորդորուելով՝ ես էլ եմ յայտնուի բե՛ արժար եւ ոսկի չ'ունիւի, այլ ինչ որ ունիւի՝ բոլորանուեր սիրով տալիս եմ երիւնդի նանարարի վերայ ընկած վիրաւորեալից աւելի կարօտ վիճակուի գտնուող հայ որբերին:

Սոյն գրեցիս սպառուումով՝ եքե փաշտեալութեան շնորհը գտնեմ սիրելի ընթերցողներիցս, այնուհետեւ պիտի աշխատիմ կրկնակի եռանդով գրել ազգային բնասոհմիկ կեանքի պատկերները:

ՆՇԻԿ ԵՐԷՑ



4903  
47

Ա.

Ամբողջ Հայաստանը խժոճութիւնների կենդրոն էր դարձել. նորա լեռները, դաշտերն ու ձորերը հայերի արիւնով էին շաղախուել. մանաւանդ Վասպուրական աշխարհը, որը Պարսկական սահմաններին մօտ լինելով՝ երկու կողմերում գտնուող բռնապետների ձեռքում խողալիք էր դարձել:

Սրանից աւելի քան եօթնասուն տարի առաջ, երբ յայտնի Խան-Արզալը, Խան-Մանուսը, Բագիրխան Բէկը եւ զանազան քիւրդ ցեղապետները միմի բռնակալներ դարձած՝ տիրում էին Վասպուրականին, եւ որոնց ծանր լծի տակ տառապում էր հայ ժողովուրդը, բոլորովին նոր ս քմահաճոյքներին գերի լինելով: Մի հասարակ քիւրդ, որին «Մժո» էին կոչում, հանգամանքներից օգտուելով, սկսեց գաղտնի հրոսակային խմբեր կազմակերպել, որոնց իւրաքանչիւրը բաղկացած էր քսան եւ հինգ հոգուց, որոնց թւում գտնվում էին նաեւ մի քանի համախոհ հայեր՝ Խան Արզալը, որի ահն ու սարսափը տիրել էր ամբողջ Վասպուրականի, Տուրուբերանի եւ Պարսկահայ բնակիչների վերայ, իւր զինւորական՝ եւ որ ճիշդն է բարբարոսական ամբողջ ուժերով չէր կարողանում իւրաքանչիւր տարի նորանոր գլուխ բարձրացնող բռնապետներին նուաճել, որով քայքայվում էր եւ իւր ունեցած իշխանութեան գօրութիւնը:

Մժոն՝ մի կարճահասակ, լիք ու թեթեւաքայլ մարդ էր, նա մի օրից կարող էր քայլելով հասնել

տեւեց, որովհետեւ ամեն մարդու սիրան էլ այրուած էր, որովհետեւ սկար ոյժ ունեցող մահմետականներն էլ որոշ չարով նեղուած էին զօրաւորներից: Մի Մժգօ հարկաւոր էր, որ այս անտանելի գերութեան շղթաները խորտակէր. թէեւ Մժգօն իւր անգթութեան մեծ մասը հայերի վերայ էր թափում առհասարակ, բայց հասարակ թիւրքերի ու քիւրտերի կրածներն էլ շատ ամենալի չէին: Ուստի եւ՝ Մժգօն իւր ծածկուած միջոցին էլ կարողացաւ ճարել բաւական մեծ թուով համախոհ ընկերներ եւ գնալով նոցա թիւր բազմապատկում էր: Մժգօի եւ ընկերների սովորութիւնն էր, մի տուն կորելուց յետոյ միւս օրը Բաղէշ կամ Մուշ մեկնել ու ձեռքին ունեցած աւարը փողի վերածել. նոյնպէս կ'անէին նաեւ Պարսկաստանից, Մուշից եւ Բաղէշից կողոպտած աւարները: Անունը միայն զող Մժգօինն էր, ինչպէս ասած. «գայլի անունն է ելել», աղուէսներն աշխարհն են քանդում»: Մօտ տասն տարի Մժգօն աւերումներ չը մնաց, որ չը գործեց: Ամենից ազդեցիկ խաներն ու բէգերը՝ ինչ միջոց ասեա գործադրեցին, բայց եւ այնպէս չը կարողացան նորան ծուղակը գցել: Նա քամու նման երեւում ու անհետանում էր:

Օրերով ու շաբաթներով խաներն ու բէգերը ճանապարհները փակում, ամեն հաղորդակցութիւնները կարում էին. լեռների գլխներն էլ պահապաններ էին դրել, բայց դարձեալ իրենց քթի տակից ձիերը յափըշտակվում, տուները թալանվում էին. ոչ ոք չէր իմանում, թէ ո՞ր ճանապարհով էին տարվում: Քանի որ հսկողութիւններն աւերանում էին, այնքան էլ գողութիւնները շատանում էին: Ամեն կողմերը պատ-

ուէրներ ուղարկուել էր, որ՝ ուր որ տեսնէին գող Մժգօին՝ անմիջապէս բռնէին կամ սպանէին: Բայց ո՞վ կարող էր գտնել նորան. նա ամեն տեսակ ծրարտումներ առնել զիտէր. շատ անգամ գիւղական տէրատէրի կերպարանք կ'ստանար, որովհետեւ իւր մանկութիւնից հայերի մէջն էր մեծացել. ոչ միայն լաւ հայերէն էր իմանում, այլեւ միջանի շարականներ էլ գիտէր երգել. հոգւոցը, պանպանիչն ու փարասեան մի ուսեալ քահանայից աւելի լաւ բերան էր արել. դաւրիշութիւնը իւր արհեստն էր արդէն: Շատ նեղ ընկած ժամանակն էլ՝ կոյր աշուղ էր դառնում, սազը քամակից կախած՝ շուկաներում, նոյն իսկ իրան խտիւ հալածող խաների եւ բէգերի տներում ման էր գալիս, տաղեր ու խաղեր էր երգում: Աչքերին այնպիսի ճշտութեամբ կոյրի ձեւ էր տալիս, կերպարանքն այնպէս էր փոքում, որ շատ անգամ ընկերները պատահելիս՝ չէին ճանաչում, մինչեւ ինքը նշանական սուլոցը չ'արձակէր. ի հարկէ առանձին թաղերից կամ ճանապարհներից անցած ժամանակները. էլ ո՞վ էր կարող ճանաչել Մժգօին, որ բռնէր նրան: Մժգօն մի վարժ զօրապետի նման կըթել էր իւր ընկերներին. վտանգ սպառնացող ժամանակներում զանազան անասունների եւ թռչունների ձայներով մի միանց իմաց էին տալիս:

Այնանային մի պարզ օր էր, Խան Արդալը իւր Հստան օրդու թլպատութեան հարսանիքը կատարել տալու հանդիսի մէջն էր: Մի կոյր աշուղ նորա բերդի հարաւային պարսպի մօտերը նստած՝ Չնկուռ էր ամուժ, քրդերէն եւ թուրքերէն երգեր էր երգում իւր լիւր ու զիլ ձայնով: Հայ եւ քիւրդ բազ-

մութիւն, որ սովորութիւն ունէր ցուրտ եղանակներու մէջ աչք տեղը հաւաքուելու, որին բառով էին անուանում, աշուղի գլխի վերայ էին թափել, մտիկ էին անում նորա երգերը, որոնք առաջին անգամն էին տեսնում մի այ՛ պիսի զօրեղ ձայն ունեցող աշուղի. որի մօտը նստել էր իրեն անաշնորհող կաղ պատանին պարսկահայ տարազով, որն աշուղի թեւէն բռնած ման էր ամուսն: Ժողովուրդը հարցեր էր ուղղում կաղին նորայայտ աշուղի մասին. նա այսպէս էր պատմում նրանց, «Վարպետս Պարսկաստանի Սալմաստ գաւառիցն է եկել, որին աշուղ Մուշօ են կոչում այն տեղերում եւ բանաստեղծի մեծ համբաւ է ստացել: Նա եկել է Վասպուրականի հայոց վանքերին ուխտ անելու, այն տեղից էլ Մուշի Ս. Կարապետը գնալու:

Խան Արդալը լսեց աշուղի զիլ ձայնը, մարդ ուղարկեց եւ նրան իւր մօտ կանչեց: Կաղ պատանին հաւաքեց վարպետի աշուղական պարզ ու թեթեւ գործիքներն, որոնք մի տօպրակում ծրարելով՝ աշուղին յանձնեց: Ըանապարհին, մի լայն ու տղմուտ ջրի պատանեցին, որի վերայ մի նեղ փայտ էին պարզել. ուստի անց ու դարձ էր անում ժողովուրդը: Աշուղին անաշնորհող կաղը կանգ առեց այս տեղ. չէր ուզում անցկենալ նեղ ու անլստահ կամուրջից: Նորա երկչոտութեան վերայ ծիծաղում էին երախտներ: Մի քրդի տղոյ յիսուն անգամ վազելով անցաւ ու դարձաւ փայտի վրայից, նա նրան սովորեցրնում էր կամուրջից անցկենալու կերպը, բայց կաղը չուարել ու կանգնել էր կամուրջի գլխին: Աշուղ Մուշօն ստիպում էր որ ջուրը մտնէր եւ շալակով անցկացնէր նաեւ իրեն: Նրկարահասակ եւ ամենատղեղ կաղը հնազանդեցաւ վարպետին. երբ ուղում էր տրեխ-

ներն եւ գուլպաները հանել, չը կարողացաւ իրեն պահել, մի երկար փայտի նման ցած ընկաւ եւ առուի մօտից գլորուելով գնաց ու թաւալուեց ձորամիջի աղտոտ տիղմերի մէջ: Բազմութիւնը հոնում էր պատանու թուլութեան վերայ: Նեխերում փալուլուած կաղը հաղիւ վեր կացաւ տեղից եւ կաղալով նորից աշուղի մօտը դարձաւ, որի իւրաքանչիւր քայլափոխին՝ գրեթէ աջ կուռը գետինն էր համնում եւ նորից վեր բարձրանում: Տեսարանը խիստ ծիծաղաշարժ էր: Մի երկարահասակ եւ պարթեւակազմ պատանի էր անաշնորհողը. նա աջ ոտից էր կաղում. որի շարժումներ տեսնողը չէր կարող իւր ծիծաղը զսպել: Աշուղն էլ գլխին դրել էր մի ամբողջ ոչխարի մորթից պատրաստուած պարսկական խոշոր փափախը, (գրելխարկ) աչքերին դրել էր սեւ թելերից հիւստուած անվիկը, որն ընդհանրապէս հիւանդ աչքեր ունեցողներն էին գործածում. հն եւում էր նրան, ուր որ տանելու լինէր. մանաւանդ երբ այս տեսակ առուներից էր անցկացնում, էլ աշակերտի գլխին օյին չէր թողնում որ չէր հանում:

Արդալ Խանի ազարանքը զարգարուել էր դրսի կողմից գունաւոր կտաւներով, բազմութիւնը վրիտում էր դուռն ու դուրսը. նոքա ամենքն էլ շարժման մէջ էին, որը հիւրերի ձիւրն էր դարձնում, որը սուրճի, նեղգիլէի հոգսն էր քաշում. որը հացի, շէրէթի, սերի եւ մածնի պատրաստութիւններն էր տեսնում. իսկ զիւրախանէն — հիւրանոց — լիքն էր քիւրդ, թիւրք եւ հայ մեծամեծներով. որոնք մի մի թանկագին նուէրներ էին բերել խանի թղպատուող որդուն-Հասանին- եւ իրենց առանձին տեղերն էին բազմել սովորական օրէնքի համաձայն ու Գող

Մժոշոյի արարքների վերայ էին խօսում:

Կոյր աշուղը Խան Արղալի ծառաների առաջնորդութեամբ գլխանխանէն մտաւ եւ գետնախառն մի թամանդէ անելով դռան մօտը չոքեցաւ. իսկ նորա աշակերտը հագուստները մաքրելու եւ չորացնելու պատճառով երբեմն Թօնրատունն էր մտնում եւ երբեմն ախոտատներում, անդադար աչ կուռի վերայ կազարով եւ տեանողներին հաճոյք ու զուարճութիւն պատճառելով:

Աշուղը դուրս հանեց տօպրակից իւր չնկուռն ու փողը, մի քանի անգամ ամբացուց տամբուրի պղընձեայ թելերն եւ կեռասի կեղեւից պտորատում քազանեղ փորձերի գործողութիւնները կատարելուց յետոյ՝ սկսեց բարձրաձայն զլել մի պարսկական քայաքի: Բազմականները զարմանքով զմայլում էին նորա զեղեցիկ ձայնի եւ սրտագրաւ եղանակի վերայ: Մի քանի քրդական, թրքական եւ արաբական երգերը երգելուց յետոյ, եկաւ եւ նորա մօտը չոքեց նաեւ իւր կաղ աշակերտը, որն երբեմն ձայն առնելով եւ երբեմն իւր կոպիտ ձայնովն օգնում էր վարպետին: Կոյր աշուղը բաւական զուարճացրեց բազմականներին. կարգը հասաւ դառուլ-զուռնին: Խան Արղալը մի զոյգ քանոց ոսկի նուէր տալով աշուղին, հրամայեց ծառաներին որ այն գիշերը լաւ հիւրասիրէին պարսկաստանցի աշուղին: Արդէն գիշերը վերայ էր հասել, կոյր աշուղին եւ իւր աշակերտին գիշերելու համար տեղ տուին ձիերի ախոտատնում պատրաստուած սաքիւում, որոնց սպասածն էլ արդէն այն էր, ու նորա համար էլ եզել էին մինչեւ այն տեղը: Երբ առանձնացան աշուղն եւ աշակերտը, Խան Արղալի ծառաները

րից մինը պատուիրեց նրանց որ դուռը բաց չը թողնէին, որովհետեւ Գող-Մժոշոն կարող էր առիթից օգտուել եւ հիւրերի ձիերը փախուցել: Երբ վերջինս էլ դուրս գնաց, աշուղը հարցուց աշակերտին:

— Յաջողեցա՞ր.

— Այո՛, պատասխանեց աշակերտը, ամեն ինչ կարգին է. մեր ընկերները կը հասնին այս տեղ՝ կէս գիշերից մի ժամ անցած, արդէն դռնապանին քնցնելու համար դեղ ունինք մօտներս, մնացածը դիւրին է:

— Փանոսին տեսա՞ր.

— Նա Սափար աղից չի հեռանում, բայց հաւաքուած նուէրների տեղը յայտնեց ինձ. ես իմ չորերը գանձատան առջեւն էի փռել. երբ Ահմէդը դուռը բանում եւ փակում էր, ես շարունակ գիտում էի:

Կէս գիշերն անցել էր, Խան Արղալի հիւրերը վաղուց էր որ ցրվուել էին գիւղի մէջ հանդատանալու համար. մի քանի պահապանների ձայները միայն լսվում էին ապարանքի դռան առջեւից. աշնան խիստ ցուրտը նրանց էլ ներս փախուցել տուեց: Դրուհապանը միայն կծկուել էր ապարանքի դրսի դռան մօտ մի հաստ թաղիքով փաթաթուած. երբ ապարանքի դրսից կկուռի ձայնը լսուեց, ահա նրա կոկորդը խըրուեց մի երկար սուր, եւ որն անշունչ գետին թաւալուեց, Խան Արղալի դրսի դուռն էլ բացուեց եւ քառասուն զինուած մարդիկ ներս մտան: Գանձատունն եւ ախոտատները պարպելու գործողութիւնը քառորդ ժամ չը տուեց:

Կոյր աշուղն, իւր աշակերտը եւ քառասուն ընկերները մի-մի արաբական ձիու վերայ նստած՝ վեր առին Խան Արղալի ապարանքից գողացած գոյքերը:

և միեւնոյն գիշերը դէպի Բաղէշը մեկնեցին:

Կոյր աշուղ Մուշոնը Գող-Մժղօն էր: Այդ օրից «Մժղօ» անունն ընդունեց նա, որովհետեւ ժողովուրդը չէր կարողացեր նորա յայտնած Մուշօ անունը միտ պահել: Թէ ի՞նչ ազգից էր Մժղօն եւ ո՞ր տեղից էր եկել մինչեւ Վասպուրական հասել, մինչեւ այսօր էլ դադարնիք է մնացել, նա հայի մէջ՝ հայ էր ձեւացնում իրան, իսկ թուրքի մէջ՝ թուրք. երկու լեզուներն էլ հաստատ խօսել էր իմանում: Նա թէ հայի նման աղօթում եւ թէ թուրքի:

\* \*

Վերացման խաչի տօնի առաջին շաբաթ օրը պարսկահայ տարազով տասներեք ձիաւոր ուխտաւորները Լիւմ անապատի դրսի տունը հասան, որոնց թըվում կային նաեւ մի քանի կիւն եւ աղջիկներ. նոքա բարձել էին հինգ ձիաբեռ բրինձ, չամիչ եւ պարսկական դորդեր ու Ս. Խաչի տօնին վանքի միաբանութեան ճաշ տային եւ տաճարին նուէրներ, որով ուխտները կատարէին ու վերադառնային:

Դրսի տան վերակացուն՝ Սիմոն վարդապետը եւ նորա սպասաւոր նահապետը խիտ մեծ պատուով ընդունեցին ուխտաւորներին, որոնց մի գիշեր պահելուց վերջ, նաւակով կղզին ուղարկեցին:

Ուխտաւորները նաւակից դուրս եկան կղզու վերայ թէ ոչ, նոցանից մինը գետինն ընկաւ ու փրփրեց: Ուխտաւորներից մինը քահանայ էր, վերջինս լուսնոտի թեւերը բռնեց եւ մի ինչ որ աղօթք կարդաց. քառորդ ժամից վերջ՝ լուսնոտը հանգստացաւ եւ

վեր կենալով՝ ընկերները հետ իրենց համար պատրաստուած պատուաւոր հիւրանոցը գնաց:

Անապատական կարգերի համաձայն գիշերային հսկումն սկսուեց, ուխտաւորներն ամէնքն էլ եկեղեցի գնացին: Հետեւեալ օր ճաշին մի փառաւոր հացկերոյթ տրուեց միաբաններին ուխտաւորների կողմից: արդէն նուիրուած խուճկ ու մոմերին թիւ չը կար, ուխտաւորների ջերմեամանդութիւնը՝ մոլեռանդութեան էր հասնում, նոքա խնդրեցին վանահայրից, որ թոյլ տար լուսնոտ հիւանդին երկու գիշեր եկեղեցում անցկացնելու: Վանահայրն ամենայն սիրով ընդունեց ջերմեռանդ ուխտաւորների խնդիրը:

Երկրորդ գիշերը՝ լուսնոտ եւ իւր ծառան եկեղեցում անցկացրին իրենց ժամանակները, կանայք եւ աղջիկերք արդէն դրսի տան մնացին, որովհետեւ իգական սեռին արգիլուած էր Ղզին ստք դնելու: Վանքի միաբաններից՝ Աբրահամ վարդապետը, որ հազարաւոր ոսկիները աէր էր եւ ղեռ չէր կշտացել ոսկիներ դիզելուց. Մուշեղ աղին միշտ իւր խուցն էր հրաւիրում: Ուխտաւորների գլխաւորի անունն այսպէս էր, որի հետ շատ պատկառանքով էին վերաբերվում ուխտակից ընկերները, եւ որի մասին յայտնել էին թէ «Թաւրէզ քաղաքի միլիոնատէր վաճառականն է» նորա համար Աբրահամ վարդապետը շատ յարգանքով էր վարվում նրա հետ, մինչեւ անգամ խնդրեց նա Մուշեղ աղից. որ նա իւր խուցը գիշերէր, որովհետեւ նորա խուցը միայն աչքի էր ընկնում ողջ միաբանների նկուղներին համեմատութեամբ. բայց Մուշեղ աղան հրաժարուեց հայրսուրբի այս համակրական պատուից, միայն թէ

2



խնդրեց նրանից, որ պատուիրէր ժամկոչին անհանգիստ չանել նրան, այս գիշերը, որովհետեւ մի քիչ հիւանդ էր զգում իրեն, չէր կարող ժամերգութեան ներկայ գտնուիլ, հակառակ իւր բուն ցանկութեան:

— Այդ չեն կարող անել մեր կողմից ժամկոչներն, ասոց Աբրահամ վարդապետը, բայց դրա ճարն էլ եմ գտել ես՝ Մուշեղ աղա: Երբ մեր քաղաքի խօջաները գալիս են ուխտի, եկեղեցի գնալիս, նրանց իմ սենեակն եմ բերում, ժամկոչն այլևէ չիմանում որ նրանք իմ սենեակումն են, այնպէս էլ ձեզ կը բերեմ իմ խօսքը, եւ ես ինքս եկեղեցի կը գնամ:

— Շատ շնորհակալ կը լինիմ, հայր սուրբ, եթէ մի այդպիսի շնորհք անէք ինձ:

— Փլխիս վերայ, Մուշեղ աղա, մենք էլ մեր ունեցածն էլ ամբողջ Ձերն է. մենք միշտ պատրաստ ենք Ձեզ համար զոհուելու:

Մուշեղ աղան երկու փայլուն սուրբ գրեց Հայր Սուրբի ափը եւ դուրս ելաւ նորա խօսքից:

Եկեղեցում փակուած ուխտաւորներն իրենց պաշտօնը լրացրել էին՝ երբ գիշերային զանգը տրուեց, կարգը հասաւ Մուշեղ աղին: Տեր Զաքարիոն հրաւրեցին որ Խաչի տօնին պատարագէր, բայց նրա ատմանքի ցաւը բռնել էր, մինչեւ անգամ չ'ուղեց դաս երթալ եւ փիլոն տանել: Չը տես միաբանների աչքերը շլացիլ էին, որովհետեւ իրենց կեանքում այդպիսի առատաձեռն ուխտաւորներ իրեք չէին պատահել: Նոքա սակիներ էին առել ճաշելու ժամանակ ամենքին եւ դրում պատահելիս, էլի ձեռները համ-

բուրում եւ առատ փող էին տալիս: Միաբաններից շատերն ասում էին:

— Ա՛յ, ջերմեռանդութիւնն էսէնց կը լինի. մեր քաղաքացիներն են. որոնք հոգիներն ու մի փարան հաւասար են բռնում:

Լիմ անապատի միաբաններն եւ ուխտաւորներն երեք օր այսպէս միմիանց փառաւորեցին: Դրախ տան մնացածներն էլ սկիտ զօրութեամբ արժանի եղան մի գիշեր կղզու բոլոր տեղերը տեսնելու, հակառակ անասպատական կանոններին, բայց ոչ կանանց հազուատով, նոքա իրենց հազուատները փոխել էին ընկերների հազուատների հետ:

Չորրորդ օրը յանկարծ անյայտացան ուխտաւորները, ո՞ւր, եւ ի՞նչպէս — ոչ ոք չէր իմացել: Ահա Աբրահամ վարդապետն իւր միբրուքն եւ հազուատներն է փետում, նորա վերայ խելքի նմուշ չի մնացել. անդադար աղաղակում է «տա՛րան, տարա՛ն». ուրիշ ոչինչ: Լուսարար Մարկոս վարդապետն էլ ձեռներով գլխին է տալիս եւ մաղերը պոկում, շարունակ «ա՛խ, վախ, աներս քանդուեց». ասում: Ի՞նչ է պատահել — ոչ ոք չիմանում:

Վանահայրը եւ Լուսարարը դէպի նաւահանգիստն են վաղում, բայց անա նաւակն էլ այն տեղ չէ: Կրակ են վառում, դրսից ոչ մի նշան ցոյց չեն տալիս, որովհետեւ նոքա այնպէս են կարծում թէ նաւակը ներսն են տարել:

Ուխտաւորները գիշերով նաւակն առել եւ ուղղակի Տիրամայր — Ասպարածին — կոչուած գիւղի ափն էին դուրս եկել: Իսկ դրսի տան ուխտաւորներն

առաջին օրն արդէն Սիմոն վարդապետին լիարուան ժամոցներ տուել եւ Ասպարածին ուխտի գնալներն էին յայտնել. իմաց տալով միանգամայն որ իրենց ընկերներն էլ էինդ օրից վերջ այն տեղ պիտի գուրս գային: Հետեւաբար ինչ գոյք եւ ձիեր ունէին հետներն էին տարել, որից լուր չունէին երբէք կղզու միաբանութիւնը:

Ուխտաւորները՝ Եկեղեցու ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներն էին գողացել, իսկ Աբրահամ վարդապետի հազարաւոր ոսկիները: Այն օրից սկսած՝ այլ եւս մերկ էր շրջում Աբրահամ վարդապետը. գիշեր ուցորեկ հանգիստ քուն չ'ունենալով. նա մոռացաւ այլ եւս վարդապետութիւնն էլ, ժամասիրութիւնն էլ, մինչեւ որ ամենադառն զրութեամբ կնքեց իւր մահկանացուն:

Երկու ամիս էր անցել այս գէպից, կարին քաղաքում ոսկերչնոց կոչուած շուկայում՝ Լիմ անապատի եկեղեցական անօթները ծախում էին Գող-Մժգոյի ընկերները:

Ընթերցողն անշուշտ հասկացաւ թէ Տէր Զաքարը նոյն ինքն Գող-Մժգոն էր, իսկ Մուշեղ աղէն՝ նբա ընկերներից մինը: Որոնց հետ ոչ կին կար եւ ոչ աղջիկ, այլ պատանիներ, որոնց կանացի հագուստներ էին հագցրել, վանքը կողոպտելու եւ վարդապետի ոսկիները գողնալու համար:



**Բ.**

Վան քաղաքից երկու ժամաչափ հեռաւորութիւն ունեցող Լ. գիւղում հարստութեան կողմից մեծ անուն էր հանել տանուէր Միսոն, որովհետեւ այնպիսի հալածական ժամանակներում՝ նա միայն իման Աբղալին սիրելի լինելու բախտն էր ունեցել գիւղական հայերի մէջ: Հարիւր յիսուն տնից բաղկացած գիւղում, նա միայն կարողացել էր մի գութան բանեցընելու չափ տաւարների տէրը լինել եւ երկու թաղիք ունենալ՝ ասան անկիւնում՝ միշտ փաթաթած, որոնք իման Աբղալի տակը պարզելու օրը միայն բացուելու բախտն ունէին: Տեղաշոր, կապերտ, մի ընտանիքի ամենակարեւոր հաւաստեղէնները վաղուց համբարձել էին հայ գիւղե ից: Կանայք խօ՝ ստաբորիկ ճըղնաւորների ձշմարիտ աշակերտներ էին դարձել. բախտաւոր էր համարվում այն կինը, որ գլխին մի լաչակ էր գցում. շատ շատ՝ մի թանձր կարմիր կտաւից շապիկ մինչեւ պճեղները հասած, որ հազիւ տանուտիրոջ հարսին կամ կնկան վիճակուել էր հագնել, իսկ հասարակ մահկանացուներին՝ — մի՛ հարցներ, սիրտ էլ մա՛նեք աչքով տեսնելու, որովհետեւ հազարաւոր երգիքներով ու պատուհաններով բաղկացած ու կարկատած փալանների կտորներով էին ծածկում իրենց մերկութիւնները. իսկ երախտները, որոնք տասներկու տարուց չ'էին անցել՝ Աղամային մերկութեամբ ման էին գալիս գիւղում: Գիշերները՝ անկողիներին փոխարէն մի-մի խուրց խոտ էին պարզում տախտի

մէջ ու այնպէս մերկ պառկում էին վրան.՝ ամենից հանգիստ քնելու տեղն էր աստուածներում դարմանով (յարթ) լիք մսուրները: Քրդական պետութիւնը այս երջանիկ կացութեան էր բարձրացրել հայ գիւղացիներին: Տանուտէր Մխոն միայն երջանիկ էր համարվում բոլորի մէջ, երկու թաղիքներ աւելին ունենալով, որովհետեւ նախ Աբղալի երկիւղից ոչ ոք չէր համարձակում յափշտակել նրանից:

Ով որ մի կով կամ մի էծ ունէր՝ նորա համար կը պահէր, որ պատահող հիւրերին կաթով ու մածոնով պատուէր, աւելին էլ երկու անսպասներին, Աղթամարին, Վարազայ եւ Վասպուրականի բազմաթիւ վանքերին տար, որ իր հոգու փրկութեան համար աղօթքներ անէին: Գիւղացիներին մնում էր լոկ թթու թանն ու ձաւրէ վոռջ (1): Բարեպաշտ նախնիք՝ ամեն գիւղի մօտ մի մի վանք էին շինել, պսղի, հաւոյք էին յատկացրել, օրհնած հոգիներն այնքան սիրում էին վանքեր ունենալ, որ եթէ հնար լինէր՝ մի-մի հատ էլ իրանց քթերի վրայ պիտի շինէին:

Այն ժամանակներում այնքան էին շատացել վարդապետները ու ճգնաւորները թիւը, որ վանքերում բաց տեղ չէր մնացել, որ շինութիւններով ծածկուած չը լինէր: Ժողովորդը պատրաստ էր ոչ միայն իւր արեւն քրտինքով վաստակածը նոցա տալու, այլ եւ իւր մարմնից էլ կը կտրէր մի մաս ու նրանց կը նուիրէր, որ հանդերձեալ աշխարհը եթէ անդամատուած գնային, գէթ արքայութեան միջում լայն տեղ

(1) Զաւարից (ձեծուած ցորեն) յոկ ցուրով պատրաստուած ապուր:

ունենային: Քաղաքներն ու գիւղերը լիքն էին քարոզիչ վարդապետներով, որոնք հաւթերուփիւսն ու զորուարփիւսն էին քարոզում: Իշխանութեանը հնազանդելու պարտաւորիչ խրատներ էին տալիս. Քրիստոսն եւ իւր աշակերտները սիրում են մի միայն աղքատներին, իսկ իրենք վանքերում ակուշ-չակուշ ուտելով ու խմելով (1), հանգիստ քնելով՝ պատրաստվում էին այս աշխարհում ողորմութիւն տուողներին շալակով անցկացնել հանդերձեալ աշխարհի ճանապարհում գտնուած մազի կաւոռոջից ու եռացեալ կրեի կարասներից: Քաղաքներում եւ գիւղերում որքան որ ծոյլ մարդիկ կային՝ վանքերն էին փախչում ճգնաւորներ գտնալու: Այն ժամանակներն էր, որ վարդապետներն արգելում էին ժողովրդին սուր ու հրացան գործածել, բովհետեւ աւետարանում գրուած կայ. «ով որ սուր առնէ, սրով կ'ընկնի», գրեթէ Սուրբ գրքում որքան որ այս իմաստ գրուածներ կար, բոլորն էլ անգիր էին արել ու ուսմիկ ժողովրդին սովորեցնելով՝ մոլորեցնում էին: Վարդապետները գէթ այսքան կարող էին եկեղեցու բեմից խօսել, իսկ տէրատէրները, որոնց փորում մի այբի կտոր անդամ չէր գտնվում, վարդապետների ներկայութեանը՝ լեղունքը

(1) Անապատակները քեւր միս չէն ուտում, գիւնի եւ օդի չէն խմում, բայց միմեանց միար կրծում եւ արիւնը խմում եւ: Նոքս՝ երկու անապատ միաբաններն էր մի-մի հնապարեան նշեկի ունին, որոնց հովանու սակր հարստեղով՝ միմեանց բաւքաւում եւ, որի համար էր այն նշեկիների «բաւքաւանց ծառ» եւ ակուսում:

փաթաթվում էր. այլ եւս եկեղեցիներում ձայն ու ծրար-  
տուն չէին կարող հանել, այլ եւս վարդապետներէց  
արձակուած հրամանները Աստուածային պատգամների  
տեղն էին ընդունում, որով շատ ձգնաւոր համարուած  
վարդապետները միեւնոյն ժամանակ սկսեցին զանա-  
զան քաղաքներում ու գիւղերում քահանաների պաշ-  
տօնը խլել՝ քարոզիչ անուան տակ:

Գող Մժգօն եւ ընկերները չէին դադարում չէն  
վանքերը կողոպտելուց. բայց ճարպիկ վարդապետները՝  
փոխարէնը շուտով կը բերէին նիւթապէս ու մտաւո-  
րապէս սնանկացած հայ ժողովուրդից: Եթէ վանքն ար-  
ծաթեայ խաչեր էր կորցրել՝ ժողովուրդը պատրաստ  
էր իւր լուծն արձակել եւ եղները ծախելով վանքի  
համար ոսկուց խաչեր շինել տալ, եթէ նոյն խիկ  
տարին չանցած՝ այդ ոսկի խաչերն էլ տանէին: Խօ  
վանքերն առանց խաչի մնալու չէին:

Փայտէ խաչեր ընդունելի կը լինէին: Ո՞վ էր կարող  
աղքատութիւն քարոզող վարդապետներին ասել թէ.

— Քրիստոսն էլ փայտէ խաչի վերայ խաչուեց, աւե-  
տարանում այսպէս է գրուած — : Այդպիսին այլ եւս  
անհաւատ էր համարվում ժողովուրդի աչքին, ի հարկէ  
վարդապետներէց տեղացած նշովքներով լի քարոզ-  
ների շնորհիւ: Ո՞վ էր վիստողը, — դարձեալ հայ ժողո-  
վուրդը. որ քանի գնար ամենաթշուառ մի կացու-  
թեան էր դատապարտվում: Չորս կողմից կողոպտվում  
էր նա, կամայ եւ ակամայ:

Կ. Պօլսում մի քիչ զարգացած վանեցի Օհանը  
նոր էր վերադարձել հայրենիքը, որ իւր ստացած կըր-  
թութեան հետ ունէր նաեւ ընտանի խելք եւ ընդու-  
նակութիւն: Նա շատ հակառակ էր վարդապետների

մոլեռանդ քարոզներին, այդ պատճառով ժողովուրդը  
նրան «փողէտդան» էր անուանում: Հակառակ ժամա-  
նակի ընդհանուր գողափարներին, աներկիւղ եւ հա-  
մարձակախօս մի անձնաւորութիւն էր Օհանը: Նա ե-  
ղաւ առաջին անգամ Լիմ անապատի քարոզիչ Գա-  
լուստ վարդապետի հետ վիճարանութեան մտնողը, երբ  
համոզում էր Լ. գիւղի ժողովուրդեան ծախել իրենց  
եղները, տաւարներն ու վանքի համար արծաթապատ  
աւետարանի կողքեր, խաչեր ու դարգեր շինել տալ:  
Օհանը՝ երկար համբերեց տանուտիրոջ ու վարդապետի  
զանազան յորդորները լսելով երեցփոխի տանը, ուր  
ամբողջ գեւղացիք հաւաքւել էին վանքի պիտոյքները  
հոգալ տալու համար: Խեղճ գիւղացին, ո՞րակից ճա-  
րէր այս ծանր պահանջները, մանաւանդ որ այն տա-  
րին լաւ բէրք էլ չէին ունեցել, եւ պարտաւորուած  
էին ուտեստները քաւքից գնելու: Շատերի տանը  
մի կտոր հաց չէր գա՛վում, շատերն իրանց լծկան-  
ներն ծախել ու ցորենի էին տուել եւ զեռ տարելից  
հացը չէին կարողացել ձեռք բերել. ի՞նչ ճար անէին,  
պէտք էր որ գէթ ցորենի կէսը տային վանքին, այն-  
պէս էլ համոզումներ կայացաւ: Օհանը՝ որ մինչեւ այս  
ժամանակ լուռ ու մունջ լսում էր տեղի ունեցած  
խօսակցութիւնները, բարկութիւնից ծնկների վերայ  
եկաւ, եւ ինչ որ կար պուտկում՝ շուռ տուեց քա-  
սան, ասելով.

— Հայր Սուրբ, դուք որ այդքան պինդ-պինդ  
քարոզում էք ժողովուրդին աւետարանից, ինքնե՞րդ ին-  
չի չէք կատարում ձեր պարտքերը:

— Ի՞նչ պարտք, գոռաց վարդապետը, աչքերը  
շուռ տալով Օհանի վերայ ու քանի ձայն ունէր կո-

կորդում, դուքս թափել ջանալով: — Տօ՛, անիծեա՛լ. դու միշտ քու փոքրէստանութիւնը պիտի յայտնե՛ս. ախր վարդապետը աղօթքներով է կատարում իւր պարտքերը: Ձեր տուածներն փոխարէնը՝ երկնքում պիտի ստանաք հաղարապատիկ ու բիւրապատիկ:

— Ես չեմ ասում թէ չէք աղօթում, ես ասում եմ որ, եթէ այս տարի մնայ ձեր պահանջը՝ խօ՛ աշխարհը չի քանդուիր. փառք Աստծուն, դուք վանքում երկու տարուան համար ուտելու ցորեն ունիք, իսկ էս խեղճ պարտատէր գիւղացիք իրենց լծկանները ծախելով հանդերձ, շատերը հինգ ամսոյ համար էլ չեն կարողացել պաշար առնել:

— Չէ՞ որ Քրիստոսն ասաց. «վաղուան համար հող մի՛ անէք»: Ժողովուրդը լուռ եւ անձայն մտիկ էր անում, վասնզի թէ վարդապետից եւ թէ Օհանից հաւասարապէս էին ակնածում, վարդապետի՝ անէծքներից էին վախենում. իսկ Օհանի՝ գիտութիւնից ու հանձարից էին ակնածում, որ ժամանակ առաջին մարդն էր համարվում և գիւղում:

— Ուրեմն դուք ինչի՞ երկու տարուան համար էք հող տանում: Քրիստոսն ասում է. «Նախ առնել եւ ապա ուսուցանել»: Հայր Սուրբ, դուք այս թըշուառ ժողովուրդին փոխանակ ուղիղ ճանապարհով առաջնորդելու՝ ընդհակառակն մոլորեցնում էք. վանքը կարող է առանց արծաթապատ աւետարանների եւ խաչերի մնալ, իսկ ժողովուրդը չի կարող առանց ապրուստի մնալ. մինչեւ ե՞րբ մենք տանք վանքին, ու դուք Գող-Մփղօին. դուք միմիայն Ս. Գրքից ձեր հաշուոյն եկածներն էք անգիր արել, իսկ ինչ որ ամենակարեւորն է, բոլորովին անտես էք արել, ինչպէս.

«Նովիւ քաջ դանձն իւր գնէ ի վերայ ոչխարաց» եւ այլն: Դուք վարձկանների նման ոչխարի բուրթը, կաթն ու միսն առնում էք, իսկ երբ դայլը տեսնելու լինիք, կը փախչէք ու ծովապատ կղզում կ'ամրանաք:

Վարդապետը լսելով այս յանդուգն խօսքերն Օհանից, կրակ գարեցաւ, բայց երբ նկատեց ժողովուրդեան երկու մասի բաժնուելը, լռութիւն պահելը խօհեմութիւն համարեց, որովհետեւ Օհանի այս խելացի խօսքերը լսելով միամիտ ժողովուրդը, սկսեց քըրթմընչել:

— Աստուած կի՛նակի՛ ըսկունի, աղորդ կ'ասի էօխան. մեր ճօկներ անօթի են, խեղճ են. թող էսա տարին մնայ խայրութեան ուղածները, ասաց Պոսոն:

Վարդապետն կողմնապահները հակառակն էին պնդում: Ոմանք սպառնալով եւ ոմանց հրէշային սուտերով նախապաշարելով. մանաւանդ Երէցփոխանը. որը մասնաւոր շահ ունէր հաւաքած բոլոր հասոյթներից, ասաց.

— Տղե՛րք, քարասիրտ մի լինիք. չէ՞ք յիշում, Գէլոնց տան բոլոր մարականները, մինչեւ անգամ աղն էլ որդնեցաւ անցեալ տարի, երբ Նարեկայ վանքի պողին չը տուաւ. ինքն էլ մեռաւ միեւնոյն տարին ոճիլների ու մրձիւնների միջում փակուած. էն սուրբ վանքերի ժաւ-պատարագ որ չը լինի, մեր հողուն ո՞նց փրկութիւն կը լինի:

— Խնամի Մարդօ՛, վերայ հասուց Օհանը, մենք չենք ասում որ վանքի պողին չխաւնք, այլ երբ ունենաք, այն ժամանակ: Եկող տարի եթէ Աստուած յաջողեց, երկու անգամից էլ աւելին ենք խոստանում տալ: Ախր չունեցածից ի՞նչը կարող են տալ. Դէ՛,

Թող Սրբօն, Կարօն, Վրդօն ու Զաքօն ասեն թէ  
 (առալիս ենք): Նախ պարտաւոր ենք մենք ունեցող-  
 ներս նրանց պէտքերը հողալ, որովհետեւ սոքա զիւղի  
 ամենաչքաւորներն են: Գո՞ւք ասում էք՝ աա՛նք, միշտ  
 ասնք վանքին, ուրեմն էլէք ամենքս էլ գնանք  
 մտնենք վանքը, մեր ամէն ունեցածներն էլ տանք  
 վանքին, գէթ այս տարի մեզ հաց ուտեցնեն:  
 Չէ՞ որ վանքն էլ մեզնով շէն պիտի լինի: Երբ մենք  
 աւեր լինինք, վանքը մեզանից շուտ աւեր կը լինի:

— Ուրեմն թող կարողներ տան. պատասխանեց  
 Հայր Սուրբը:

— Գանի՞ ասն կարողներ կան զիւղում. սկսեցին  
 հաշիւ անել, հազիւ թէ տասն եւ մէկ տանք հասաւ,  
 բայց եւ այնպէս նոքա եւս տարեկան հացը պատրաս-  
 տելու կարօտ աներ էին, բացի տանուտէր Մխօից:

Վերջապէս վարդապետը կարողացաւ մի բան շոր-  
 թել զիւղից, որի երկու մասն իրեն համար ոսկիներ  
 (1) պիտի շինուէին:

— Օհանը՝ իւր մտերիմների հետ դուրս ելաւ Ե-

(1) Երե երկու անապատների կղզու քարերը շր-  
 ջեղու եւ հողերը ֆանդեղու հնարաւորութիւնը լիներ,  
 ևնցս արակներից շատ ոսկիներ պիտի գտնուէին, այն-  
 քան որ հաւասել եւ ծածուկ քաղել եւ այն տեղերում՝  
 գանազան աշխարհներից հաւաստի ևնչիւրակ վարդա-  
 պետները: Աքրահաւ վարդապետը եւ Թօփուզեան ե-  
 պիսկոպոսը միայն չէին քաղեր, որոնցից գողանալով  
 ձգնաւոր միաբանութիւնը. երկուսն էլ խենթացու-  
 ցին, որոնք ամենին ասում էին. «սարան, սարան,  
 շա՛ս սարան»:

բեցփոխանենց անից. վարդապետի մօտ մնացածները  
 հազար ու մի բաժնատանփներ ու ամբաստանութիւն-  
 ներ տեղացին ետեւից: Ոմանք՝ անհաւատ, ոմանք՝ կը-  
 րօնքի եւ վանքերի թշնամի է, ոմանք՝ եկեղեցի մըտ-  
 նելն արգելելու է սրան՝ ասում էին, որպէսզի վար-  
 դապետին հաճոյանային, չը լինէր թէ վատ բերան  
 բանար ու տեղնուտեղը երկինքից կրակ թափել տար  
 վերաները, կամ թէ Երեցփոխանի ասածի նման նը-  
 բանց աղերը որդնոտէր:

Հալածանքը, վիշտը, արհամարհանքը եւ նեղու-  
 թիւնն այնքան ստրկացրել էր ժողովրդին, որ անաս-  
 նային մի վիճակի էր ենթարկել նրան: Մի միայն  
 Օհանն էր, որ գիտէր չափել ու կշռել այսպիսի հան-  
 դամանքները. դժբաղդարար նորա համախոհներն էլ  
 շատ քիչ էին թուով: Օհանը հակառակ չէր վանքերի  
 գոյութեան. նա գիտէր թէ վանքերը անցեալի մէջ  
 իսկոտ օգտակար ծառայութիւններ էին մատուցել աղ-  
 զին իրենց հմուտ եւ ողջմիտ վարդապետներով, իսկ  
 ներկայ դրութեամբ բոլորովին անպէտք հաստատու-  
 թիւններ դառնալով հանդերձ, մի կողմից էլ նոքա  
 էին եղել հարստահարուած ժողովրդին բն ու պա-  
 տիժը, որպիսի վայրերի գոյութիւնը ոչ թէ խափանել  
 էր Օհանի միտքը, այլ խոհեմութեամբ ժողովուրդին  
 պատրաստելով, նրանց դրութիւնը հետզհետէ բարե-  
 փոխել. այսպէս էլ յորդորում էր իւր կուսակիցնե-  
 րին: Նա գիտէր թէ ամեն մի գործի ձեռնարկութեան  
 սկզբներում մեծամեծ դժուարութեանց եւ արգելքների  
 պիտի հանդիպէր, որի համար իրեն տրուած անար-  
 դական սծականները սիրով լսում ու խելամուտ էր  
 լինում:



Գ.

Աշխան վերջին ամիսներն էր: Վան քաղաքի շըրջակայ հայ գիւղերից բարցել էին էշերի, եղների եւ սայլերի վերայ փթիրներ, տաւարների չորացած աղբեր եւ բերել էին ու խոնուել քաղաքի յայտնի հրապարակներում ծախելու: Գնողները ու ծախողները գոռում-գոչումը տարածվել էր պարսպապատ փոքրիկ քաղաքի վերայ: Էշերի զըռզըռոցները կարծես փողերի նման կանչում էին հասարակութեան իրենց վաճառքը գնելու. հրապարակները ոտք կոխելու չափ պարապ աեղ չէր մնում, մանաւանդ կիրակի եւ Ուրբաթ օրերը: Ծախուածներից գոյացած արգիւնքը տրվում էր կաղամբի, սոխ ու սխտորի եւ զանազան արմը-տիքների, որոնք միեւնոյն կերպով բառնալով կենդանիներին՝ գիւղերն էին վերադառնում: Հագուածեղէնների համար հազիւ թէ մի քանի կանգուն վանայ զործած հաստ կտաւեղէններից առնէին աւելցած զբամներով կամ պարտքով, որոնք վարկ ունէին ի հարկէ հայ խանութպանների մօտ:

Անձրեւային մի ուրբաթ օր էր. վանայ Այգեւտաններից եւ շըջակայ գիւղերից բազմաթիւ ուխտաւոր կանայք ոտարօրիկ դիմում էին Աւագ Սուրբ Նշանի առջեւ թափելու իրանց հողեկան վիշտերը: Խաների եւ թիւրք բռնապետների ծառաները սովորութիւն ունէին ամեն ուրբաթ օրերը արշալոյսի լուացումից վերջ ճանապարհների վերայ կենալ ու հայ կանանց ռաները գիտել... այնուամենայնիւ կա-

նանց ջերմեռանդութեան չափն ու սահման կարելի չէր դնել. նոքա մի մի հաւ կամ գառնուկ հեռներ առած Սուրբ Նշանին մատաղ էին տանում, հաւերի կատարներն ու գառների ականջները կտրելով արիւնից խաչածեւ քսում եկեղեցու դրան ճակատին ու յանձնում էին տէրտէրին, որոնց փոխարէն տէրտէրը տալիս էր հոգևոցն ու պահպանիչը:

Լ. գիւղացիքն էլ տարին մի քանի անգամ սովորութիւն ունէին Ս. Նշանը ուխտի գնալու: Այս անգամ տանուաէր Մխօյի ընտանիքն էլ փափաք ունեցաւ ընկերանալու ուխտաւորներին, հակառակ անձրեւային եղանակին ու Մխօյի արգելքներին: Մխօյի կինը՝ գիշեր մինչեւ լոյս չը քնացաւ, շարունակ տրտունջներ էր անում, իւր երկու տարեկնակ երախան Ս. Նշանը տանելու խտն էր արել, էրեկը թոյլ չէր տալիս նրան իւր հոգեկան պարտքերը կատարելուն: Հիւանդ աղի անունը՝ Նշան էր, նա էլ այս գիշեր հանգիստ քուն չէր կարող առնել, որովհետեւ իւր փափուկ մարմնի մէջ սուր ասեղներ էին խրվում, որից խեղճ երախան ճիչեր էր բարձրացնում: Տանուաէր Մխօյի կինը՝ Նուբարը՝ (այսպէս էր նորա անունը), դիտմամբ իւր աղին անհանգիստ էր անում, խորամանկութիւններ էր ի գործ դնում, որպէսզի կարենար համոզել էրկան: Տղի ճիչ արձակած ժամանակները տրտունջներն աւելի էր շատացնում նա:

— Տեսա՞ր, մարդ, երախաս էլի հիւանդացաւ, պատճառը դու ես՝ եթէ մի բան պատահեց. դու չես թողնում ու երեսխիս տանիմ Ս. Նշանի առջեւ գնեմ, ահա այսպէս պատժվում ենք, ասում էր Նուբարը:

Տանուաէր Մխօն կնոջ կատարած խորաման-

կութիւնից տեղեակ չէր. ճարահատուած՝ ամբողջ տնով Ս. Նշանը գնալու հրամանը տուաւ եւ ինքը միայն տան պահպանութեան համար գիւղը մնաց :

Գիւղացիները տանուէր Մխոյի կնոջը պատուելու համար « ըռէս կին Նուբար », ոմանք էլ՝ « տանտիկին » էին կանչում : « Մաթիւն », « հանում » ածականները տակաւին մուտ չէր գտել Վանայ հասարակական սովորութեամբ վարժուած հայ գիւղական շրջանում : Նոքա՝ աւագանում մկրտուած ժամանակինչ անուն որ տար քահանան, նոյն պարզ անունով կանչում էին միմիանց : Ինչպէս գիտենք, տանուէր կամ ըռէս Մխոյի տան անդամները միայն բացառութիւն էին կազմում ամբողջ հայ գիւղերում, որոնք քիչ ու շատ մաքուր հաղուսաներ էին հազնում, այն էլ հարսանիք կամ ուխտի գնացած ժամանակները : Ըռէս կին Նուբարը՝ իւր երկու մեծ տղաների հարսներին եւ իւր մեծ աղջկան՝ Վարդիկին ժամանակի ճաշակի համեմատութեամբ հազցրեց, մասնաւոր խնամքով զարգարելով սիրուն Վարդիկին, որին ամբողջ գիւղը սիրում էր, նորա պարզ, համեստ ու քաղցր բնաւորութեան պատճառով. նա երբէք չէր նամանում՝ թէ բնութեամբ եւ թէ տեսքով՝ իւր ամբարտաւան ու հպարտ մօրը : Գիւղի բոլոր երիտասարդները չանքեր էին գործ դնում ըռէս Մխոյին հաճելի դառնալու, որպէս զի գեղեցիկ Վարդիկի ձեռքը կարողանային խնդրել նրանից : Վարդիկը՝ հազիւ թէ տանն եւ վեց տարիքը լրացրել էր, բայց տեսնողը կը կարծէր թէ քսանն էլ է անցկացրել, նորա բարձր հասակը՝ իւր բոլոր անդամների հետ հաւասար չափս ունէր, բնութիւնը չէր ինչպէլ նորան ամեն գեղեցիկ

բարեմասնութիւնները : Մարմնի ձերմակութիւնը՝ ձիւնից փոխ էր առել, լայն ճակատի վերայ գրուել էին երկու սեւգրակ բնական խալերը, որոնք ինչպէս երկնակամարի վերայ փայլող աստղեր լինէին. սեւ ու փայլուն ծամերը՝ այնքան երկար ու առատ էին, որ նստած ժամանակը մի թղաչափ էլ տակն էր մնում : Բարակ ընքուերը երկու գեղեցիկ ծիածաններ էին կազմում խոշոր ու թուխ-թուխ աչքերի վերեւը. նուրբ քիթը՝ կլորակ թշերի մէջ տեղաւորուած՝ դիմազծի հաւասարութիւնն էր պահպանում կարմրիկ այտերի ուղղութեամբ. բարակ շրթունքը՝ կանոնաւոր բերնին աւելի գեղեցկութիւն էին ընծայում. ծիծաղելու ժամանակը միայն կարելի էր նշմարել ձերմակ, խիտ ու մաքուր ատամները, որոնք ամենայն կանոնաւորութեամբ ու նական մաքրութեամբ շարուած էին ամբարպէս գիւղ. կան պնդակալած օրիորդի լնդերի վերայ : Մէկ խօսքով, ամբողջ Վասպուրականում անուն ունէր Վարդիկը՝ գեղեցկութեան կողմից : Քաղաքի հպարտ երիտասարդներն անգամ, որոնք չէին գիշանում գիւղական աղջկան հետ ամուսնանալ, փափաքում էին Վարդիկի ձեռքը խնդրել, մանաւանդ՝ որ նորա հայրը Խան Արդալի սիրելին էր : Ըռէս կին Նուբարը՝ հազցուց Վարդիկին Վանայ հասարակ կուսուից պատրաստուած շապիկն ու կեռպոյ շրթից զգուսնը. ոտներին Վանայ կանացի կարմիր ջրզմէն. մի քանի փերթիկներ էլ երկարիկ ձափի կախելով, զարդարանքը լմնցուց, որ առանց նրանց էլ արդէն Վարդիկը հրեշտակային գեղեցկութիւնն ունէր :

Արշալոյսը բացուելուց առաջ՝ ուխտաւորները ճանապարհ ընկան, ամենքն էլ ոտքով. բացառութիւն

էր կազմում միայն ընդհանր Նուբարը, որ մի էջի վերայ էր նստել իւր բնական ամբարտաւանութեամբ: Վարդիկը իւր հասակակից ընկերուհիներէի հետ թըռչկոտում էր, որովհետեւ իւր կեանքում առաջին անգամն էր որ Ս. Նշանը ուխտի պիտի գնար ու քաղաքը տեսնէր: Նա միայն տեսել էր իրանց գիւղի շրջակայքը, ուրիշ գիւղերի ու քաղաքների վերայ երբէք գաղափար չունէր: Նա լսել էր միայն քաղաքի աների եւ սենեակիների գեղեցկութեան, ինչպէս նաեւ Ս. Նշան եկեղեցու գարդերի մասին: Ընկերուհիները՝ որ մի քանի անգամ տեսել էին, ճանապարհին պատմում էին նրան: Ի՞նչ էր պատճառը, որ Խան Արզալը ընէս Մխոյեց տանը հիւր եկած ժամանակները՝ Վարդիկին ուղարկում էին քեանց տունը, թոյլ չէին տալիս նրան որ գիւղը դուրս գար միւս աղջիկներէի նման: Վարդիկին էլ շատ տխրում էր, երբ լսում էր թէ՛ Արզալ Խանը գիւղն է գալու: Խան արդալն ինչո՞ւ այնքան սիրում էր ընէս Մխոյին. մի գաղտնիք էր այս գիւղացիների համար, միայն Խան Արզալը եւ ընէս Մխոն տեղեակ էին այս գաղտնիքին, որի հետ քիչ վերջ պիտի ծանօթանանք:

Ուխտաւորները հասան վան քաղաքի այն մուտքի մօտերը, որին տեղացիները «Թաւրէղի Դարգեան» էին կոչում. ուստի գնալու էին Ս. Նշան եկեղեցին: Ճանապարհի վերայ կեցող թուրքերը մատով ցոյց էին տալիս գեղեցիկ Վարդիկին. շատերն ուղում էին հէնց այն ժամանակ յափշտակել նրան ու տանել, բայց Խան Արզալի երկիւղից չէին համարձակում. որովհետեւ նոքա ամէնքն էլ ճանաչում էին ընէս Մխոյի տան անդամներին, նոցա հացալից սեղանի եւ հիւրա-

սէր ընաւորութեան պատճառով: Որովհետեւ ամբողջ Վասպուրականում ընէս Մխոյի տան սեղանն անուն ունէր, որն երբէք չէր վերցվում տախտից, եւ ի. գիւղ պատահողն անպատճառ նորան հիւր լինելու էր:

Նոյն օրը մինչեւ երեկոյեան հաղար անգամ ներս ու դուրս արաց ընէս Մխոն, մինչեւ ուխտաւորներն անխտանդ վերադարձան գիւղը:

Բաղիչեցի Մուրադը նոր էր հասել ի. Գիւղը, որ ամեն աշունքին գալիս էր Բաղէշից իւր ապառիկները հաւաքելու. գրեթէ տարուան երբորդ մասն ընէս Մխոյի տանն էր անցկացնում նա իւր օրերը, ուր հինգ տարիներէ ի վեր առեւտուրի համար հաստատուել էր: Մուրադը գեղեցկութեան ու քաջութեան կողմից պակաս չէր մնում շատ երթատարդներից, որը հազիւ թէ քսանեւհինգ տարեկան լինէր: Նա ի. գիւղն էր բերում Բաղէշից կարմիր կտաններ, յուլունքներ, հայելիներ, գերձաններ, ասեղներ, մատնոցներ ու զանազան թեթեւ վաճառքներ, որոնք փոխարինում էր ցորենի. նա այս բոլոր ապրանքներն ապառիկ ցրվում ու կալոցին հաւաքում էր: Արդէն ցորենների մեծ մասը հաւաքած ու հորած էր, այժմ վերադարձել էր մնացածները հաւաքելու, վան քաղաքը տանելու կամ նաուի Բաղէշ փոխադրելու, որովհետեւ ծախելու ժամանակները լաւ ծանօթ էին նրան, որի համար էլ գիւղացիները տմ ոչ չարչի Մուրադ էին անուանում: Ընէս Մխոն ամ պատմել էր նրան, որ նոյն օրը իւր ընտանիքն ուխտաւոր էր գնացել, տանը մնացել էր միայն պառա Մատի էր գնացել, տանը մնացել էր միայն պառա Մատի էր, որը Մխոյի երկրորդ մայրն էր: Մուրադի անհամբերութիւնն էլ պակաս չէր ընէս Մխոյից, որով-

հետև նրան սիրում էր ընդ Մխոյի վարդիկը: Մու-  
րազը Բաղէշում չի նուած զէնքեր էլ էր բերում եւ  
ծախում ջիւրդերին, այդ պատճառով էլ զէնքեր պա-  
կաս չէին նրանից: Նա ընդ Մխոյի վստահութիւնն  
ու սէրն այն աստիճան զբաւել էր, որ նորա տան մի  
անդամն էր համարվում: Նա Բաղէշ մեկնելու օրը  
վարդիկից մի յանձնարարութիւն էր ընդունել, որը  
ճոցում զբաժ՝ անհամբեր սպասում էր պատեհ առիթի:  
Երբ ընդ Մխոյի ընտանիքն ուխտադնացութիւնից  
վերադարձաւ եւ տեսաւ, որ Մուրազն եկել էր, ամեն-  
քը միասին նորա վերայ թափան, որը քէֆն էր հարց-  
նում, որն ասում էր. «ինչի՞ այսքան ուշացար». որն  
ուզում էր հասկնալ, թէ այս անգամ ինչ տեսակ բա-  
նէր էր բերել ծախելու: Վարդիկը միայն աչքերի մի-  
բաց ու խփումովը եւ աննշմարելի մի ժպտով բա-  
րեւեց նրան եւ անձայն անցաւ տան մի անկիւնում  
հագուստները փոխելու, որ շուտով գնար աղբիւրից  
ջուր բերել: Թըր միտում էր. գիւղական սովորու-  
թեան համաձայն պէտք էր որ աղջիկները բոլոր ջրի  
կփերը լեցնէին: Մուրազը լաւ գիտէր գիւղացիների  
այս սովորութիւնը. Նա վարդիկից առաջ տանից դուրս  
ելաւ եւ աղբիւր գնաց ձեռները լուալու: Վարդիկը  
ջրի կուժը ցած զբաւ աղբիւրից լեցնելու. Մուրազը  
մօտեցաւ նրան զուարթ գէմքով յանձնելու այն իրե-  
րը, որ խնդրել էր նրանից Բաղէշ գնալիս: Բարե-  
բաղդարար գիւղական աղջիկներից տակաւին ոչ ոք  
չէր եկել աղբիւրից ջուր տանելու:

— Ուզածներդ բերել եմ. վարդիկ, ասաց Մու-  
րազը, եւ ճոցից մի փոքրիկ տուփ հանելով յանձնեց  
նրան, որի մի երեսը հայելի էր, իսկ միջումը արծաթ-

եայ մի գեղեցիկ մատանի:

Վարդիկը իւր սիրուն պատկերը հայելու մէջ  
տեսնելուց վերջ բացեց տուփը, որի մէջ Մուրազը  
խնամքով ծրարել էր փայլունակ մի մատանի: Վար-  
դիկը միջի ծրարն էլ բացաւ. երբ փայլուն գոհարը  
տեսաւ. ուրախութեան մի ճիչ արձակեց եւ Մու-  
րազի ձեռքը խլելով համբուրեց:

— Եթէ մայրիկն ու հարսները տեսնեն՝ ի՞նչ կա-  
սես, հարցուց Մուրազը:

— Կ'ասեմ Մուրազն է բերել. ախրէքը քրոջ  
նուէր չի՞ տանում, պատասխանեց Վարդիկը:

Մուրազը յուսահատական մի հառաչ արձակեց,  
զլուխը կախ հեռացաւ աղբիւրից, երբ նկատեց թէ  
ջուր տանողները հեռզհեռ գալիս են:— Նա տակաւին  
ինձ ախրէր է ասում, ինչպէս երևում է, նրա մէջ  
սէրը չի զարթել, — մտածեց Մուրազը: Իսկապէս վար-  
դիկը շատ էր սիրում Մուրազին, բայց ոչ այն զգա-  
ցումով, ինչպէս սիրում էր նրան Մուրազը: Վար-  
դիկն այն աղջիկներից չէր, որ սիրոյ գերին դառնար,  
միայն թէ գիւղի բոլոր աղամարդկանց մէջ Մուրա-  
զին էր սիրում նա ակամայ, մանաւանդ՝ երբ նա զէն-  
քեր էր կրում: Երբեմն միամտարար հարցանում էր.

— Ա՛խ, Մուրա՛զ, ինչո՞ւ այնքան սիրունանում  
ես, երբ զէնքերդ կ'ապում ես:

Այս միամիտ հարցերից Մուրազն աւելի զրգը-  
վում էր. արդեօք օրիորդը նրան եղբայրական սիրո՞վ  
էր սիրում, թէ թաքուն մի նպատակ ունէր: Այս ի՞նչ  
խօսքեր էին. ինչո՞ւ ատանձին եղած ժամանակները  
միայն խօսում էր Մուրազի հետ, իսկ տանեցուց ներ-

կայութեան բոլորովին լուռ էր մնում. իսկի չէր հետադրգովում նրանով :

Հոէն Մխոյի մեծ հարսը, Յարոյի կին Սրբիկը, Մուրադի ու Վարդիկի վարձուներէնքները լրտեսում էր : Նա լաւ էր հասկացել թէ, այս երկու անմեղներէ սրտումը սէրը նոր էր բոյն դրել :

Մի օր Վարդիկն ու Սրբիկը միասին ձաւար էին խտակում. Սրբիկը լաւ միջոց գտաւ Վարդիկի գաղտնիքը գողանալու. սկսեց զանազան հարցուփոքձեր առնել նրանից, որին աչքի լոյսի չափ սիրում էր, որովհետեւ երբ նա նոր հարս էր եկել ըոէս Մխոյնց տանը, Վարդիկը մի տարեկան երախայ էր եղել եւ իւր թեւերի վերայ էր մեծացրել նրան : Սրբիկը նախ գիւղի հասակ առած աղջիկներէ վերայ խօսք բացեց, թէ ո՞ւմն են նշանել, ո՞ւմն են ուզում գեռ նոր նշանել՝ ու նորա չեն կամենում, որովհետեւ նրանք ուզում են իրանց սիրած երիտասարդներին գնալ : Սրբիկը վերջին խօսքերը մի որոշ շեշտերով արտասանեց. մանաւանդ Պօղոսի աղջիկը՝ Նազոյի պատմութիւնը, որ նոյն օրը հակառակ ծնողներէ կամքին, Յարոյէնց կակոսի հետը փախել էր :

— Ո՞ւր, ձայնեց Վարդիկը, նրա ծամերը կտրեմ, ամօթ չի՞, որ աղջիկն օտար աղի հետ փախչի եւ հօրն ու մօրը գլխինըրը տանառակ անի :

— Նրանք էլ չեն ուզում փախչել, բայց սէրն ուժով կը լինի, սէրը փախնել է տալիս, պատասխանեց Սրբիկը :

— Հողը դրանց գլխներին, սէրն ի՞նչ ասել է, որ աղջիկը նրան գերի լինի, ասաց Վարդիկը :

— Մի՞թէ դու սէր չունիս, որ այդպէս անմեղ

ես ցոյց տալիս քեզ. իսկի աղջիկ կը լինի՞, որ տասն եւ հինգ տարեկան լինի ու չը սիրէ մէկ լաւ տղամարդի, պատասխանեց Սրբիկը :

— Չէ՛, Աստուած էլ դիտէ, Սրբիկ, ես էտէնց բաներ չեմ խմանում. ես իսկի մարդու չեմ սիրել, ասաց Վարդիկը :

— Ուրեմն ինչի՞ Մուրադի հետ միշտ քչփչում էք, որ այդպէս բաներ չես խմանում. ինձ է՞լ ես խաբում Վարդիկ :

Վարդիկն այս վերջին խօսքերը լսելով՝ ամօթից շիկնեցաւ, նա կարծեց թէ աշխարհը փուլ է գալիս, գետինը պատասովում է ու նրան ներս է ասնում : Նրա ականջներն սկսեցին տժժալ, քիչ մնաց որ ուշաթափ լինէր : Սրբիկը նկատեց Վարդիկի դրութիւնը, ու ձեռքը դնելով նրա սիրուն գլխի վրայ, սկսեց շոյել նորա մետաքսանման մաղբրը, որ ժամանակ զգաց, թէ նորա գլուխը կրակի նման տաքացել ու գէմքից քրտինքներ էր թափում :

— Ես կատակ եմ անում, Վարդիկ, ինչի՛ այդպէս դու ճաթափուցիր, յարեց Սրբիկը :

Վարդիկը պատասխան չը տուեց : Արդէն Մուրադից ստացած նուէրն ապացոյց էր Սրբիկի յայտնած կարծիքին : Նա մտածում էր, թէ ինչպէս Սրբիկը, նոյնպէս եւ տան ամեն եղողներն այս կարծիքն ունէին իւր մասին : Այլեւս ի՞նչպէս պետք է խօսէր նա Մուրադի հետ : Ամբողջ օրը այս նիւթի վերայ էր խորհում : Երեկոյեան ոչինչ չը կարողացաւ ուտել Վարդիկը. նա մի թեթեւ հիւանդութիւն էր զգում :

Աչնան երեկոյները՝ ըոէս Մխոյնց տան բոլոր

անդամներն զբաղվում էին զանազան աշխատութիւններով : Կանայքը՝ մատակ դոմէշներն ու կովերն էին կթում. մարդիկը՝ ցորեն աղունում եւ ջաղացն էին փոխադրում. տանը մնացել էր միայն Վարդիկը իւր հիւանդութեան պատճառով : Նորա մայրն այս երեկոյեան թոյլ չը տուեց նորան մինչեւ անգամ ջուր բերելու : Մութադը իւր նոր բերած մանր մուկը իրերի ծրարն էր սարքում. Վարդիկը՝ թոնրան մօտ նստած՝ նրա շարժումներն էր դիտում, որն ակամայեց մի խոր հառաջ արձակեց : Մութադը դարձաւ ու նրա գունատ կերպարանքը տեսաւ, որովհետեւ Վարդիկի հոգոցի հառաջը մինչեւ նրա հոգու խորերն աղղկեց :

— Ինչի՞ աղպէս դունաթափուել ու տխրել ես, Վարդի՛կ. չը լինի՞ հիւանդ ես, հարցուց Մութադը :

— Մի քիչ հիւանդ եմ, պատասխանեց Վարդիկը, եւ սկսեց Մութադի նուիրած մատանիի հետը խաղալ, որ մատն էր անցկացրել : Ի՛նչ լուրուց յետոյ՝ ասաց. « Եթէ մի բան խնդրեմ՝ քեզանից՝ չե՞ս ցաւի, Մութադ :

— Ե՞ս ցաւիմ, պատասխանեց Մութադը, այն էլ Վարդիկի՞ց :

— Ես խնդրում եմ, որ այս մատանին եւ տուփն ուրիշի տաս, Մութադ. մեր տանեցիք վատ կասկածներ ունին երկուսիս վերայ :

— Ի՞նչ կասկածներ պէտք է ունենան. ես ամենին էլ նուէրներ եմ տուել :

— Բայց սրանք ես ուզեցի քեզանից, որ դու էլ բերիր :

— Աւելի լաւ, որ դու ուզեցիր. էլ ետ տալը ի՞նչպէս կարելի է. աւելի լաւ է, որ ինձ սպանես,

քան թէ այդ առաջարկն անես. այդ այն ասել է թէ, մեր տանից էլ գնա :

— Ո՛չ, դու կա՛ց մեր տանը. բայց սրանք ա՛ն. ես էլ զարդարուել չեմ ուզում : Չեմ ուզում որ մեզ վերայ էլ վատ խօսքեր խօսին :

— Ես չեմ հասկանում, Վարդի՛կ, թէ ի՛նչ ես ուզում ինձ ասել :

— Սրբիկն ինչ որ բաներ է խօսում մեր մասին . . . : Այսքան պատասխանելուց վերջ, Վարդիկն սկսեց հեկեկալով ասել. « Ա՛խ Մութադ, ես ամաչում եմ քեզ ասելու Սրբիկի ասածները » :

Մութադը թէեւ լաւ էր հասկանում, որ ինչ էր ուզում ասել Վարդիկը, բայց չը հասկանալ էր ձեւացնում, որպէսզի կարենար Վարդիկի բերնից լսել այն խօսքը, որից միայն կախուել էր իւր կեանքի երջանկութիւնը : Յարմ ազոյն ժամանակը հասել էր զաղանիքը պարզուելուն :

— Վարդի՛կ, իմ հոգու հատոր, լուութիւնն ընդմիջեց Մութադը. ես իմանում եմ, թէ Սրբիկն ի՛նչ է կասկածում մեզ վերայ. միթէ՞ դու չե՞ս զգում, որ ես սիրում եմ քեզ. առանց քեզ՝ այս աշխարհն ինձ համար խաւար է. արեզակն էլ իւր ամբողջ լուսով չի կարող լուսաւորել ինձ : Այս երկու տարի կը լինի, որ Սրբիկի ասածները ես էի ուզում յայտնել քեզ, բայց չէի կարող :

Վարդիկը լուռ էր. պատասխան էր փնտռում, որով իւր զգացածը յայտնէր Մութադին. ապա յարեց.

— Մութադ, ես քեզ յարզում ու սիրում եմ, որպէս մեր տան հիւրին ու մեր տան մի անդամի հաւատար էլ ճանաչում եմ քեզ :

— Այդպէս է ի հարկէ, փեսէն աներոջ տան նախ հիւր կը լինի, յետոյ նրա տան անդամներէց մինը շատ ճիշտն ես ասում, Վարդիկ :

Վարդիկն այս պատասխանը լսելով Մուրադից, իւր գեղեցիկ դէմքը ծածկեց ձեռքերով, իսկ Մուրադը հեազհետէ առաջանալով՝ իւր շրթունքները մօտեցրեց նորա ձեռներին ու հեռացաւ:

Այս գիշեր Վարդիկը չը կարողացաւ քուն լինել: Նորա մէջ նոր սկսեց վառուել Մուրադի սիրոյ կայծը. նա մտածում էր.— ի հարկէ ծնողքս ինձ մի մարդի պիտի տային, միթէ՞ այդ մարդը Մուրադից լաւը պիտի լինէր. եւ ինչո՞ւ չը սիրէր այս կտրիճ, խելացի, սիրուն եւ աշխատասէր երթոտասարդին, որ երկար ժամանակ իրենց տանը լինելով բոլորովին փորձուած մի անձնաւորութիւն էր դառել: Վարդիկը թէեւ այնքան տարիք չունէր, բայց այս տեսակ մտածելու կարողութիւնէր էլ զուրկ չէր:

Ինչպէս տեսնուք, Սրբիկը սոցա բոլոր շարժումները լրտեսում էր. նա այս երեկոյեան էլ Մուրադի եւ Վարդիկի տեսութիւններէց մի բառ անգամ չը փախցրեց իւր սուր ականջներէց. այնուամենայնիւ Վարդիկի մէջ դարձեալ անմեղութիւն էր նկատում. իսկ Մուրադն արդէն իւր խօսքերով ամեն բանը յայտնել էր: Այն օրէց՝ քանի գնում էր Վարդիկը նիհարանում էր, նորամայր Նուբարը՝ էլ սուրբ չը մնաց, որոնց խունկ մոմ չը խոտացաւ, որպէս զի իւր սիրուն աղջիկը բարակացաւից ազատուէր: Մուրադի սէրը քանի գնար խոր արմատ էր գցում նորա սրտումը: — Այս վիշտը Սրբիկը միայն կարող է փարատել, — նկատեց Մուրադը, ուրեմն Սրբիկին պէտք էր ձեռք

առնել գործը յաջողացնելու համար, բայց նրան ինչպէ՞ս յայտնէր: Նա էլ սկսեց հետզհետէ ուժից պակասել, մինչև մի օր ծանրապէս հիւանդացաւ: Մուրադի այս հիւանդութիւնը մեծ վնաս պատճառեց ընդ Մխոյեանց տանեցուց, որոնք զիւղական ամեն տեսակ խնամքներ գործ դրին նորա վերայ: Սրբիկը խօսիկի չէր հեռանում կշտից. Վարդիկի ցաւերը կրկնապատկում էին Մուրադի հիւանդութեան պատճառով. բայց ամօթից չէր կարողանում մօտը գնալ:

— Ի՞նչ տեղդ է ցաւում, Մուրադ, ցաւերդ ասում, հարցուց Սրբիկը Մուրադից, երբ մի անգամ նկատեց որ Մուրադը լաց էր լինում:

— Ձեռ իմանում, պատասխանեց Մուրադը. ուժերս միշտ պակասում են:

— Վարդիկն էլ այդպէս է ասում. երկուսիդ հիւանդութիւնն էլ միեւնոյնն է. Աստուած մեծ է, չուտով կ'առողջանաք: Բայց խոտովանանք լինի Մուրադ, քանի որ հիւանդացել ես՝ Վարդիկը մօտդ չի գալիս. էլ զուք առաջուայ նման չէք տեսնուում, չը լինի՞ կոռուել էք: Եթէ մի այդպիսի բան ունիք, ես կը հաշտեցնեմ ձեզ հենց այս րոպէին:

— Վարդիկից հարցուր, պատասխանեց Մուրադը:

— Ես նրան շատ հարցուփորձ եմ արել. բայց նա ուղիղը չի խոստովանում. ա՛խ, շատ ծածկամիտ աղջիկ է նա:

Մուրադի աչքերում դարձեալ արտասուքի հեղքեր երևացին. հաղիւ կարաց զսպել իրան:

— Մուրա՛դ, դո՛ւ լինչի՞ ես ծածկում ինձանից քո դարդը, մի բան ունիս ուղիղն ասա: Ես ամեն բան հասկանում եմ, ասաց Սրբիկը:

— Գիտե՛մ որ հասկանում ես, Սրբիկ, բայց ձեռքու՛մը մի ճար ունի՞ս. աղատիր մեզ, քու որդիների սիրոյ համար լինի, հեկեկալով ասաց Մուրադը :

— Ես նրան (\*) կը յայտնեմ, նա թող յաջողացնի: Երբ Մուրադն այս պատասխանը լսեց, խլեց Սրբիկի ձեռքը եւ ամբողջս իւր շրթունքները վերայ սեղմեց :

Սրբիկը դուրս ելաւ Մուրադի խրճիթից, որ ընդ Մխոյենց տան սրանումն էր շինել ինքը Մուրադը, իւր մանր մունրերը ծախելու եւ գիշերելու համար: Ես գնաց կանչեց Վարդիկին, այսպէս ասելով.

— Վարդի՛կ, վեր կաց գնանք Մուրադի մօտ. խեղճը հիւանդ է, ուզում է քեզ հետ խօսիլ:

— Ես ամառում եմ, Սրբիկ, նրա մօտը գնալու. դու մեր մասին վատ կասկածներ ես անում, անուշիկ ձայնով պատասխանեց Վարդիկը:

Սրբիկը նրա գլուխն ամբողջս սեղմեց իւր կրծքի վրայ, յետոյ ձեռքից բռնեց, քաշելով տարաւ Մուրադի մօտ եւ ասաց .

— Ա՛խ, սիրոյ գերիներն, եթէ դուք մի քանի օր միմիանց մօտ մնաք, կառողջանաք, խօսի՛ր, Մուրադ. Վարդիկը կարծում է թէ՛ ես չը լսեցի ձեր անցեալ օրուայ խօսակցութիւնները, դուք երկուսդ էլ իմ դաւաճներն էք. ես ուրախ եմ, որ դուք միմիանց սիրում էք, արդէն վաղուց նկատում էի ես ձեր

(\*) Գիւղացի կանայք իրանց երիկների սնունդ չեն տալիս ուրիշների հետ խօսած ժամանակ. էն են ստու՛ւմ. իսկ հետեւեք խօսած ժամանակ, ծօ են կակնում:


վարմունքը. մէր տանը, բացի ինձանից, ոչ ոք չի մանում ձեր հիւանդութեան պատճառը:

Վարդիկը, որ այս խօսքերը լսում էր, ա՛մօթից շիկնած՝ Սրբիկի ետեւը կծկուել էր. ոչ էն էր դուրս փախչէր, ոչ էլ էն էր տեղը մնար: Սրբիկը նորից բռնեց Վարդիկի ձեռքը ու նստեցրեց Մուրադի կշտին:

— Ո՛հ, որքա՛ն բարի կին ես դու, Սրբիկ, ասաց Մուրադը:

— Դէ՛հ, դուք աղատ եւ աներկիւղ խօսեցէք իբար հետ. ես դուք կը պահեմ. ես էլ ձեր տարիքում ուզում էի միշտ նրա մօտից չը հեռանալ, բայց էն ժամանակ մի Սրբիկ չը կար, որ մեզ վերայ պահապան լինէր: Այսուհետեւ Սրբիկը ձեր պահապանը պիտի լինի միշտէլ այն օրը, որ Սատու հրամանով պատկուէք դուք: Ամեն բան արածում եմ ձեզ, բացի միտից . . . : Մուրադ, դու չար ես, իսկ Վարդիկը գետ շատ միամիտ է, ասաց Սրբիկ եւ խրճիթից դուրս ելաւ: Ետքա հաւատարմութեամբ պահում էին Սրբիկի պատուէրը, որը միայն արգելել էր նրանց, ինչպէս արգելեալ ծառի պտուղը . . . :

Վարդիկը եւ Մուրադը կատարելապէս ատողջացել էին: Ընդս կին Նուրարը եւ նորա բոլոր ընտանիքն ուրախ էին. միշտ փառք էին տալիս Սատու՛ւն, որ պանդուխտ Մուրադն ատողջացաւ: Վարդիկն իրենց տան զաւակն էր, ասում էին նրանք, բայց Մուրադի հէրն ու մէրը, ազգականներն ու բարեկամները հետու էին. նոցա համար մեծ դժբաղդութիւն պիտի համարուէր, եթէ նրա հիւանդութեւնը ծանրանար:





Երկերը մի թեթեւ ձիւնով ծածկուել սկսեց. Մոզոն այս միջոցներում աւելի յանդուզն գողութիւններ էր անում: Այս պատճառով էլ ըռէս Միսոյենք գիշերները կարգով պահպանութիւն էին անում իրանց տան. մանաւանդ Մուրադը՝ իւր հրացանն, արծանակներն ու սուրը միշտ գլխի վերեւը կախած՝ պատրաստ էր պահում վտանգի առջեւն առնելու համար: Մի գիշեր գող Մոզոն քսան հոգով պաշարեց ըռէս Միսոյենց տունը, աւելի Մուրադին վշտակու համար, որովհետեւ նա չէր կարող տանել, որ մի հայ թիւրքերի եւ քիւրդերի նման ազատ զէնք գործածէր: Ըռէսենց տան դռները բաւական ամուր շինուել էին. բայց երբ գող Մոզոն իւր հուժկու եւ ջոկուած ընկերների հետ հինգ-հինգ հոգով հեռանում, թափով գալիս աքացի էին տալիս դռներին, դռները ծխնիններէց դուրս ելնելով գետին էին տապալվում: Մուրադը վեր թռաւ խոր քնից, երբ առաջին անգամ սրահի դուռը խորտակուելով՝ ահագին աղմուկ հանեց: Նա հրացան ըռնած սպասում էր իւր խանութի դռնից քիչ հեռու՝ մի անկիւնում, որ դուռը չը խորտակէին իւր վրայ: Հինգ աջ ոտներին ուժգին հարուածը խորտակեց եւ Մուրադի խրճիթի դուռը, որը թռնելով մինչեւ իւր գլխացի պատը զարնուեց ու գետինն ընկաւ: Թախի, դուռը գնաց. դանդ, հրացանը պայթեցաւ. թախ-թախ, իրար ետեւից արծանակներն արծակուեցան. թէեւ երեք դիակ գետին փռուեցաւ, բայց

յանդուզն գողերը դարձեալ ներս խուժեցին: Առիւծ Մուրադը՝ սուրը ձեռքին՝ մի քանի հարուածներ էլ տալուց վերջ, յաջողեցաւ դռնից դուրս թռչելու միջոցը գտնել եւ երկու դռների վրայ կանգնած զոյգ-զոյգ պահապաններին եւս մի-մի վերք տալով փախչել:

Ըռէս Միսոյենք՝ հրացանների եւ դռների խորտակուելու ձայները լսելով, ներսի դուռն ամբացնել էին աշխատում, քարով, փայտով ու ցորենների լեցուն ջուալներով: Ըռէս կին Նուբարն եւ Սրբիկը՝ Վարդիկին ալիւրի փեթակում պահեցին, որոնց երկիւղն արդէն նորա մասին էր, հոգ չէր՝ թէ նոյն իսկ տան իրերը կողոպտուէին:

Մուրադը՝ գլուղի վերեւը գտնուած դարի գլուխն էր հասել, առանց գգալու՝ թէ թեւից մի թեթեւ վերք է ընդունել եւ արիւնը հոսում էր. աշնան սառ քամին շուտով ազդեց նրան, երբ աշխատում էր վերստին լեցնել հրացանն եւ արծանակները: Նա կարծում էր թէ թշնամիների արիւնով շողախուել էր ձեռներն ու ոտները: Բայց ահա աղբիւրի նման հոսում էր արիւնը եւ ցաւը սատոկանում էր, բարեբաղդաբար սուրի հարուածը մի անվտան տեղից էր ընդունել. թաշկիւնակը հանեց եւ ձախ ձեռքով պինդ կապեց վերքը, արիւնը դադարեցնելու համար:

Գողերը խորդեցին Մուրադի խրճիթը, կարգն եկաւ ըռէս Միսոյի տան. նախ ախոռատան դուռը բացին, ուր երկու մշակները երկիւղից կծկուել էին գոմէշների մտուրներում. նոցա ձեռքերն ու ոտները կպեցին ու բոլոր տաւարները դուրս հանին: Այս գործողութիւնը լրանալուց վերջ՝ թօնրատան գրան կողմը

դարձան, ուր երեք ընկերները, արիւն շաղախ պատկել էին: Մժգօն արդիւնց ըռէսէնց թօնրատան գուռը խորտակելը:

— Այն տեղը՝ բացի երկու թաղիքներից եւ ուտեսաներից՝ ոչինչ չը պիտի կարողանանք գտնել, աւաց Մժգօն:

— Ապա գեղեցիկ վարդիկը, վրայ հասուց թամօն, որին շատոնց մաաղբել էր փախուցել:

— Վարդիկը խօ՛ տաւար չի, որ տանենք ծախենք, ծիծաղելով պատասխանեց Մժգօն: Այդ միտքը լաւ միտք չէ՝ թամօ: Վարդիկը լեզու ունի, որտեղն էլ որ տանելու լինինք կը յայտնուի ու գործերս անյաջող կը դառնայ այնուհետեւ:

Մո՛ւթ, խիտ մութ գիշեր էր. Մուրազը վարդիկին միտքը բերելով՝ յանձն էր առել վերադառնալ ու մինչեւ վերջին շունջը կուռիւ. մեռնիլ կամ չը թողնել որ վարդիկը տանին քրդերը: Այս պահուն զբան քովը կեցած՝ մտիկ էր անում. մի քանի քայլ հեռացաւ անից ու ձայն տուաւ:

— Մժգօ, ընկերներդ առ ու հեռացիք այդ տնից, քանի որ ձեռներս շարժվում են, դուք չէք կարողանայ վարդիկին տանել: Չեղ միջոց եմ տալիս, հեռացէ՛ք. ապա թէ ոչ, հրացանս ու ատրճանակներս պատրաստ են: Չէ՞ք ամաչում, ըռէս Մխօյե հացը թող բռնէ ձեր աչքերը, կը հեռանա՞ք թէ չէ, գոռաց Մուրազը:

Մուրազի զօրեղ ձայնը սոսկացրեց գողերին, որոնք անմիջապէս թողին ըռէս Մխօյեից տունն ու փախան իրենց ունեցած աւարներով. գիւղից քիչ հեռանալուց յետոյ՝ ձայն տուաւ գող Մժգօն. — Մուրա՛գ, Մուրա՛գ, օ՛ Մուրազ. Մժգօն քաջերին սիրում

է, դու քաջութիւնդ ցոյց տուիր ողջ հայերի մէջ, վերցո՛ւր մեր ընկերներին, որոնց զնդակներովդ ու թրիդ հարուածով սպանեցիր, այդ քու իրաւունքն էր. կամ թէ թոյլ տուր մեզ, որ գանք մեր ընկերներին տանենք:

— Եթէ տարածներդ ետ բերէք, ապա թէ ոչ, մէկիդ ողջ չեմ թողներ, եթէ գիւղը մտնելու փորձս անէք, ասաց Մուրազը:

Այս աղմուկներից արդէն ամբողջ գիւղը դուրս էր թափուել: Ըռէս Մխօյենք մինչեւ այն ժամանակ կարծում էին թէ Մուրազն սպանուել կամ վերաւոր ընկել էր, որովհետեւ դուռն այնպէս էին փակել, որ այլեւս ձայն չէր հասներ մինչեւ ներսը: Մի քանի կանայք ըռէս Մխօյեից երդիքը բարձրանալով բաց արին եւ եղելութիւնը պատմեցին: Մուրազը կրկին ձայնեց, երբ հեռուից նկատեց նրանց ըռէսնեց երդիքը բարձրանալը:

— Ասացէ՛ք ըռէս Մխօյեից, որ դուրս ելնեն, ինչի՞ այդպէս լեղապատառ ներս են փակուել:

Կանայքը լուր տուին: Ըռէս Մխօյենք դուրս թափուեցան տանից. երբ սրահումն ընկած երեք սպանուած քրդերին տեսան, սոսկացին: Մժգօն աւարը եւ դարձրեց. Մուրազը միայն երեք ձիււորները թոյլ տուեց, որոնք գիւղը մտնելով իրանց ընկերներին առին ու փախան: Ամբողջ գիւղացիք Մուրազի գործած քաջութեան վերայ հիացած, գովասանքներ էին աւնում: — Ապրի՛ կտրիճը, մարդն էլ էսէնց կը լինի, ասում էր Օհանը:

— Տօ՛, ձէնդ կտրի՛ր, ի՞նչ ես ասում. ընդմիջեց երեցփոխանը. հայն էլ մարդ սպանի: Սրան գող Մժգօ

կ'ասեն, մի քանի օրից վերջը մեր գիւղը քարուքանդ կ'անի:

— Արդալ խանը զեռ չի մեռեր, որ այդ բանը թոյլ տայ նրան: Մուրադի ներկայութիւնն էլ հերիք է այս գիւղում. Մոլոն այլեւս չի համարձակուի ոտքը կոխել այս գիւղում. նա իմանում է միայն հաւի սիրտ ունեցող հայերի վերայ յարձակուել, իսկ ո՛ր տեղ, ո՛ր գիւղ որ Մուրադները պատահի, կը փախչի, ինչպէ՞ս այս գիւղեր փախաւ, պատասխանեց Օհանը:

Գիւղացիք այլեւս չը քնեցին այդ գիւղերը, իւրաքանչիւր ոք մի-մի գաղափար էր յայտնում եղած պատահարի մասին: Մուրադը ներս մտաւ այն ժամանակ, երբ վարդիկը դուրս ելաւ փեթակից ալրաթաթախ: Ընէս Միսոն եւ նուրբարը երանց զաւակներով ու հարաներով թափուել էին Մուրադի շուրջը՝ գրկում ու համբուրում էին իրենց ազատարար հրեշտակին:

Արդէն գիւղի ճրագները վառուել էին: Սրբիկը նկատեց, որ Մուրադի վերայ արեան հետքեր էին երևուում, շուտով շուր բերաւ ու սրբեց:

— Դու աւելի լաւ կ'անես, Սրբիկ, որ մի քիչ խանձ չինես ու ձէթի մէջ թաթախելով՝ վէրքիս վերայ կապես, ասաց Մուրադը՝ ու թեւը կապած թաշկինակն արձակեց:

— Վո՛ւյ, սե՛ւը կապեմ, գոչեց Սրբիկը, դու վէրք էլ ես ընդունել:

— Ոչինչ, ոչինչ, ծիծաղելով պատասխանեց Մուրադը. նա շուտով կ'առողջանայ. մի օր չի քաշեր, ես շատ այդպիսի լուի կծուներ ընդունել եմ:

Վարդիկը երբ լսեց, թէ Մուրադը վերաւորուել է, էլ չը կարաց անտարբեր մնալ, վազեց դէպի իւր

սրտով սիրածը, որն այս ժամուն աւելի գեղեցկացել էր նրա աչքին, յետոյ դէպի ձէթի կուժը վազեց, որ խանձը շուտով պատրաստուէր, որովհետեւ Սրբիկը խանձը պատրաստելու մէջն էր, խլեց Սրբիկի ձեռքից խանձն ու ձէթի մէջ թաթախելով՝ կապեց Մուրադի վէրքը:

— Դու իմ թեւը կապելուց առաջ, վրայիդ ալիւրները մաքրիր, վարդիկ, անուշիկ ձայնով ու ծիծաղկոտ դէմքով խօսեց Մուրադը:

Վարդիկը ժպտեց եւ շեշտակի նորա աչքերի մէջ նայեց, գործողութիւնը կատարելուց վերջը՝ հեռացաւ: Իսկ Սրբիկը եւ իւր էրիկ Յարօն մի անկիւնում առանձնացած փսփոտւմ էին մի ինչ որ նիւթի մասին:

— Մօ՛, գիտե՞ս, նրանք սիրում են իրար, ասաց Սրբիկը:

— Ովքե՞ր, հարցուց Յարօն:

— Վարդիկն եւ Մուրադը, էլ ովքե՞ր պիտի լինին:

— Լաւ իմանո՞ւմ ես, հարցուց Յարօն:

— Ես բոլորը կը պատմեմ քեզ, բայց դու ուղո՞ւմ ես, որ նոքա սիրեն իրար:

— Միթէ Մուրադից լաւ փեսայ կարող ենք ճարել, ասաց Յարօն. նա մեր տանը փորձուած մի տղամարդ է. նա Սողոմոն իմաստունի խելքն ունի. միայն թէ այստեղ մնալու խօսքը տայ. չեմ կարծում թէ հայրս ու մայրս կամք տան, որ Մուրադը վարդիկին Բաղէշ տանի:

— Մուրադի խօսքն ինձ մօտ է, պատասխանեց Սրբիկը, նա եթէ մի օր վարդիկին չը տեսնի՝ կը դժուի:

Սրբիկը լաւ ժամանակ գտաւ յայտնելու իւր էրկան Մուրադի եւ Վարդիկի սիրոյ մասին: Այլ եւս գաղտնիքը պարզուեցաւ, Յարօն յայտնեց եղելութիւնը իւր ծնողներին, որոնք թէեւ ուրախութեամբ հաճութիւն տուին, բայց ընէս Միսօն մի խոր հնաւայ եւ «ախ» քաշեց: Այդ ժամանակ այն դաղըալի եւ խորհրդաւոր մէջ պատկերացաւ այն դաղըալի եւ խորհրդաւոր գաղտնիքը, որ մի օր անպատճառ պիտի պայթէր. որ պիտի գաղտնիքից ինքը միայն տեղեակ էր, գիշեր ցորեկ այս ստակալի մտքով տառապում էր նա, առանց կարենալու մէկին յայտնելու:

**Ե.**

Արդալ խանը՝ լսեց ընէս Միսօյնց տան հետ պատահածը, եւ իւր բազմաթիւ ձիաւոր հետեւորդներով Լ. գիւղը գնալու պարտաւորութիւնն զգաց: Նախապէս երկու շաթիբների միջոցաւ լուր տալուց վերջ, հեծաւ իւր արարական նժոյզը, որ ինչպէս ասում էին վասպուրականցիք, «ամպերի հետն էր խաղում»: Զիաւորների փառաւոր շքով Արդալ խանը ընէս Միսօյնց տան հիւրանոցն իջաւ դէպքի երկրօջող օրը: Վարդիկը կրկին քեռանց տուն ուղարկուեցաւ:

Ընէս Միսօն՝ ամեն պատրաստութիւններ տեսել էր իւր պատուաւոր հիւրին ընդունելու եւ երբ խանը ձիուց ցած էր իջնում. նա ասպանդակը բռնեց: (Նա

արդէն գիւղից դուրս էր դնացել իւր երկու տղաների եւ Մուրադի հետ գիմաւորելու խանին):

Արդալ խանը հարցուց ընէս Միսօյից, նախ՝ պատահած գողութեան եւ ապա ամբողջ տանեցուց որպիսութեան մասին: Ընէս Միսօն ամեն հարցումներին կզլում էր մինչեւ գետին ու իր աջ ձեռքը համբուրում գլխին էր դնում եւ քրդական լեզուով պատմում էր: Մուրադը, որ իւր երկու որդիներին հետ միասին ձեռքերը սրտին դրած հիւրանոցի մուտքի մօտ կանգնած էր, ցոյց տուաւ ընէս Միսօն, որ իւր տան ազատիչն էր եղել:

— Հայերի մէջ էսէնց քօչախութիւն, բացաւ կանչեց իմանը, երբ իմացաւ թէ Մուրադը հայ էր. որովհետեւ Մուրադը թէ անունով եւ թէ հագուստով չէր զանազանում թիւրքերից: Նա Բաղէշ քաղաքի սնանկացած Նղնղենց ազնուական զերդաստանի զաւակն էր, որ մեծ սովից վերջ մանրումունը ծախելով մինջեւ Վանայ Լ. գիւղն էր հասել:

— Ափսո՛ս, որ ֆլայ է (հայերին ֆլաներ են ասում քրդերը) եղել, եթէ նա կորմանջ (քրդերը իրանց «կորմանջ» են անուանում) լինէր, ինձ փեսայ պիտի շինէի, ասաց խանը:

Քիչ մնաց, որ Յարօն պատասխանէր թէ՛ — մեր փեսան լինելով ի հարկէ Զերը պիտի համարուի. բայց օրէնքը չէր ներում այն ժամանակ, որ հօր ներկայութեան մի մեծի պատասխանէր փոքրը, բացաւ ութիւն էր համատում, երբ իմանը նոցանից կարճ մի հարց անէր. որոնք «այո» կամ «ոչ» ասել միայն համարձակութիւնն ունէին:

Իմանը չէր մոռանում հետը տանելու իւր բեռն ու

բարխանէն, ուր որ էլ գնալու լինէր. Պարսկաստանից բերած նուրբ ու գեղեցիկ խալիները, մինտէրը, դէօշակը եւ այն ամեն պիտոյքները՝ ինչ որ իւր արքայակայել պատիւը պահանջում էր, անբաժան էին նրանից: Արդալ կանը նստել էր ըսես Մխոյնաց հիւրանոցում հինգ ներքնակների վերայ եւ եսամի փայտից պատրաստուած երկու մեղրաչափ երկարութիւն ունեցող չիբուխը ձեռքում ծխում եւ զանազան հարցեր էր անում ու երբեմն խոր լուծիւն պահելով՝ երկար խորհում էր, աջ բութով շփում էր բերնին դրած չիբուխի սաթը, որը մի մեծ հաւկիթի ձեւն ունէր: Կէս ժամաչափ լուռ մնալուց վերջը, հրամայեց՝ որ ներս եղողները բոլորն էլ դուրս ելնեն, իսկ ըսէս Մխոյին իւր մօտը պահեց:

— Այն օրից, երբ տեսայ ես Վարդիկը, երկու տարի կը լինի, այժմ տասնեւեօթը տարին լրացուցած կը լինի նա, ես ուզում եմ նրան տեսնել այսօր, Մխօ՛, ասաց խանը:

Այս խօսքերը Մխոյի սիրտը ծակելու չափ ազդեցութիւն ունեցան թէեւ, բայց ի՞նչ ճար ունէր ձեռքում. դեռ երկու օր առաջ մի փորձանքից ազատեցաւ, այսօր աւելի սոսկալին է սպանում: Խանն էր պահանջում, այսօր պէտք է որ տեսնէր Վարդիկին, ամբողջ երկու տարի զը լինէր, որ Վարդիկը չէր երևում նրան առաջուան նման: Ընէս Մխօն խորհեցաւ մի փախուստի ճանապարհ եւս գտնել այս անգամ, բայց ի՞նչպէս կարողանար համոզել նրան: Մի միտք միայն ծագեցաւ իւր մէջ:

— Խան, ոտներիդ հող ու մոխիր Վարդիկը, էս երկու օր է, հիւանդ պառկել է քեռու տան, իսկի չի

կարող ոտքի վերայ կենալ. խնդրում եմ, այս անգամն էլ ներքի ինձ, տեսնենք թէ Աստուած ի՞նչ կը կամենայ:

— Ես վախենում եմ, որ էն անիծած գող Մփղօն մի օր յափշտակի նրան, ու ի՞մ ձեռքից դուրս գայ աննման Վարդիկս, որին՝ ես խոստացել եմ քեզ իմ կանանց թագուհին անել:

— Գող Մփղօն՝ այլեւս ձեր երկիւղից չի կարող այս գիւղում ոտք կոխել, խան. նա չիմացաւ թէ քաջութիւն կատարողը Մուրադն էր, նա կարծում է թէ ձեր քաջ շաթիրներն էին. ապա թէ ոչ՝ նա մի հօյից կը փախչէ՞ր:

Խանը մի քիչ լուելուց յետոյ՝ յարեց, — «բայց ես ուզում եմ անպատճառ տեսնել նորան հէնց այսօր, այլեւս չեմ կարող համբերել, դու լուր տուր այն տան, որտեղ որ ասում ես նա հիւանդ պառկել է. ես կը գնամ այնտեղ կը տեսնեմ նրան:

Ընէս Մխօն գետնախառն քանակի արաց, որը նշան էր հնազանդութեան, եւ գունաթափուած խանի մօտից դուրս ելաւ: Նա իւր որդի Յարօյին յայտնեց խանի ցանկութիւնը եւ պատուիրեց, որ գնա քեռանց տունը եւ Վարդիկին մի փալասի կտորի տակ ծածկէ, եւ ձեւացնէ նրան որպէս ամենածանր հիւանդի:

Առաջին անգամն էր որ Յարօն լսեց իւր հօրից այս մահացուցիչ լուրը. Պարտաւորուած՝ հօր հրամանը կատարեց: Վարդիկ երբ լսեց այս մահացու գոյժը, երկիւղից գոյն ու կերպը բոլորովին փոխեց, որովհետեւ երկու տարի առաջ՝ երբ տակաւին իւր խելքը բանի չէր հասնում, խանը մի անպատկառ փորձ էր ուղեցել

կատարել անմեղ կոյսի վերայ, որը մի ձեռք արձակելու  
 լով պրծել էր շնական ախտով տ՛լարացած խանի թոյլ  
 ձեռքից: Ըռէս Մխօն նորա տարիքը յայտնել էր խա-  
 նին՝ աւելի պակաս, քան որ ունէր նա: Որ ժամանակ  
 Վարդիկը գեռ տանուչորս տարու էր, ասել էր  
 թէ, գեռ տասն տարու է. տակաւին վեց տարի եւս  
 հարկաւոր է. որ Վարդիկը կարենայ զգալ՝ այն, ինչ որ  
 խանը պահանջում է . . . : Նորա համար էլ խանը  
 համբերել էր այնքան ժամանակ եւ միշտ այցելում էր  
 ըռէս Մխօյին: Մի գաղտնիք, որ ոչ ոք չէր իմացել  
 մինչև այն օրը:

Վարդիկի ձեռք ու ոտքը դող էր ընկնում մինչև  
 անգամ խանի անունը լսելիս: Նա պատահել էր  
 Արդալ խանի գազանական կրքերին, երբ անմեղու-  
 թեամբ նորա ձեռքն էր համբուրում հօր ու եղբայր-  
 ների օրինակին հետեւելով: Այն օրից՝ նա զզուել էր  
 նրանից, այլևս չէր ուզում նորա անունը լսել, ո՞ւր  
 էր մտում, որ նորա ներկայութեան ելնելու ցանկու-  
 թիւն ու համարձակութիւն ունենար. մինչդեռ մեզ  
 ծանօթ խանի անպատկառ վարմունքից առաջ, Վար-  
 դիկը ցանկանում էր իւր մանկական անմեղութեամբ  
 միայն տեսնել շքալի խանի փառքերը:

Ըռէս Մխօն երկիւղած խոնարհութեամբ լուր  
 տուաւ խանին, թէ «պատրաստ է»: Խանը իւր շքա-  
 խրմբով եւ ըռէս Մխօյի առաջնորդութեամբ մեկնեց  
 Սահակենց տունը, ուր պառկել էր Վարդիկը՝ ու մի  
 ծանր հիւանդից աւելի գունաթափուած՝ դառնապէս  
 սքում էր: Սահակենց տան անդամներն էլ իմացան  
 գաղտնիքը: Օրիորդի գլխի վերեւ պատրաստուեցաւ  
 խանի բազմոցը, որը շաթիրները հետներն էին բե-

րել: Վարդիկը շատ քիչ էր իմանում ջրդերէն: Կան  
 կերպարը ներս մտնելուն պէս՝ հարցուց Վարդիկի որ-  
 պեսութիւնը, ձեռքը ձակատի եւ երեսների վերայ քը-  
 սելով ու փայփայելով նորա սիրուն մազերը: Վարդիկը  
 իւր ձեռքի շորով ծածկեց դէմքը ու վերայի կապերտի  
 տակ քաշուեցաւ, ջանալով կապերտը գլխի վերայ քա-  
 շել, բայց խանի սուփական ախտից դողդողացող ձեռ-  
 քերը արգիւնցին նորան իւր ամօթխածութիւնից  
 ստիպուած պարկեշտութիւնը պահելու:

— Շատ տաք է, ըռէս Մխօ՛, երեւի պաղ է ա-  
 ուել Վարդիկը, խօսեց խանը:

Վարդիկը աչքերն ամուր փակել էր, որ չը տես-  
 նէր խանի գարնուրելի կերպարանքը. բայց այս վի-  
 ձակի մէջ իսկ նորա գեղեցկութիւնը հրաշալի էր:  
 Նորա թուխ-թուխ թարթափները ձերմակ կերպա-  
 րանքին աւելի դիւթիչ տեսարան էին ընծայում: Կան  
 Արգալի խելքը գլխից փախչում էր, որովհետեւ այս  
 դրութեան մէջ Վարդիկին աւելի գեղեցկացած էր  
 տեսնում: Ձեռքերը նորա ծոցը տարաւ, սրտի վերայ  
 դրաւ ինչպէս մի բժիշկ, Վարդիկի կլորակ ծծերը պա-  
 տահեցին նորա ձեռքին . . . մինչև իւր գազանային  
 կիրքը կշտացուց. ապա վեր կեցաւ Վարդիկի գլխու-  
 վերեւից՝ ամենախայտառակ վիճակի մէջ: Ինքը մի-  
 այն կրցաւ հասկանալ՝ թէ ի՛նչ պատահեցաւ իւր հե-  
 տը: Փոխելու շորերը չէր բերել հեռ, որովհետեւ մի  
 ժամաչափ պէտք է մնար և. դիւղում ու վերադառնար:

Ընթերցողը հասկացաւ անշուշտ խան Արգալի  
 խոնաւացած ու պիղծ վիճակում գտնուելը, որ իրենց  
 օրէնքով էլ նոյն վիճակի մէջ մնալը խիստ մեծ մեղք  
 էր համարվում. բայց իւր լըբութեամբ դատապար-

ս  
 ս  
 ս  
 ւ  
 ծ

տուեցաւ այնպէս մնալու, մինչեւ դուրս ելան: ու՛ գիւղից գուրս՝ գեանգը գնաց . . . : (\* )

(\* ) Այսպիսի պատմութիւններն ընթերցողներին կը զգուեցնեն քեզ, բայց ժողովրդի ողբալի վիճակը պէտք է որ իւր բոլոր գոյներով պատկերանան, ինչպէս եւ բռնապետների շնական շարագործութիւնները, ի հարկէ պարկեշտութեան որոշ տղարկումներով: Իւրաքանչիւր ազգի եւ ցեղի տհմայիկ կեանքը նկարագրում ենք մեկ մեկ փորձառութեամբ, շատերին ականատես լինելով եւ շատերի իրական պատմութիւնները շեշտով, ուզում եմ որ սրտնով հասկանան եւ մեր ընթերցողները. քե սնցեալի մեջ որքա՞ն բշուտառութիւններ են կրել մեր խեղճ եւ անտէր նախնիքը, եւ սակաւին որքա՞ն գաւառներ ու գիւղեր կան, որոնք դեռ այս անսանելի լծի տակ սանջվում են այսպիսի մի շուտաւոր դարում, որոնց ձայնն եւ աղաղակը խեղդվում է իրենց եւ սանջող զագանների անձուկ շրջաններում: Որքան մեր գրչի ոյժը բոյլ է սալիս մեզ՝ մեր գիտցածները յայտնում ենք պարբերական հրատարակութիւններով: Բաժժին, Դեմիկանց, Պերճ Պոջեանց, Ծերենց, Փափաղեան եւ այլ այսպէսի պատկերները գեղեցիկ գոյներով եւ իրենց յատուկ ոճերով նկարագրել են քե եւ, բայց նոքա սակաւին մեր ժողովրդի տհմայիկ կեանքի հագարտերորդը չեն կազմում. որովհետեւ գիւղական խուշ կեանքի միջին անկիւններում դեռ շատ գաղտնիներ կան երեւան հանելու, որպիսի վայրերում սարիներով մնացել են, ժողովրդի կեանքն իմաստասիրելու համար, բայց եւ այնպէս չեն կարողացել սակաւին այդ կեանքի կատարեալ պատկերները վեր առնել եւ ընթերցողների հետաքրքրութիւնը գոհացնել:

Միեւնոյն օրը գիւղի միակ քահանան՝ Տէր Մուշեղը գիւղական բազմաթիւ ուխտաւորներին հետ ամբողջ ընտանիքով Աղթամարի Ս. Խաչ վանքն ուխտի գնացին. ուր մի ողջ շաբաթ մնալու էին երկրի սովորութեան համաձայն: Իսկ Օհանը եւ նորա մի քանի համախոհները յարմար չը դատեցին հետանալ գիւղից, որքան էլ նոցա ընտանիքները պատրաստուել էին գնալու:

Զ.

Գող Մժգոն նորա համար ընկերների դիակները վերցրեց և գիւղից, որպէսզի չը ճանաչուէին նոքա եւ իրենց հետքերը չը յայտնուէին. այս պատճառաւ էլ ամեն զոհողութիւնները յանձն առեց ու հետացաւ գիւղից՝ մի այլ անգամ վերադառնալու եւ վրէժը լուծելու և. գիւղի բնակիչներէից, մանաւանդ Մուրադից: Նա իւր խորամանկ հնարագիտութիւնները կազմելու վերայ էր, այս անգամ քառապատիկ ուժով գալու, չը լսուած աւերումներ գործելու եւ Մուրադի մեծ կտորն ականջը թողնելու, եթէ աւելի սաստիկ ու քստմնելի մի դէպքի չ'ենթարկուէր և գիւղի ժողովուրդը:

Մուրադը՝ երբ Արդալ խանի յայտնած խոցոտիչ խօսքերը լսեց, վերաւորուած առիւծի նման իւր խըրճիթը քաշուեց, այլեւս չը հետեւեց Խանի շքախմբին. նա մտածում էր Հայ ազգի ողորմելի վիճակի վերայ. բարկութիւնից նորա կուրծքն այնքան էր ուռել, որի

ազդեցութիւնը մինչև կոկորդին էր հասել, կարծում էր թէ մի հանդոյց էր մտել կոկորդում եւ խեղդել էր ջանում իրեն: Նա այսպէս էր խորհում.— ին՛դճ հայութիւն, դու քո մարտիրոսական արիւն քրտինքով աշխատում ես, երկրի շինութիւնը վրադ ես առել, մինչև անգամ Քրդի եւ Թուրքի զէնքերն էլ դու ես շինում ու նրանց ես յանձնում, բայց դու գուրկ ես նոյն իսկ քո հնարած արհեստի արդիւնքը վայելելուց, մի անշնորք եւ անկիրթ քրդի չափ էլ արժանիք չ'ունիս, ստրկութիւնը՝ քեզ անասնային վեճակի է հասցրել:

Մուրադը՝ իւր ուսումնի առել էր Բաղէշ քաղաքի «Ամրդօլ» վանքի դպրանոցում. նա խորեհայտու եւ եղիշէի գրքերն անգիր դաս էր առել Բաղիշեցի Դաւիթ վարդապետից, որի առաջնակարգ աշակերտն էր, որ ժամանակ ամբողջ հայաստանում միմիայն Բաղէշ քաղաքն անուն ունէր իւր ուսեսալ վարդապետների եւ վանքերի շնորհիւ: Մուրադի իմաստութեան համբաւը շուտով տարածուեց վասպուրականում, նրան յարգում էին ոչ միայն Լ. գիւղի հասարակութիւնը, այլ եւ վան քաղաքի բոլոր մեծամեծները, որովհետեւ նրանից տակաւին Նղիդենց ազնուական գերդաստանի հոտն էր բուրում. նա իւր նախնիքների հարազատ զաւակըն էր:

Մուրադը փակուեց իւր խրճիթում՝ մինչև եւ Խան Արդալը հեռացաւ գիւղից, նորա մէջ զանազան խորհրդածութիւններ յաշորդում էին միմիանց: Որովհետեւ Խանն ափսոսացել էր, որ նա Հայ էր ծնուել իւր մօրից, ազգասիրական ազնիւ եւ բուռն զգացումները նորա մէջ եռ էին գալիս. նա մոռացել էր մինչև

չեւ անգամ վարդիկի սէրը, որն իւր մտածումի անբաժան առարկան էր:

Երեկոյեան մութին վարդիկը տուն վերադարձաւ, իսկապէս հիւանդ վիճակում. նա այնպէս էր զգում՝ թէ իւր ճակատի մեռոնն անհետացել էր. որովհետեւ Խան Արդալի պիղծ ձեռները նորա վերայ էին կաշել: Ըռէս Մխօն՝ նոյն երեկոյեան իւր նուբար կնոջ եւ երկու որդիների հետ առանձնացաւ հիւրանոցում եւ վարդիկին Խանի ճանկերից ազատելու մի միջոցը գտնելու խորհրդակցութեան մէջն էր. Յարօն պատմեց նրանց իւր կին Սրբիկից լսածը: Ըռէս Մխօն իւր որդուց լսելով Մուրադի եւ վարդիկի սիրոյ մասին, ուրախացաւ թէեւ, բայց Մուրադն ի՞նչպէս պիտի կարողանար վարդիկին մինչև Բաղէշ հասցնել. ո՞վ կարող էր բռնակալ Խանի զօրութեանը դիմադրել: Ողջ գիւղի խօսակցութիւնն այս երեկոյ Խան Արդալի վարդիկի մօտն երթալու վերայ էր դառնում. իւրաքանչիւր ոք իւր մտքից անցած մեկնութիւնն էր տալիս Խան Արդալի դէպի ըռէս Մխօն ունեցած համակրութեան մասին:

Երբ վարդիկը նկատեց որ իւր ծնողք, եղբայրներն եւ նոցա կանայք հիւրանոցում խորհրդակցութեան մօտն, միջոց ունեցաւ Մուրադի խրճիղը մըտնելու: Մուրադը՝ հակառակ իւր ամեն ժամանակի սովորութիւններին, այս անգամ կարծես չը տեսաւ վարդիկի իւր մօտ մտնելը: Վարդիկը գուռաթափուած վիճակում, վիզը ծուռ, ախուր ու տրտում կանգնեց Մուրադի դէմ ու դէմը, որը գեռ մինչև այն ժամանակ անցած ու դարձածից տեղեկութիւն չ'ունէր: Մուրադն ինչպէս խոր երազով ընկղմած քնից զարթնեց,

ևս իւր սիրածին այս գրութեան մէջ տեսնելով, սարսափահար հարցուց :

— Էլի մի բա՞ն ունիս դու վարդիկ. ինչի՞ այդչափ գունաթափուել ու տխուր ես. չ'լինի՞ թէ հիւանդ ես :

— Ա՛խ, Մուրա՛դ ջան, եթէ գիտենայիր թէ ի՞նչ տանջանքներ ունեցայ ես այսօր, էլ ինձ չ'էիր թողնի այս գիւղում :

— Ինչի՞, ինչի՞. ի՞նչ է պատահել. շուտ ասա՛ չեմ կարող համբերել, քանի որ Մուրադի հոգին տըրտփում է փորում, թոյլ կըտա՞յ, որ իւր սիրելի վարդիկը տանջուի :

— Բաղէչո՞ւմն էլ Խան Արդալներ կան, Մուրադ, հարցուց վարդիկը, փոխանակ Մուրադի հարցերին պատասխանելու : Ազատիր ինձ Մուրա՛դ, ինձ այնպէս է թվում, որ էն անօրէնը միտք ունի ինձ տանելու : Սրանից երկու տարի առաջ . . . հազիւ կարողացաւ շարունակել վարդիկը, գլուխը Մուրադի կրծքի վերայ գցեց :

Մուրադի բարկութիւնը կատաղութեան հասաւ. եթէ Խան Արդալը գիւղից մեկնած չը լինէր, անպատճառ պիտի դնար եւ մի դնդակի բաժին անէր նրան, բայց արդէն բանը բանից անցել էր, ամբողջ գիւղը թունդ էր տակ. մեկնութիւններ էր որ տըւում էր :

Ընէս Մխօն, իւր կիներն ու զաւակները նոյն երեկոյեան խորհրդով վճռեցին միեւնոյն գիշերը եղած չ'եղածը թողնել ու հեռանալ գաղտնապէս դէպի Պարսկաստան, այնտեղից էլ անցնել Ռուսաստան, միայն թէ ազատէին վարդիկին խան Արդալի ձանկերից : Մնում էր Մուրադի կամքն առնել, որ նրան էլ հեա-

ները տանէին ու վարդիկի հետ պսակէին : Ընտանիքի մէջ համաձայնութիւնը կայանալուց վերջ՝ Յարօն Մուրադի խրճիթը մտաւ, որ ժամանակ վարդիկը նրա մօտ նստած խան Արդալի անամօթ արարքն էր պատմում :

— Աստուծով խորհուրդներս յաջող պիտի լինի, Մուրա՛դ, լաւ է որ վարդիկն էլ էտեղ է : Սրբիկն ամեն բան պատմեց մեզ, մենք ամենքս էլ հաւանութիւն տուինք ձեր նշանադրութեան մասին. ես եկել եմ ամենքի կողմից շնորհաւորել ձեզ եւ նպատակներս յայտնել : Այս ժամուն պէտք է որ թողնենք մենք մեր ամեն ունեցածները ու հեռանանք այս ապականված մթնոլորտից, դու էլ համաձայն ես մեր խորհրդին, Մուրա՛դ :

— Արդէն վարդիկն էլ այդ նիւթի վերայ էր խօսում, պատասխանեց Մուրադը : Մենք պատրաստ ենք ամեն բան զոհելու, մինչեւ անգամ կեանքներս. ես էլ իմ ունեցած ցորենի հորերը եւ բոլոր ապրանքներըս տեղնուտեղը կը թողնեմ ու միասին կը հեռանանք :

— Դէ՛հ, գնանք ուրեմն հօրս մօտ, ասաց Յարօն : Եւ երեքը միասին հիւրանոցը մտան, ուր հաւաքուել էին ընէս Մխօյեանց ամբողջ ընտանիքը :

Գիշերից չորս ժամ անցել էր, երբ ընէս Մխօն եւ իւր կին Նուբարը համբուրեցին Մուրադին եւ վարդիկին. օրհնելով նոցա սուրբ սէրը : Մուրադը իւր զէնքերը կապեց. ընէս Մխօն իւր ձեռքի տակ եղած ոսկիները վերցրեց եւ իւր ամբողջ շինութիւնները աչքից անցկացրեց, յետոյ ախոռատունը մտնելով նկատեց որ մշակիները անուշ քուն մտած խըռում էին :

Բոլոր շինութիւնների գոները փայտից շինուած փա-  
կանքներով փակեց նա եւ ամբողջ ընտանիքով հեռա-  
ցան գիւղից:

Առաւօտեան՝ արշալոյսի մօտերը վերկացան մշակ-  
ները, տաւարներին ջրելու եւ ուտեստ տալու: Արդէն  
սկսում էր լուսանալ: Ընէս Միսոյնց տանից, հակա-  
ռակ ամեն օրուայ սովորութիւններին, ներս ու դուրս  
անողներ չը կային: Շատերը կարծում էին թէ ամօ-  
թից չէն ուղում դուրս ելնել: Մշակներն էլ համար-  
ձակութիւն չունէին ներսի դուռը զարնելու: Ակրա-  
տի (\*) ժամանակը հասել էր. պէտք էր որ նախաձաշիկ  
անէին. նոքա խիստ շատ անօթեցել էին:

— Յովօ՛, ասաց Սարգիսը, (այսպէս էր մշակների  
անունները), գնանք ձայն տանք. կարելի է որ ուշ են  
պաակել այս գիշեր. ո՞վ գիտէ, որքան նստեցին խեղ-  
ձերը. էն անիծուածի գործած անօրէնութեան պատ-  
ճառով:

— Նախ Մուրադի դուռը զարնենք, պատասխա-  
տեց Յովօն:

Մշակները դուրս ելան ախոռատանից. որքան որ  
Մուրադի խրճիթի դուռը զարկին, ձեղքուածներէից  
նայեցին, ոչ ոք չ'երեւաց. ստիպուած գէպի թոնրա-  
տան մեծ դուռը դիմեցին. մի քանի անգամ զարկին.  
ականջ դրին, միայն կատուների մլաւոցի ձայներն  
էին լսվում, ուրիշ ոչինչ: Յովօն նկատեց, որ դրսից  
քաշել էին սողնակը ու փայտեայ բանալին էլ մէջն  
էին թողել: Փականքի այն ծակից ձեռքն անցուց:

(\*) Հայաստանի շատ գիւղերում նախաձաշիկն  
«ակրատ» եւն ասում:

որտեղից սովորութիւն ունէին դուռը բաց անելու:  
Դուռը բացուեց, բայց մեծ եղաւ նոցա զարմանքը,  
երբ տանը ոչ ոքի չը գտան: Խեղճ ծառաները ապշա-  
բար միմեանց երեսին էին նայում:

— Ո՞ւր են գնացել սրանք, որ չեն երեւում. օ-  
րօրոցի երախաներն էլ տեղը չեն, բայց տանը ամեն  
ինչ կարգին է, այս ի՞նչ բան է, ասաց Սարգիսը:

— Դուրս ելնենք Սարգիս, պատասխանեց Յովօն,  
ուր որ էլ գնացել են, այժմ վերադառնալու են:

Մշակները ակրատ ուտելը մոռացան ու բակի  
մէջտեղը կանգնած՝ նայում էին դէպի գիւղացւոց  
ծխրտացող երգիքները, որից դուրկ էր այս ժամուն  
միմիայն իրենց տանուտիրոջ երգիկը, հակառակ ամեն  
օրերու սովորութեան: Ընէ կին Նուբարի եղբայրը,  
Սահակի եղօն, նկատելով իւր քրոջ տան այսօրուայ  
դրութիւնը, ուզեց մի լուր անել իւր փեսայի եւ  
քրոջ վիճակից. ուստի եւ յառաջացաւ գէպի ընէս Մը-  
խօյնց սուներ: Երբ բակի դռնից ներս մտաւ, հար-  
ցուց.

— Տղե՛րք, ընէսենք դեռ չե՞ն վեր կացել:

— Ձեր տանը չե՞ն նոքա, տանը ոչ ոք չ'կայ,  
պատասխանեց Յովօն:

— Ինչպէս թէ չեն երեւիր, զարմացական եղա-  
նակով ասաց եղօն, եւ թոնրատունը մտաւ, այնտեղից  
ախոռատունը, մտանները եւ ամենից վերջ Մուրադի  
խրճիթը: Կահկարասիք տեղն ու տեղը մնում էին, բայց  
տանեցիք չը կային: Եղօն կասկածանքի մէջ ընկաւ:  
Դեռ կէս օրը չ'եղած՝ ընէս Միսոյնց անյայտանալու  
լուրը տարածուեց ամբողջ գիւղում: Սահակնց եղօն  
երկու օր շարունակ թէ ինքը անձամբ գնաց եւ թէ

մարդիկներ ուղարկեց մերձակայ գիւղերը, ըռէս Մխո-  
 յենց ընտանիքի մասին մի լուր առնելու: Ոչ ոք տե-  
 ղեկութիւն չը տուեց, ոչ ոք տեսած չ'էր նոցա մին-  
 չեւ անգամ որ կողմ գնալը: Արդէն մանրավաճառ Մու-  
 բաբը հազար անգամ չափչփեւէր այն ճանապարհները,  
 որ տեղերով առաջնորդեց ըռէս Մխոյենց եւ երկու  
 գիշերից յետոյ Սալմաստի Հաֆթվան գիւղը հասցրեց  
 նոցա: Խան Աբդալը ըռէս Մխոյենց այցելութիւնից  
 երկու օր վերջ իւր ծառաներից մինին ուղարկեց և,  
 գիւղը Վարդիկի առողջութեան մասին լուր ստանա-  
 լու: Գիւղացիք եղեկութիւնը պատմեցին նրան: Տը-  
 խուր լուրը կայծակի արագութեամբ տարածուել էր  
 արդէն Վասպուրականում:

Երեկոյեան մութը կոխել էր: և գիւղի բնակիչ-  
 ները բամբասանաց մեծամեծ պարկերը բացած՝ ախո-  
 ռատներում եւ թոնիրներէ շուրջը բոլորած խօսում  
 էին, ոմանք ուրախացել էին ըռէս Մխոյենց անբախ-  
 տութեան վերայ, ոմանք էլ ցաւում էին, ինչպէս Օ-  
 հանը եւ իւր կողմնակիցները: Վերջիններս որքան հա-  
 կակարծիք էին ըռէս Մխոյի կրօնական մոլեռանդու-  
 թեան, բայց շատ էին ցաւում, որ մի այնպիսի կա-  
 րեւոր տունը պակսեց գիւղից, որը գրեթէ գիւղացի-  
 ների ամենածանր բեռը թեթեւացնում էր: Քիւրա ու  
 թիւրք հիւրերը իւր տանն ընդունելով եւ սուրբերի  
 մեծ մասն ինքը վճարելով:

Օհանը գուշակում էր իրերի տխուր հետեւանքը,  
 չատերի միտքը փոխուեցաւ դէպի գաղթականութիւնը:  
 այդ ժամանակ արդէն Վասպուրականի հայ գիւղացի-  
 ների մեծամասնութիւնը սկսել էր գաղթել աշխարհի  
 չորս կողմերը: Թէ ո՞ւր էին գնում, իրենք էլ չէին

իմանում: Կարինում, Պոնտոսում, մանաւանդ Կ. Պօլ-  
 սում վասպուրականցիները լիքն էին, որոնց մեծ մա-  
 սը համալութեան դառն աշխատանքով էր պարապում:  
 ոմանք թիւրք եւ հայ տներում ծառայութիւն էին  
 անում ամենաչնչին օրավարձով: հաղիւ թէ կարողա-  
 նում էին մի ցամաք հացի գին աւելացնել եւ իրենց  
 հայրենիքում թողած թշուառ ընտանիքին ուղարկել:  
 Քսան, երեսուն եւ քառասուն երկար տարիներ զբը-  
 կուելով հայրենիքի քաղցր հողից, ջրից, ընտանիքից  
 եւ զաւակներից: Օհանը այս ամեն կորստաբեր միջոց-  
 ները ցոյց էր տալիս գիւղացիներին, նա հակառակ էր  
 գաղթականութեան դիմելուն, բայց ո՞վ էր լսողը: Օ-  
 հանը իւր տարիքը առած աղջկան հէնց նոյն օրը  
 հեռացրեց գիւղից, ինքն էլ իւր ամբողջ ընտանիքով  
 գիշերանց դուրս ելաւ գիւղից եւ մերձակայ հայ գիւ-  
 ղը գնաց, ուր բնակվում էին իւր աներորդիները, երբ  
 իմացաւ նա, թէ խան Աբդալը լսեց Վարդիկի այնպո-  
 տանալու լուրը: Նա ուզեց լուր տալ գէթ իւր ամե-  
 նամտերիմ բարեկամներին, բայց նոքա տակաւին  
 գաղանապահութեան չէին վարժուել: Երբ խան Աբ-  
 դալը լսեց ըռէս Մխոյենց փախուստը, իւր մեծ բանա-  
 կովը և գիւղի վերայ դիմեց: Գիւղի իւրաքանչիւր  
 տան վրայ տասնից աւելի զինուած քրդեր պահպան  
 կանգնեցին, խուզարկութիւնը չորս ժամից աւելի տե-  
 ւեց, երբ ըռէս Մխոյենց անդամներից ոչ մինը չը կըր-  
 ցին գտնել, խան Աբդալը հրամայեց չարչարանքների  
 ենթարկել գիւղացիներին, մանաւանդ նոցա տանը  
 թողուցած երկու մշակներին եւ ազգականներին: Լաց,  
 ճիչ, աղաղակ երկինքն էր բարձրանում: Էլ անգթու-  
 թիւն չը մնաց, որ չը գործադրեցին գիւղացիների վե-

բայ: Երկու մշակները մարմինները վերայ ողջ տեղ  
չէր մնացել, որ շիկացած երկաթներով չէին խանձել:  
Նոքա ստիպում էին նոցա, որ կամ ցոյց տան ըռէսինց  
ընտանիքը եւ կամ յայտնեն նոցա ուր փախչելը: Սա-  
հակի Եղօյնց մարդկանց ու կանանց վիճակի վերամ  
Աստուած ողորմութիւն անի, մի անգութ քիւրտ Եղօի  
երախային բռնած սուրը վզին էր դրել եւ գոռում էր.  
«ցոյց տուէք, ապա թէ ոչ կը մորթեմ»): Երախայի  
մայրը քրդի ոտքերն էր ընկել. բայց նա աքացիներ  
էր տալիս խեղճ կնոջ կրծքին ու գէմքին: Քանի գը-  
նար, ինչի հրամանը կը սաստկանար. նա թոնիրները  
վառել տուեց եւ գիւղացւոց ծծկեր երախաները ողջ-ողջ  
մէջները թափեց: Ըռէս Միօյնց բարեկամների շատե-  
րի քիթն ու ականջները կտրել տուեց. այսպէս ողջ  
գիշերը չարչարեցին և գիւղի բնակիչներին մտքից  
չ'անցած տանջանքներով, կողոպտեցին տարան բացի  
տաւարներից կանացի բոլոր զարդարանքները եւ պա-  
հետի հագուստեղէնները: Տարան նոյնպէս գիւղի ա-  
մենագեղեցիկ հարսներն եւ աղջիկներն. ամենից  
վերջ կրակը տուին ողջ գիւղի գէղերին եւ շինու-  
թիւններին: Հրացանների ձայները ականջ էին խլա-  
ցում: Մի շաբաթից վերջ անցողները և գիւղի աւե-  
րակները միայն կը տեսնէին: և գիւղացիների ողջ  
մնացածները շրջակայ գիւղերում ցրուեցան ամենա-  
թշուառ վիճակով:



Ե.

Վան քաղաքի հայ մեծամեծները Գոճարաշի կոչ-  
ուած իշխանութիւնը յափշտակում էին միմեանց ձեռ-  
քից: Գարասէֆէրենց, Բարիկաղենց, Թոխմախենց, Աղ-  
ուէսենց, Պողպատենց եւ զանազան աղնուական հա-  
մարուած տների ներկայացուցիչները կաշառում էին  
թիւրք փաշաներին, ամենացած քսութիւններով մատ-  
նում էին միմեանց, երբեմն էլ մինը միւսին խեղդա-  
մահ անել տալով, խլում էին միմեանցից գոճարաշու-  
թիւնը: Կամայական հրամանների տակ տառապում էր  
ժողովուրդը. որի՞ն հնազանդէր, ինքն էլ չը գիտէր.  
որովհետեւ տարին չ'ա ցած իւր պաշտպան Գոճարաշու-  
մարմինը կամ բերդից էին կախում եւ կամ քաղաքի  
հրապարակի վերայ էին գցում. օր չ'անցած խեղդու-  
ածին յաջորդում էր մի ուրիշը:

Պարսկական խաները երկրի այս անկանոն դրու-  
թիւնից օգտուելով հրոսակախումբեր էին ուղարկում  
եւ աւերումների պակասորդն էլ նոքա էին լրացնում,  
որոնք երբեմն տիրապետելով այս ու այն բերդերը.  
իրենց կողմից մի մի քիւրդ փոխանորդներ էին տալիս  
նոցա ու վերադառնում իրենց տեղերը, աւերակները  
կոյտերը միայն թողնելով տիրապետողներին:

Բաշկալէ, Խօշար, Գանգուառ, Ռստան, Մոխրա-  
բերդ, Ամիկ եւ զանազան անառիկ բնրդերը մի թեթեւ  
յարձակումով յափշտակում էին զօրաւորները անզօր-  
ների ձեռքից: Այս այն ժամանակն էր, երբ բրոնա-  
պետները կարեւոր պաշտօնեաների թոււմ գրագիրները,

մատանապետի ու ծախսարարի պաշտօնը հայերն էին կատարում, որոնք մեծ դեր կարող էին կատարել, եթէ մի քիչ բարեգործութիւնը կամ խիղճը միտները բերէին: Նոքա երեկոյեան ու առաւօտեան եկեղեցուց ետ մնալը մեծ մեղք էին համարում, բայց օրական հազարաւոր հանրի տներն էին քանդում եւ հարիւրաւոր անմեղ մարդկանց արիւնը թափելու պատճառն էին դառնում, բաւական էր որ տարին մի քանի անգամ պաշտօն պատարագ էին անել տալիս, մատաղ եւ հարիսայ էին ցրում, վարդապետներին, տէրաէրներին ժամոցներ էին տալիս եւ ամեն նաւակատիքներին հաղորդութիւն էին առնում: Երեկոյները առանց աղօթքի պառկելը մահացու մեղք էին համարում, նոցա մինչեւ չորս տարեկան երեխաներն էլ «հաւատով խոստովանիմ» աղօթքի քսան եւ չորս տուններն անգիր էին արել, որովհետեւ նոքա այնպէս էին հասկացել թէ, այս պարտականութիւնները կատարողները կը մաքրուին իրենց գործած մեղքերից եւ պահապան հրեշտակները երկաթէ պարիսպներով կը պահպանեն նրանց: Իրենց որդիներին էլ այսպէս էին պատմում.— Գիտէ՞ք, որդիներ՝, եթէ ամեն երեկոյ «հաւատով խոստովանիմ»ի քսան չորս տունը լման ասէք ու յետոյ քնանաք, պահապան հրեշտակները կը հսկեն ձեզ վերայ:

Սաֆար աղէն, որ խան Արդալի ծախսարարն էր, իւր տասը տարեկան աղին այսպէս էր ասում.— «Գրդմօրենց Աւանէս աղէն ամեն գիշեր եկեղեցի էր գնում: Մի անգամ չորս թիւրքեր միտք են անում որ նրան սպանեն. մի ամբողջ շաբաթ հետեւում են նրան, բայց ի՞նչ են տեսնում, հրեշտակները զոյգ զոյգ լապտեր-

ներով նրան անցկացնում էին եկեղեցի գնալիս: Մի օր հարցանում են նրանից. «Աւանէս, է՛ն ի՞նչ մարդեր են նրանք, որ լապտերներով շրջապատում են քեզ, երբ դու գիշերները եկեղեցի ես գնում, նրանք լուռ եւ անձայն հետեւում են քեզ, իսկ դու մի ինչ որ աղօթք ես պտպտում»:

Մեծ է լինում թիւրքերի զարմանքը, երբ Աւանէս աղէն յայտնում է, թէ. «Ինձ հետ ոչ ոք չի լինում, ես միայնակ իմ գնում եկեղեցի»: Աստուածն էր ուղարկում պահապան հրեշտակներին որ պաշտպանէին նրան: Թիւրքերը հետեւեալ գիշերն էլ գնում են, որ սպանեն նրան, դարձեալ նոյն լոյսերի մէջ են տեսնում Աւանէս աղբրն, երբ նա «Հաւատով խոստովանիմ» աղօթքը կարդալով գնում էր: Նոքա մօտենում են, որ սուրբ կոխեն փորը, Աւանէս աղէն անյայտանում է: (1)

Գործնական աստուածապաշտութիւնը եւ հաւատը բանի տեղ չէին գնում քրդի սիրտ ունեցող հայ պաշտօնեայները: Նոցա որդիները իրենց աչքերով տեսնում էին, որ օրական քանի՞ մարդերի դժբախտացնում էին իրենց հայրերը, բայց աղօթքից եւ եկեղեցուց ետ չէին մնում: Տիրապետող տարրն էլ այս գաղափարին էր ծառայում: Նոքա շնութիւններ էին գործում, մարդասպանութիւններ էին անում ու մի անգամի լուացումով սրբվում էին գործած մեղքերից, էլ ի՞նչ զանազանութիւն էր մնում քրդերի եւ հայ

(1) Այսպիսի պատմութիւնները վառայ պատաւ մաւրիկները մինչեւ այսօր էլ պատմում են իրենց որդիներին եւ թոռներին:

իշխանները մէջ, երբ հայերն էլ անգթութիւններ էին գործում: Վարդապետներն ու տէրտէրները լաւ էին խմանում հայ իշխանների գործած անգթութիւնները. նոքա շատ-շատ մի շարաթ աւելի պահք ու ծոմ պահելու ապաշխարանքին էին ենթարկում ժողովրդեան արիւնը ծծող սղորակներին. չէին մոռանում նաև նրանցից սունել ծածուկ ժամոցները, որոնց մէջն էր կայանում արդէն յանցանքների քաւութիւնը: Այսպիսի պահանջների փոխարէնը հայ իշխանները մի ժամում կարող էին ձեռք բերել մի աղքատ գիւղից:

Այն ժամանակի վարդապետները եւ տէրտէրները այս տեսակ ամբարիշտ միջոցներով էին դիզում իրենց հարուստ գանձերը: Նոքա՝ այն վարձկան հաւատարմութեամբ ները, փոխանակ իրենց կոչման հաւատարմութեամբ ծառայելու, մոլորեցնում էին ժողովրդեան, նոքա մինչև անգամ արգելում էին ժողովրդեան ինքնապաշտպանութեան համար զէնք կրելը, որովհետև նոքա իրենց շահն ու հանգստութիւնը ժողովրդեան սպիտութեան մէջն էին գտնում: Այսպիսի պարագաներում բացառութիւն էին կազմում քաջ Ողմեցիները, որոնք իրենց զրացի քրդերի նման հազվում եւ ազատօրէն զէնք էին կրում, որի համար էլ ոչ ոք չէր համարձակվում նոցա գիւղի սահմանները ոտք կոխելու: Նոքա մի շեշխանն հրացան ձեռք բերելու համար՝ տարիներով պանդխտութեան դառն լծին հնազանդվում էին, որովհետև այն ժամանակները հրացանի գինը շատ թանկ էր: Ողմեցիները տասն տարի մնում էին Պօլսում. երբ իրենց շահած փողը մի հրացան գնելու չափ հասնէր, այլևս չէին դադրի. հրացանը կառնէին եւ քայլելով մինչև հայրենիք կը հասնէին: Նորու-

թիւնները, հագուստի եւ ուրիշ զարդերի մասին երբէք չէին մտածեր, որոնք մինչև այսօր էլ նոյն ազատութեան մէջ կ'ապրէին, եթէ մի խորամանկ քիւրդ չը խարէր նրանց, որի մասին կը խօսենք իւր կարգին:

Չմեռն անցել էր. խան Աբդալը հրամայեց իւր ծառաներին, որ Լ. գիւղի ցրուած ժողովուրդը հաւաքեն եւ գիւղը շէնցնեն: Ծառաները ուր որ կըցին գտնել Լ. գիւղացիներին, խանի մօտը հաւաքեցին, որոնց թւում գտան նաև մեզ ծանօթ Օհանը: Խան Աբդալը քիչ ժամանակից վերջ ծանօթացաւ Օհանի հետ, նա շատ էր հաւանում Օհանի խելքին, այս պատճառով էլ գիւղապետութիւնը նրան յանձնեց, խոստացաւ նրան, որ զժբախտացած ժողովրդի աւերակները շինութեան եւ պէտք եղած սաւարները գնման գործում նիւթապէս օգնէ գիւղացիներին:

Ը.

Օհանը՝ Լ. Գիւղի գիւղապետ կարգուելով, ընէս Մխոյին յաջորդելու բարեբախտութիւնն ունեցաւ: Մի տարուայ ընթացքում գիւղը բաւական շէնցրեց. ցրուած ճողովուրդը հեռագհետէ հաւաքվում էր. խան Աբդալի յարաբերութիւնները Օհանի հետ խիստ մտերմական էին. ժողովուրդը զարմանում էր Օհանի եւ Խանի այս բարեկամական յարաբերութիւնների վերայ, մանաւանդ մոլեռանդ միւսիւղմանները նախանձից արաքվում էին: Նոքա յիշում էին, որ Խան Աբդալը տանուտէր Մխոյին հրամայում էր, իսկ սրան իւր հա-

լասար ընկերի նման յարգում էր. նորքս յիշում էին, որ ամիսը մի քանի անգամ ըռէս Մխօյեհնց տուն հիւր էր գնում, իսկ սրա տանը դեռ ոտք չէ գրել. ոտք չէ գրել նաեւ Լ. գիւղում ըռէս Մխօյեհնց անյայտանալուց վերջ: Ի՞նչ պատահեցաւ սրա հետ, այն գազանային բնաւորութիւն ունեցող մարդն ինչի՞ գառ է դառել. ինչի՞ հայերի հետ այսքան անուշութիւնով է վերաբերվում. նա որ հայերի արիւնն էր թափում, այժմ ինչի՞ թոյլ չի տալիս մի հայի հաւին ձեռք տալու: Օհանին ինչի էսքան սիրում է. գիշերները մինչեւ լոյս նորա հետ փքափքու է անում. եթէ մի շաբաթ չհրեւի, յատուկ մարդ ուղարկում եւ կանչում է: Խան Արզալի անձնական շաթիրները մէջն էլ այս տեսակ խօսակցութիւններ էր լինում:

— Էս անօրէն ֆլան խանին սիրելի դառնալուց վերջ՝ հացներս հարամեց, ամիսները կ'անցնին՝ հաւի մսի համը չ'ենք առնում, ձիերս կուշտ դարի չեն ուտում. տներս քանդուեց. էլ ի՞նչ շահ է մնացել մեզ, այժմ ֆլաները մեզանից լաւ են ապրում: Ըռէս Մխօն ափսոս չ'է՞ր, երբ նրա տանն էինք գնում՝ ինչքա՞ն առատ առատ վարձատրում էր մեզ, իսկ էս անհաւատ Օհանը՝ մինչեւ անգամ հետներս չի ուզում խօսել, ինչպէս խան Արզալն ինքը լինի, այնքան որ ամբարտաւանացել է. ո՞ւր էր որ մի օր էլ սրա վերայ բարկանար խանը եւ ըռէս Մխօյեհնց բրգուձը սրա բերանը դնէինք: Մինչդեռ այս խօսակցութիւններով էին զբաղվում խան Արզալի շաթիրները, խանը Օհանի հետ թեւ թեւի տուած՝ դուրս ելաւ դիւանխանայից եւ ձիապանին պատուիրեց, որ ձիերը պատրաստէր, իսկ իրենք վարդենիներով պատած պարտէզը գնացին պը-

տոյտ անելու: Ահմէն, որ շաթիրների գլխաւորն էր, հարցուց խանից. «Օհանի ձի՞ն էլ պատրաստենք»:

— Հարցանելու պէտք կա՞յ, բարկութեամբ պատասխանեց խանը. դեռ չ'ե՞ս իմացել, որ առանց Օհանի տեղ չ'եմ գնում ես:

Ահմէի դէմքից մի դայրոյթի ամպ անցաւ. Օհանը նկատեց այս: Արդէն բոլոր շաթիրներին թունաւորողը Ահմէն էր, որ մի քանի օր առաջ էլ մի խիստ յանդիմանութիւն ընդուել էր խանից, երբ Օհանի մասին շինծու ամբաստանութիւններ էր յայտնել նրան:

Խան Արզալի հեռանալուց վերջ՝ Ահմէն դարձաւ գէպի իւր ընկերները եւ ասաց.

— Տեսա՞ք, էս անօրէն ֆլան թուղթ է արել եւ խանի բերանը փակել է ասում են, որ սա աշխարհիս առաջին զբարացն է. սրա վերայ ոչ սուր է բանում, ոչ գնդակ: Չ'է՞ք յիշում Լ. գիւղի կոտորածի ժամանակը որքան փնտռեցինք սրան՝ չ'կարացինք գըտնել, ինչպէս երեւում է. սա կարող է եւ աներեւոյթանալ. ի՞նչ լաւ կը լինէր, որ մի անգամ էլ սրա տանը գնար խանը. էլ վարդիկին պիտի մոռանար, այնքան սիրուն մի աղջիկ ունի, ինչպէս մի հիւրի լինի, բայց հօրից էլ աւելի հպարտ է, հա՛. եթէ Խանի սիրտը փոխենք, նրա աղջիկով պիտի կարողանանք յաջողեցնել եւ մեր շահերի աղբիւրը բանալ, ապա թէ ոչ՝ բաներս բուրդ կը լինի. մեր երեխէքը քաղցածութիւնից պիտի կոտորուին:

— Ահմէ՛, էս շուռն ֆլաների աղջկերքը ինչո՞ւ այնքան սիրուն են լինում, վերայ բերաւ շաթիր Շաւէշը, աօ՛, էնէնց շուտ էլ են մեծանում. երէկի ծնածը էսօր ափս է գնում. մէկ էլ կը տեսնես, որ սիրուն մի

աղջիկ է դառել, մանաւանդ էն քանդուած զիւղում՝ սիրուններով լիքն են. հիմի որ Խանը թողուցել է իւր խստութիւնները՝ էնէնց սիրուն սիրուն հագւում են, որ մարդու խելքն են տանում: Ես մի քանիսին նշնել եմ, անկարելի է, որ ձեռիցս պրծնեն. խօ՛ Օհանը միշտ էսէնց մնալու չէ, ասում էր Շաւէշը ու բերնից ջրերը վազում էին:

Մայիսեան ամսի սկիզբներն էր. խանը եւ Օհան պարտէզի մի դարաւոր ընկուղինու հովանուտակ պազած՝ խորհրդակցութիւններ էին անում. Օհանը ցոյց էր տալիս պարտէզի կանոնաւոր եւ անկանոն սունկերն ու ծաղիկները: Նա Կ. Պօլսի գեղեցիկ ծաղիկների, պարտէզների, տների եւ սովորութիւնների մասին էր խօսում, որովհետեւ խան Աբդալն էլ ուզում էր Կ. Պօլսոյ հեշտ կեանք վարող փաշաների նըման շինութիւններ պատրաստել տալ իրա համար եւ երջանիկ կեանք վարել: Խան Աբդալը կրկին ընկղեց իւր ախուր խորհրդածութիւնների մէջ. այսպիսի ժամանակներում Օհանը նրան յոյս եւ խորհուրդ էր տալիս. նա ասում էր. «Խա՛ն, եթէ դուք շարունակէք ձեր այս արդար կառավարութիւնը, թէ ամբողջ աշխարհին սիրելին պիտի դառնաք եւ թէ նրանք պիտի վերադառնան՝ լսելով ձեր այս խաղաղ վարուեցողութեան մասին եւ դէպի հայերն ունեցած ձեր այս անհուն սէրն ու խնամքը»: Վերջինս ըսէս Մխօենց մասին էր ասում Օհանը:

— Ես չեմ կարծում թէ նոքա այլեւս վերադառնան, Օհան. ինձ ասացին, որ նոքա այժմ Մոսկովի երկիրն են գտնվում եւ վարդիկը Մուրադի հետ պսակուել է. եւ մի խոր հառաչ արձակեց եւ կանչելով

իւր անձնական քիւրդ երգչին, երգել տուեց հետեւեալ սիրահարական երգը:

Անխօս քնար, ինչի՞ աշրպես  
 Լուռ եւ անձայն արսիս կ'ազդես.  
 Բար է այդու հսկ մի՛ ձայնիկդ  
 Կեանսցս ուսեր ցե՞րք սղոցես,  
 Սիրսս ու հոգիս ե՞ր կը սակցես.  
 Ո՛հ դու երբեք չես հսկեր ձայն,  
 Դեռ համբերե՞մ ես քեզ նման  
 Վա՛շ, բնութիւնն է չար գազակ  
 Չի ինչայեր իսկի մարդիակ  
 Ո՛րքան ուզէ կը սակցէ գայն.  
 Որիև խշեց նա անպայման.  
 Բակդի՛ր, ջարդի՛ր, որչափ կ'ուզես,  
 Քեզ եւ յսնձնում սիրսս ու հոգիս:  
 Այն ի՛նչ քեսակ անկիւր սշափ  
 Ու քափակցիկ հրեղեկ գնդակ,  
 Մշահարուած անխողովակ  
 Ընկեր ես քեզ գեղիք միակ,  
 Ինչո՞ւ այնպես արսիս շիսակ  
 Չարկիւր սշափ գաղտնաբար,  
 Ո՛հ, խոր է վերքս, եւ կեակփս համակ  
 Խորակվում է, չ'ունիլ հեար:  
 Արևեսագէտ հակ ձարսար,  
 Դու գիտես իմ դարմանն ու ձար.  
 Հասար փութով, խղճա՛, օ՛հ գիս,  
 Ահա վերջն է թշուառ կեակփս:  
 Աշխարհս համայն գլխիս խրփես,  
 Հայնոյակօք երեսս քփես,

Որքան զգուես եւ ինձ աես,  
 Դարձեալ գեղ պաշտու իմ ես:  
 Ռազմագիտաց անեղ պատիժ,  
 Գազանի եւ թե թուևարոյ իժ,  
 Ինձ չեմ կարող ազդել ոչ ինչ,  
 Դո՛ւ ես միայն իմ ազատիչ:

Ձերը պատրաստ էին. շաթիրները զինուած սպասում էին խանին եւ Օհանին, բայց չէին իմանում թէ ուր պիտի գնար խանն այսօր: Մի տարի կը լինէր որ և գիւղը ազատուել էր խան Արդալի այցելութիւններից, այսօր դարձեալ ուզում է գնալ նա այն գիւղը, որի յիշատակը միշտ արթուն էր նրա սրտում եւ մի անհրեւոյթ որդ շարունակ կրծում էր նրա սիրտն ու միտքը: Վարդիկի սիրուն պատկերը երբէք չէր հեռանում նորա երեւակայութիւնից: Երբ խանը յայտնեց, թէ և գիւղն էր գնալու, շաթիր Ահմէն եւ Շաւէշը միմեանց երեսը նայեցին. Օհանը խնդրեց խանից, որ հրաման տար իրեն գիւղը գնար ու պատրաստութիւններ տեսնէր, որպէսզի վայելուչ պատիւներ անէր իւր յանկարծական հիւրին. աւելի ճիշդը, իւր իմաստուն կարգադրութիւնները տեսնելու համար. բայց խանն արգելեց, նա յայտնեց, որ շատ քիչ է մնալու այնտեղ, միայն ուզում է տեսնել այն տեղերը՝ ուր գեղեցիկ հայ աղջկայ ներկայութիւնը կրակել էր նրա սիրտը:

Խան Արդալը իւր շքախմբով յանկարծ և գիւղը հասաւ, որի համար արեւմտակողմի գեղեցկատես աղբիւրի վերայ եղած ուռնիներէ հովանու տակ ընդունելու տեղը պատրաստեցին, ուր հաւաքուեցին եւ

գիւղի բոլոր երեւելիները բարի գալուստ մաղթելու նրան, որոնք բերաններով օրհնում ու սրտերով անիծում էին նրան: Շատերն ասում էին.

— Էս անօրէնն էլի՞ սկսեց յաճախել մեր գիւղը, էլի՞ մի փորացաւ ունի. քանդուի իրա տունը, ինչպէս քանդեց մեր շէն գիւղը. ոտը կոտորուէր ու մեր գիւղը չը մտնէր:

Խեղճ գիւղացիք սարսափահար եղան. հազիւ թէ մի քիչ շունչ էին առել, անա դարձեալ փորձանք է սպառնում իրենց: Արդէն խանի յանկարծական գիւղում մտնելը տխուր հետեւանքների նշան էր համարվում. ոմանք Օհանին էին վերագրում այս յանցանքը, նորա ասում էին.

— Նա տեսաւ Մխօյե ց գլխին եկածը, ինչի՞ շան հետ տոպրակ է մտնում:

Գարուն էր. շատերի կանայք եւ աղջկունք դաշտերն ու լեռներն էին գնացել բանջարեղէններ հաւատելու եւ ոչխարներ կթելու. գիւղում մնացածները երկիւղից տանը փակուեցան: Խանի գիւղ մտնելուց յետոյ ոչ մի աղջիկ, ոչ մի հարս չը համարձակուեց գնալու եւ աղբիւրից ջուր լեցնելու: Խան Արդալը մի ժամից աւելի նստեց աղբիւրի գլուխը. նա մի նարգիլէ քաշելուց վերջ սուրճը խմեց եւ տխուր յիշատակներով ընկղմած, վեր կացաւ տեղից եւ սկսեց ընէս Մխօյեից թողուցած աւերակների առջեւից անցուղարձ անել եւ ինքնիրան հարցնել. «ո՞ւր գնացին սրանք, որ մի լուր էլ չ'կարացինք առնել սրանցից. ա՛խ, եթէ գիտե՞նայի, թէ նրանց գործածը խորամանկութիւն էր, հէնց այն ժամուն անկողնուց կը հանէի նրան կը տանէի, այժմ ես նրանից մի զաւակ էլ ունէի, որի սի-

րով այլեւս կապովում էր նա մեր տան ու կրօնի հետ: Այս խորհրդածութիւններով ընկղմուած՝ սկսեց յառաջանալ դէպի գիւղի արեւելեան կողմը, առանց իմանալու, թէ ո՛ւր է գնում, մինչեւ որ հասաւ եկեղեցու դրան առջեւը, որին հետեւում էին իւր շաթիւրներն եւ Օհանը. էտեղ կանգ առաւ նա ու դառնալով հարցրեց Օհանից. «ժամն է՞ և էք շինել, այժմ գիւղացիք լաւ վիճակ ունին, այնպէս չէ՞, Օհան»:

— Այո՛, խա՛ն, ձեր շնորհիւ ո՛չ միայն մեր գիւղը, այլեւ ամբողջ Վասպուրականի հմայ ժողովուրդը խաղաղ ու հանգիստ ապրում են, շարունակաբար թամանդաններ անելով պատասխանեց Օհանը:

Այս ատեն Օհանի դուստր տասնըվեցամեայ գեղեցիկ Շուշանը բերատեղից (1) նոր էր վերադառնում իւր Վահան եղբոր կին Շողիկի հետ միասին: Ահմէն ցոյց տուեց իւր ընկերներին երկու դեռահաս ծաղիկների գալուստը, որոնք խանի գիւղը գալուց տեղեկութիւն չ'ունենալով, ուրախ, դուարթ, ասելով, ծիծաղելով եւ թուշկոտելով գիւղն էին մտնում. երբ շաթիւրներին տեսան՝ իրենց մօտ գտնուած յարգանոցը մտան լեղապատառ: Օհանի սիրտը քիչ մնաց որ ձաքէր, երբ նկատեց, որ իւր աղջիկը եւ հարսը այս ձեւով գիւղն էին մտնում. բայց նա ինքն էլ գիտէր, թէ խեղճերը միամիտ էին: Խան Աբղալը մեղ ծանօթ մտածումների մէջ ընկղմած լինելով չ'տեսաւ նոցա գիւղ մտնելը, իսկ Ահմէն ուզում էր իրեն միտն ուտել, գէթ մի նշանով ցոյց տալ նրանց խանին, ջանքն

(1) Ոչխար կրեղու սեղին «բերասեղ» եւս անուանում գիւղացիք:

էր գործ դնում, բայց չ'յաջողեցաւ: Նորա, տալն ու եղբոր կինը, դաշտային գոյնզգոյն ծաղիկներով կուրծքերը զարդարած՝ գիւղական պարզ եւ ժամանակի պատշաճ հագուստներով, կաթի մեծ մեծ սափորները շալակած՝ սպասեցին մարագում, մինչեւ բազմութիւնը հեռացաւ այնտեղից, յետոյ տուն գնացին:

Շուշանի միամտութիւնը եւ անմեղութիւնը մի աղաւնու էր նմանում, նրան սիրում էին բացի գիւղական երկու երիտասարդներից, նաեւ մի քաղաքացի երիտասարդ, որին «խօճենց Գրիգոր» էին անուանում: Վերջինս՝ Օհանի խիստ սիրելին եւ մտերիմն էր: Օհանը քաղաք գնալիս միշտ նրանց տանն էր հիւր լինում. Շուշանն աւելի համակրում էր իւր համագիւղացի Բրսօյենց Աւագին. վերջինս նորա հօր լամենախելացի աշակերտն էր եւ իւր անուշ ձայնով ժամում տիրացութիւն էր առնում եւ օրուան մեծ մասը նրանց տանն էր անցկացնում, թէ Օհանից դասեր առնելու եւ թէ Շուշանի ներկայութիւնը վայելելու պատճառով, որպիսի երջանկութիւնից դուրկ էին միւս երիտասարդները եւ չափազանց նախանձում էին Աւագի այս յաջողութեան վերայ:

Խան Աբղալը նոյն աւուր երեկոյեան մեկնեցաւ և գիւղից, այս անգամ Օհանը գիւղում թողնելով ձանապարհին շաթիւր Ահմէն մօտեցաւ Խանին եւ նրա մտայոյղ գրութիւնը խանգարեց հետեւեալ կեղծ ու պատիւր խօսքերով.

— Խա՛ն, ստներիդ հողը լինիմ, ինչի՞ այդչափ մտածում ես. դու հիւանդանում ես, արդէն մաչուել ես բոլորովին. թող Ահմէն քո ցաւերն առնի, ի՛նչ փորձանք որ պատահի քեզ հետ, թող Ահմէն վերայ

Թափուի, միայն թէ նա ուրախ տեսնի իւր տիրոջը: Ես քո հաւատարիմ շունն եմ, Խա'ն, դարտերդ յայտնիք ինձ. հրամայի՛ր ինչ որ ուզում ես. ես կը կատարեմ քո պահանջները:

Խան Արզալին շատ դուր եկան Ահմէի այս շոյիչ խօսքերը: Մտածումի մէջ ընկղմուողներին եթէ մէկը յանկարծ նոցա խորհածներին համապատասխան գրոյցներով արթնացնէ, կարծում են, թէ հետները խօսողը ամենակարող է. նա կարող է դարման գտնել իրենց վշտերին, որքան էլ հետներ խօսողը մի թոյլ մարդ լինի. այս պատճառով ինչպէս մի խոր քնից արթընցած, Խանը հարցուց Ահմէից .

— Դու կարո՞ղ ես վարդիկին գտնել, Ահմէ. ես քեզ կը վարձատրեմ այնպիսի փառքերով, որ ողջ վասպուրականում ոչ ոք չ'ունենայ քո բախտաւորութիւնը:

— Ես նրանից աւելի լաւն եմ գտել, Խա'ն. հէնց էսօր անցաւ նա մեր մօտից, բայց դուք այնքան մտածումների մէջ ընկղմել էիք, որ չ'տեսաք նրան:

— Միթէ՞ դու տեսար նրան, վարդիկը գիւղումն էր, շո'ւն. ինչի չի յայտնեցիր ինձ: Խանը կարծեց թէ Ահմէն վարդիկի համար ասաց. «մեր մօտից անցաւ». քիչ մնաց որ սուրը հանէր եւ Ահմէի գլխին տար. Ահմէն հանդարտեցրեց նրան ասելով.

— Չէ', Խա'ն, գուլպաներիդ հողն ու մօխիբը լինիմ. վարդիկին չեմ տեսնել, այլ նրանից աւելի սիրուն Շուշանին, որի մօտ վարդիկը մի աղախին է:

— Շուշանն ո՞վ է, հարցուց Խանը:

— Օհանի աղջիկը, որի համար չեմ տեսել ես եմ կեանքումը. նա միայն արժանի է իմ տիրոջ սիրունին լինելու:

— Չէ', Ահմէ', չէ'. ես նրան չ'եմ կարող մոռանալ. ուրիշ ի'նչ երկնային հիւրի լինի քու ասածը, չ'եմ կարող նրան նմանեցնել:

— Բայց նա արդէն ձեռքից դուրս է եկել, Խա'ն. նրա վերայ մի' մտածի. եթէ դուք սրան տեսնէք, բոլորովին մտքից կը հանէք վարդիկին:

Այստեղ թողնենք Խան Արզալն ու Ահմէին, որ իրենց չար խորհուրդներովն զբաղուին. մենք վերադառնանք կրկին ի. գիւղը, ուր գիւղացիք իրար անցած բամբասուժ էին Օհանի բռնած ընթացքը: Իսկ Օհանը իւր ընական տաղանդովը աշխատում էր սպառնացող աղէտների առաջն սոնել, թէ գիւղն ազատելու սպառնացող վտանգից եւ թէ իւր սիրելի դուստրը: Նա լաւ էր հասկացել Ահմէի խորամանկ ընաւորութիւնը եւ իւր մասին ունեցած նախանձը:

Օհանի նիւթական համեստ վիճակը գերազանցում էր միւս գիւղացի' ըր վիճակից. նա իւր պապերի թողած առատ վարելահողերի շնորհիւ յատուկ մշակներ էր վարձել եւ երկրագործութիւնով էր պարսպում: Չմեռներն էլ գիւղական մանուկներին ուսուցանում էր իւր գիտցած ուսումը: Շուշանին էլ առանձին դասեր էր տալիս, որ ժամանակ իզական սեռը բոլորովին գուրդ էր գրել կարդալուց (\*):

(\*) Մրակից քառասուն տարի առաջ վաւ քաղաքում մի կիս միայն կար որ գրեչ եր իմանում. որիև դիմում եիև քաղաքի կանայք իրենց պակտուիս երիկներին կանակներ գրեչ արու համար, որպիսի կանակների օրիակները հրատարակել է կանայսակ Արիսակիս վ. Տեղակաց: Նամակագիր կնոջ ակունը Մարտնոս

Օհանի դրութիւնը խիստ վտանգաւոր էր . բայց նա հասարակ գիւղացիներէ նման չ'էր յայտնում իւր մտաւանչութեան պատճառը . կարիքը նրա մէջ հնարագիտութիւն էր գործ դրել : Նա քիչ խորհելուց վերջ մի լաւ միջոց գտաւ իւր աղջիկն ազատելու իմանի ձանկից : Գիւղացիք հաւաքուել էին տէր Մուշեղի մօտ եւ բամբաստում էին Օհանին . ամենից շատ խօսողն էր Մուկ Աւեկ, որն իւր արտառոց կերպարանքի եւ բնաւորութեան պատճառով այս անունն էր ստացել գիւղացիներից . նա ասում էր .

— Տօ՛, տէր-տէր, ինչի՞ չ'ես խօսում : Օհանը պարաստութիւն է տեսնում, որ քո մահից վերջը իւր աղջկան տէրտէր օծել տայ գիւղի վերայ : Ի՞նչ կայ որ, թող այսուհետեւ մի քիչ էլ կնիկներն անեն տէրտէրութիւն :

— Էդ ինչեր ես ասում, օրհնած, աղջիկն էլ տէր-տէր լինի՞ :

— Քո սուրբ կարգը գիտէ , որ այնպէս է . ապա ո՞վ էր տեսել, որ աղջկայ ձեռը գիր տային . մեղա՛յ, մեղա՛յ աւետարան էլ է կարդում . աղջիկն էլ կարդա՞յ . խօ՛ տէրտէր, վարդապետ լինելու չէ :

Երեցփոխանն ընդմիջեց նորա շողակրատութիւնները, այս խիստ նկատումներն անելով :

— Տօ՛, տնաքանդ, դու էլ բան ես ասում . նրա

կր . նա վարժուել էր այնպիսի արտառուչ ոճեր գործածել, որ պակոռիս ընթերցողների վերայ խիստ ջրխուր սպառնուրիւն էր քողնում . նա իւր գրչի ոյժով կարող էր շատ քարացած սիրտ պակոռիս կրիկներից դրամ քաշել եւ վսակ սակել :

եռուից հարիւրաւորներ են ընկել . մահաւանդ քաղ-քըցի Գրիգորը նրա պատճառով չի ուզում իսկի հեռանալ գիւղից . եթէ կարացին ազատել իմանի ձանկերից, նոքա մի օր թոյլ չ'են տայ, որ Շուշանը մեր գիւղում մնայ :

Տէր Մուշեղը քառասնամեայ եւ բարի բնավորութիւն ունեցող մի քահանայ էր . նա չը կարողանալով դիմանալ էն բամբաստանքներին՝ ասաց .

— Որդիներ՛ր, դուք տեղն ուրիշների մեղքն ինչի՞ էք առնում . բամբաստանք անելը խիստ վատ բան է, էն էլ Օհանի նման բարի մարդկանց բացակայութեան . դուք ինձ մօտ հաւաքուել էք խորհուրդ անելու եւ գիւղը իմանի սպառնացող վտանգներից ազատելու : Ի՞նչ պէտք կայ ուրիշի ընտանեկան պատուի վերայ խօսելու , դուք վախենում էք, որ իմանը վատ միտք ունի մեր գիւղի մասին, բայց ես հակառակն եմ խորհում, որովհետեւ երբ նա ուզենայ՝ կարող է ամեն բան անել, ամբողջ վասպուրականը նորա ձեռքին է . պէտք է որ ճշմարտութիւնն էլ չ'ուրանանք : Այս քանի ժամանակ է որ, նմանը չը լսուած հանգստութիւն ենք վայելում . եթէ մի քիչ խորհել գիտենանք, պէտք է խոստովանինք, թէ այս ազատութիւնը դարձեալ Օհանին ենք պարտական . որովհետեւ նորա իմանին սիրելի դառնալուց վերջ, բոլորովին հանգամանքները փոխուեցին : Դուք հանգիստ կացէք , յուսով եւ հաւատով գործներդ շարունակեցէք . կարծիք մի ունենաք, թէ այլեւս մեր տեսածները պիտի կրկնուին :

Գիւղացիները ո՛րով լսում էին տէր Մուշեղի խրատները եւ գործադրում էին, բացի Մուկ-Աւեկից, որ ամեն գործում իրան խառնում էր , մուկի նման

ապականել ջանալով խնդիրները. նա իր խելքին զօն էր տալիս ասելով.

— Չէ՛, տէրաէք-չէ՛. էտէնց բան չենք ուզում մենք, այսուհետեւ կամ Օհանը պիտի մնայ գիւղում կամ մենք. նա ուզում է իւր զաղտնի փռօտէստանութիւնը տարածել գիւղում.

Այդ թուականներում բողոքականութիւնը դեռ մուտ գործած չէր վանում, միայն թէ Պօլսից եկողները պատմել էին նոցա դաւանութեան եւ այն տեղի այս առթիւ տեղի ունեցած աղմկալից խնդիրների մասին, բայց Օհանի յայտնած ազատամիտ գաղափարները կասկածելի էին դարձրել նրան խաւարամիտ վարդապետների աչքին. թէեւ Օհանը ամէն օր եկեղեցուց, աղօթքից, սուրբերին խունկ ու մոմ վառելուց ու ծրխելուց եւ չէր մնում, այնուամենայնիւ երկրացիք նրան «փռօտատան Օհան» էին անուանում. բացի տէր Մուշեղից՝ բոլոր եկեղեցական դասը նրան թշնամի էր, սակայն կանի երգիւղից չէին համարձակում վրասնել նրան:

Տէր Մուշեղի քարոզից քաջալերուած գիւղացիք՝ երկու կուսակցութեան բաժնուեցան — Օհանեան եւ Մուկ Աւէեան. Բոսօյենց Աւագը այս ժամանակ հօրը կանչելու եկել էր. քիչ մնաց որ ձեռքի հաստ փայտով ջախջախէր Մուկ Աւէի գլուխը, երբ նա խիստ ակնարկութիւններ էր անում Օհանի մասին. սակայն թէ հօր եւ թէ տէր Մուշեղի ներկայութիւնը զսպել տունը նրա սաստիկ յուզմունքը: Տէր Մուշեղը երկար չը կրցաւ համբերել այս կծու ակնարկութիւնները լսելով, ուտտի եւ գոռաց.

— Աւէ՛, հերիք է գիւղը խառնես, կտրի՛ր ձայնդ

ու հեռացի՛ր այս տեղից. դու ի՞նչ իրաւունք ունիս ուրիշի ազատ կամքի վերայ բռնանալու. Օհանը պահանջե՞լ է, որ անպատճառ ձեռ աղջիկներն ու կնիկներն էլ կարդան. նա ի՞նչ որ ուզէ կարող է անել իւր տան հետ. նրան գիւղից դուրս հանելը քո կարողութիւնից շատ վեր է. հասկացա՞ր:

Մուկ Աւէն, որ իւր անուան տէր կենդանիից աւելի երկչոտ էր, ծակ էր սրտնում, որ մէջը փախչէր: Նորա փոքրիկ գլուխը, նեղ ճակատը, երկու դուրս չցուած աչքերը, որոնք ուզում էին փախչել նրա կերցցուած աչքերը, որոնք ուզում էին իրենց նախկին պարանքից, բոլորովին կորցրել էին իրենց նախկին վիճակը. կերպարանափոխուած դուրթեան մէջ հազիւ կարողացաւ վեր կենալ, բայց փոխանակ դրան կողմը գնալու, շփոթուած քայլերն ուղղեց դէպի սենեկի կարողացաւ վեր կենալ, բայց փոխանակ դրան կողմը գնալու, շփոթուած քայլերն ուղղեց դէպի սենեկի բուխարիկը, որը նոյն էամանակ բարեբախտաբար չէր վառվում: Ժողովուրդը դուրս ելաւ տէր Մուշեղենց վանից, մեծ մասամբ իրաւունք տալով քահանայի արդար զայրոյթին:

Օհանը լսում էր այս ամենը, բայց կարեւորութիւն չէր տալիս նոցա յիմարական բամբասանքներին. նա ամենի հետ սիրով եւ քաղցրութեամբ էր վարվում: Ամբողջ վասպուրականում Օհանին միայն արտօնութիւն չնորհած էր Սբդալ իմանը ձի հեծնելու եւ իրեն հետ ճամբորդութիւն անելու: Այսօր հեծաւ նա իւր ձին եւ խանի մօտ գնաց իւր խորհած հնարքը գործադրելու:

Սբդալ իմանը նկատելով Օհանի տխրութիւնը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, Օհան. ինչի՞ աղքատի տխրութիւնը ես:

— Խա՛ն, ոտներբիդ հողը լինիմ, իսկի մի հարցրու իմ վիճակից. սեւն եկել է տասն եւ հինգ տարեկան սիրուն աղջկանս՝ վերայ, որի գեղեցկութեան նմանը ամբողջ աշխարհումս չը կար: Այս քանի օր է, որ այտահարուել է, օրական երեք չորս անգամ ընկնում ու փրփրում է. խեղճ աղջիկս տանջվում է դեւերից:

Խան Արզալը սոսկում էր այտահարներից. նա բաւական համոզուել էր Ահմէի խօսքերից, եթէ նոյն ժամին Օհանը չը գնար մօտը, Խանը կրկին և՛ գիւղը պիտի գնար Վարդիկի ման եկած տեղերը դիտելու եւ Օհանի Շուշանին տեսնելու, որի մասին Ահմէն այնքան գովասանքով խօսել էր: Օհանի հնարագիտութիւնը բոլորովին խորտակեց Ահմէի սարքած դաւադրութիւնը: Խան Արզալն այնուհետեւ աւելի աներկիւղ կարող էր գնալ դժոխքը, քան թէ և՛ գիւղը: Նա այսպէս յուսադրեց Օհանին.

— Աստուած մեծ է, Օհան, հոգ մի անի. նա շուտով պիտի ազատուի այդ հիւանդութիւնից. ես մի զբաւաց դաւրէչ եմ ճարել, որ շարունակ պատերազմում է դեւերի հետ. ինչ բան որ հարցնես, ճիշդը կը պատասխանի. ես նրան կ'ուղարկեմ, թող գայ ձեր գիւղը եւ բժշկէ աղջկանդ:

Խան Արզալը դաւրէչներին շատ հաւատ էր ընծայում:

— Գիտե՞ս, Օհան, աւելացրեց Խանը. գէվըրչը մի քիչ ջուր է ածում պնակում, որին որ կամենաս նրա կերպարանքը կարող է երեւացնել ջրում, բայց ինքը մինակ է տեսնում ու պատմում: Ես այսօր երկու աղջիկների անունը տուի նրան, մի քիչ արարե-

րէն աղօթքներ արտասանելուց յետոյ, սկսեց յայտնել նոցա հասակը, կերպարանքը, մինչեւ անդամ աչքերի դոյնը: Ձեր գիւղում ուրիշ ի՞նչ աղջիկ կայ, որի աչքերը խօժ է, մազերը շէկ, երեսի վերայ փոսիկներ են երեւում, երբ նա խօսում կամ ծիծաղում է:

— Այդ իմ Շուշանն է, պատասխանեց Օհանը, իսկոյն հասկանալով թէ Ահմէն պատմած կը լինի Շուշանի մասին եւ դաւրէչի միջոցով էլ այս խորամանկութիւնը սարքած, որովհետեւ այսպիսի հրաշագործութիւնները շատ անգամ դաւրէչներին միջոցով գործել էին տալիս Խանի խորամանկ ծառաները:

Խան Արզալը բոլորովին վստահութիւն ունեցաւ Օհանի անկեղծութեան մասին. նա յայտնեց նրան, որ Ահմէն յայտնել էր այս գաղտնիքը: Օհանը այս հնարագիտութեամբ ապտեց թէ լեղապատառ գիւղացիներին եւ թէ Շուշանին Խա՛ն ճանկերից. եւ որպէս զի ամեն ոք հաւատար այս շինծու լուրին, օրական մի քանի անգամ ուշաթափվում էր Շուշանը:



Աշուն էր. էջմիածնայ վանքը շրջապատուել էր ջերմեռանդ ուխտաւորներով, որովհետեւ նոյն օրը կաթողիկոսն եպիսկոպոսներ ձեռնադրելու օժման հանդէսը պիտի կատարէր: Այդ բազմութեան միջից երկու Վանեցիներ եկեղեցու հարաւային պատի տակը նստել էին. նրանցից մինը մի սիրուն աղջիկ էր, իսկ միւսը մի գեղեցկատես երիտասարդ, նոքա չէին խառնվում

երբէք բազմութեան, որոնց հազուատներից պարզապէս երեւում էր, որ նոքա վանի գիւղերից էին. որոնք գաղթականներին յատուկ եղած խեղճուկրակ վիճակով կծկուել էին: Ս. Տաճարի որմի առջևն եւ աղօթում էին: Հեռուից երեւանեան տարազով մաքուր հագուած մի երիտասարդ տեսնելով օտարականներին, թողեց իւր հետ խօսող ընկերներին եւ ակամայ քայլերն ուղղեց դէպի անձանութները, կարծես նոցանում քաշողական զօրութիւն լինէր, որով այս երիտասարդին իրենց կողմը քաշեցին: Երիտասարդը քանի մօտեցաւ նրանց, այնքան աւելի շատացաւ իւր յուզմունքը. նա ճանաչեց գաղթական զոյգին, եւ առանց բարեւելու, փաթաթուեց նրանց վրով: Նղնղենց Մուրադն էր վերջինս, հոգի Միսոյի փեսան: Մարօն ճանաչեց նրան, որովհետեւ նա այժմ իւր մօրաքրոջ աղջկան Վարդիկի էրիկն էր եղել: Միմեանց համբուրելուց եւ յուզմո՛նքնեան անցկենալուց յետոյ, հարցուց Մուրադը.

— Մարօ՛, (այսպէս էր նրա անունը) դու Աւագի հետ մինա՞կ ես եկել:

Մարօն ամօթից շիկնեց, եւ մատների հետ խաղալ սկսեց: Մուրադը հասկացաւ նոցա այնտեղ հասնելու պատճառը, բայց ուրախութիւնից մղուած միշտ հարցեր էր անում նրանցից՝ և գիւղի վիճակից. նա մոռացաւ մինչև անգամ յայտնել նրանց, որ Վարդիկն էլ հետն էր բերել հանդէսը տեսնելու, մինչև Մարօն հարցրեց.

— Մուրա՛դ, դուք այժմ այստե՞ղն էք բնակվում. Վարդիկն ինչպէ՞ս է, մօրաքոյրս, երախաները լա՞ւ են:

— Հա՛, ես մոռացայ ձեզ ասելու, որ Վարդիկն

էլ հետս է. մենք մի սիրուն երախայ էլ ենք ունեցել, նոքա մեր նոր բարեկամի, այս գիւղացի Օհանեանց ասն են, դէ՛՛ գնանք, Մարօ՛, Վարդիկը շատ պիտի ուրախանայ երբ քեզ տեսնէ. նա միշտ քո մասին էր խորհում, շատ էր վախենում քեզանից. փոքր Աստուծոյ, որ ազատուել էս քրդերի ձեռքից:

Մուրադը իւր հիւրերին առաջնորդեց Օհանեանց տունը, եւ ներս մտածին պէս՝ բարձր ձայնով կանչեց.

— Վարդի՛կ, ի՞նչ կըտաս ինձ, որ քեզ մի ուրախուր տամ:

Վարդիկը՝ իւր սովորական քաղցրութեամբ ժպտեց, եւ երախան գրկից երկարցնելով դէպի Մուրադն՝ ասաց.

— Ահա՛ Լեւո՛ իս համբուրիր, սրանից աւելին ի՞նչ ես ուզում:

— Ուզո՞ւմ ես մօրաքրոջդ Մարօյին տեսնել, ասաց Մուրադը եւ, սենեակը մտցրեց Մարօյին եւ Աւագին միասին, ուր առանձին նստել էր Վարդիկը եւ Լեւոնիկի վերայ զուարճանում էր մայրական խանդաղատանքով:

Վարդիկը՝ իւր աչքերին չէր հաւատում, երբ տեսաւ Մարօյին աւելի գեղեցկացած եւ հասակը բարձրացած՝ քան որ ինքը տեսել էր նրան և գիւղում. իսկ Մարօն դադաղնամ սրտով եւ ուրախութեան արտասուքն աչքերում՝ գրկեց Վարդիկին. իսկ Լեւոնիկը նորա գրկից, մէկ երեխին էր համբուրում, մէկ էլ մօրը:

Վարդիկն ինչպէս երազից նոր սթափված՝ փաթաթուեց մօրաքրոջ... աղջկան վրին, էլ չէր ուզում բաժանուել նրանից: Նա դեռ չէր նկատել Աւագին, որը

Մուրադի հետ դիտում էին մօրաքրոջ աղջիկները գրկախառնութիւնը: Նոքա երկար համբուրուեցին, գրեթէ խելքերը կորցնելու չափ, մինչեւ Մուրադը մօտեցաւ եւ իւր սովորական զուարճախօսութեամբ բաժանեց նրանց, ասելով:

— Դուք միմեանց կրծեցիք, էլ ի՞նչ բաժին թողիք մեզ. իմացել էք որ էջմիածնում շատ մեռոն կայ, բայց մեծերի երեսները չեն քսի:

Այս բարձր եւ ուրախական ձայները լսելով Օհանի ընտանիքը հիւրանոցը մտան, երբ արդէն հանդարտել էին Մարօն եւ Վարդիկը, եւ միմեանցից դանազան հարցեր էին անում, ներկայ եղողները զարմանում էին մօրաքրոջ աղջիկների միմեանց նամանութիւն ունենալուն վերայ, կարծես նոքա երկուորեակ ծնած լինէին:

Վարդիկը շատ ուշ ձանաչեց Աւագին, որը Մուրադի մօտը նստել էր. նա Մարօյի ականչին մօտեցնելով բերանը՝ հարցրեց:

— Պոսոյենց Աւագը չի՞ Մուրադի մօտ նստողը: Մարօն ամբողջ անգամներով կարմրեց, եւ գլուխը վար կախելով՝ սկսեց յատակի վերայ փռուած կապերտի հետը խաղալ: Վարդիկը գուշակեց դադանիքը, որի համար նոքա մինչեւ էջմիածինն էին հասել, նա դանախով դէպի Աւագն, ասաց:

— Աւագ ջա՛ն, որքա՞ն ես մեծացել, ես քեզ չը ձանաչեցի, դու էլ բարով ես եկել:

Աւագն ամօթից չէր կարող գլուխը բարձրացնել եւ Վարդիկի երեսին նայել:

— Ե՞րբ կարող եմք տեսնել մօրաքրոջ, հարցուց Մարօն:

— Նոքա երեւանումն են. մենք էգուց ճաշից վերջ միասին կը գնանք այնտեղը. խեղճ մայրիկս, երբ քեզ տեսնէ որքա՞ն պիտի ուրախանայ. մեր ամենիս երկիւղը դու էիր, Մարօ՛. մայրս միշտ ասում էր, արդեօք ի՞նչ եղաւ Մարօն:

Վարդիկը միշտ հարցեր էր անում Մարօից, թէ գիւղի աղջիկներից որն է մարդի գնացել, որն է մնում, ո՞վ է մեռել, ո՞վ է մնացել. իսկ Աւագը իւր ներքին խղճի հետը պատերազմում էր. նա այժմ մտքով սլացել էր իւրենց գիւղ եւ այն արարածի քաղցր սիրոյ յիշատակներով ընկղմել էր, որին իւր հողու բոլոր զօրութիւնով սիրում էր, նորան այնպէս էր թւում, թէ նա այժմ քրքրելի ճանկումն է տառապում. նա չէր կարողանում շարունակ Մուրադի հարցերին պատասխանել. մէկ կողմից ներքին մտքերը էր տանջվում, միւս կողմից քաղցածութիւնից էր նուազում: Նա մեծ զոհողութեամբ էր յանձն ատել Մարօին մինչեւ այդտեղը հասուցանելու: Նրա զրպանում հաղիւ թէ մի քանի դուռներ էին մնացել, չ'էր կարող մուրալ, իսկ գործ անելու համար ժամանակ էր հարկաւոր, որ տեղական սովորութիւնների հետ ծանօթանար: Մուրադը նկատեց, որ նոքա քաղցած էին եւ Հայաստանի սովորութեան համաձայն խնդրեց իւր բարեկամ Օհանի կին Սօնայից, որ ակրատի պատրաստութիւնը տեսնէր: Ակրատից յետոյ երեւանի պտուղներն էին վայելում նորեկ հիւրերը: Ահա պատարագի զանգը հնչեց. Մուրադը չէր ուզում, որ իւր բարեկամներին այն հագուստներով տանէր երեւան, ծառային երեւան ուղարկեց եւ երկու ձեռք մաքուր հագուստներ բերել տուեց Աւագի եւ Մարօյի համար: Մարօն նոր հագած

հագուստներովն աւելի սիրունցաւ, իսկ Աւագը չէր ուզում իւր շորերը փոխել, նա ցանկանում էր միշտ իւր սովորական հագուստներով մնալ. հաղիւ թէ Մուրադի եւ Վարդիկի աղերսանքներին զիջելով՝ հազաւ: Այսպիսի զգեստներին անվարժ լինելով կարծում էր, թէ չլիթայել էին իրեն:

Այն ժամանակուայ կարգալ չը գիտցող մարդիկ շատ ճիշտ պահում էին տօնական օրերի հաշիւները, նոքա իմանում էին, թէ տարին քանի՞ օր պահք են պահում, ամսի ո՞ր օրն է ընկնում Ձատիկը, Վարդափառը եւ կնաչի տօները. այս հաշուով էլ անսխալ կատարում էին տօնական հանդէսները: Աւագը մանրամասն պատմեց Մուրադին, թէ ի՞նչպէս եւ ո՞ր ճանապարհներով հասել էին մինչեւ այնտեղ. նոքա քոյրեղօր նման անարատութեամբ շարունակել էին իրենց ճանապարհը և գիւղից մինչեւ էջմիածին:

Մարօն անհամբեր սպասում էր Մուրադի հրամանը լսելուն. այն օրը շատ երկար տեւեց նրան. նա փափաքում էր մի վայրկեան առաջ տեսնել իւր սիրելի մօրաքրոջ եւ նրա զուակներին, իսկ Աւագն ուզում էր հէնց այնտեղից վերադառնալ երկիրը: Նրա սիրտն այնպէս էր զգում, թէ իւր սիրելի Օհանի Շուշանը վիզը ծռած իրեն է նայում. աղաչում է, պաղատում է, որ իրեն էլ տղատի քրդերի ձեռից: Այս մտածումներն աւելի ծանրացան նրա խղճի վերայ, երբ երեւան հասնելով տեսաւ Ըոէս Մխոյեանց վայելած երջանիկ եւ ազատ կեանքը. նա հետզհետէ իւր մտքում ընդարձակ ծրագրեր էր պատրաստում, բոլորովին մոռանալով Մարօի հետ ամուսնանալու միտքը:

Ըոէս Մխոյեանք խիստ շատ պատուով էին վերա-

բերվում իրանց նորեկ հիւրերի հետ: Աւագի եւ Մարօի մի շարաթ երեւանում մնալուց վերջը, Մուրադը հարկաւոր էր համարում նոցա հարսանիքի պատրաստութիւնները տեսնել. մանաւանդ Յարօյի կին Սրբիկը շարունակ ստիպում էր Մուրադին եւ Վարդիկին, որ չուտով կատարէին հարսանիքը. նա ասում էր.

— Աւագը նեղոււմ է. նա միշտ տխուր է, մեղք է, որ նրանց զատ պահենք միմեանցից. խեղճերն ափօթից իրար հետն էլ չեն խօսում: Բայց Աւագը պակուկու վերայ խկի չէր մտածեր. մինչեւ Մուրադը յիշեցրեց նրան, յայտնելով՝ որ երեք օրից վերջը պտակները կատարուելու է: Աւագը փոխանակ ուրախանալու՝ լաց եղաւ. Մուրադը կարծում էր՝ թէ նա ուրախութեան արտասուք է թափում, մինչեւ որ այս խօսքերը լսեց:

— Մուրա՛դ, քեզ առանձին խօսքեր ունիմ ասելու. ես իմ կսկծից մեռնում եմ, ասաց Աւագը:

— Կսկի՞ծ անելու ի՞նչ խնդիր կայ, Աւա՛դ, երբեւի դու հարսանիքի ծախսերի մասին ես խօսում. ես ո՛չ միայն ձեր ծախսերն են վճարում որպէս կնքահայր, այլեւ ձեր ապրուստի համար էլ պատուաւոր գործ էլ եմ գտել:

— Այդ չէ իմ կսկիծը, Մուրա՛դ, այս ժամուն մի հոգի էլ կայ և. Գիւղում, որ ինձ է սպասում. այժմ ի՛նչ դրութեան մէջ է Ստտուած գիտէ, պատասխանեց Աւագը:

Աւագը Մուրադին էր յայտնում իւր գլխին եկածը, իսկ Մարօն՝ Վարդիկին՝ առանձին սենեակներում:

— Ուրեմն քու վերջնական միտքն ու որոշումն  
ի՞նչ է, հարցրեց Մուրադը:

— Ես վճռել եմ վերադառնալ հայրենիք. թէ  
նրան եւ թէ ծնողներին հետս բերելու, պատասխանեց  
Աւագը:

— Դու հրաժարւո՞ւմ ես Մարոյի հետ պսակուե-  
լուց:

— Այդ հարցը Շուշանին է մտում լուծելու. ես  
առաջ նրան էի խօսք տուել. բայց երկուսին էլ հա-  
ւասարապէս եմ սիրում. թող նոքա գան միասին ու  
վիճակ դցեն կամ համաձայնին միմեանց հետ, այսքան  
միայն եմ կարողացել միջոց գտնել վիշտերս դարմա-  
նելու մասին. էլ ուրիշ ճար չ'ունիմ:

— Ես սոսկում եմ մինչեւ անգամ միջամտելու այդ-  
պիսի ծանրակշիռ խնդիրներում. Աւա՛գ, դու այդ մա-  
սին առաջ պէտք է խորհած լինէիր, իսկ այժմ շա՛տ  
ուշ է. դու Մարոյի հետ մօտ երկու ամիս կը լինի որ  
ապրել ես, էլ ո՞վ պիտի խնդրի նորա ձեռքը, դու նրա  
մահուան պատճառը պիտի դառնաս, եթէ նա իմանայ  
քու այս մտադրութիւնը:

— Բայց ես նրան իմ քրոջ նման եմ հասցրել  
մինչեւ այս տեղը, թէեւ նա ինձ սիրում է, սակայն  
եւ նրան քրդերի ձեռքից ազատելու միակ պարտա-  
կանութեամբ յանձն առի ինձ այս դժուարին դրու-  
թեան ենթարկելու:

— Ուրեմն դու Մարոյին նախապէս չէի՞ր սիրում:

— Եղելութիւնը ճշմարտութեամբ պատմեցի քեզ,  
եթէ դու ինքդ լինէիր իմ տեղը, ի՞նչ կ'անէիր:

Մուրադը մտածումների մէջ ընկաւ. նա խորհում  
էր. ի՞նչպէս համոզել Աւագին. ի՞նչպէս հասկացնել եւ

այս միտքը Մարոյին: Եսա խորհելուց վերջ՝ մի մի-  
ջոց միայն գտաւ համոզելու Աւագին, որ նա քաղցրու-  
թեամբ յայտնէր Մարոյին, որպէս թէ ինքը վերա-  
դառնալու է հայրենիք իւր ծնողներին փոխադրելու  
համար եւ նոցա ներկայութեան հարսանիքը կատա-  
րելու: Աւագը չէր ուզում խարել Մարոյին, բայց Մու-  
րադը համոզեց նրան:

Ընէս Միսոյենք խիստ գաղանի պահեցին այս ե-  
ղելութիւնը, նոցա հետ յարաբերութիւն ունեցողներն  
այնպէս էին հասկացել, թէ Աւագն եւ Մարօն քոյր ու  
եղբայրներ էին եւ Նուբար խաթունի քրոջ որդի-  
ները, այս պատճառով էլ շատերը փափաքում էին Մա-  
րոյին հարս տանել իրենց որդիներին համար, որովհե-  
տեւ նրա նման գեղեցիկ աղջիկ չէր ճարվում ողջ Ե-  
րեւանում. Վասպուրս կանի անապահան օջն ու ջուրը  
չ'նորհել էին նրան գլեցիկ գոյն եւ տեսք, ինչպէս  
աշխարհումս նման չը գտնուած Արտամէտի խնձո-  
րին, որի բացի կարմիր գոյնից՝ որ ախորժակ է գըր-  
դրում, ա՛նուշ հոտը տարածվում է մի շինութեան  
ամբողջ շրջակայքը, այդպէս էլ Մարոյի համն ու հոտը  
շուտով տարածուեց Երեւանում. բայց նրա սիրտը կա-  
րելի չ'էր շուտով կտրել տալ Աւագից:

Երկու ամիսներ կ'անցնէին, որ Աւագը Երեւա-  
նից հայրենիք էր վերադարձել. Մարօն ամեն օր նրա  
ճանապարհն էր սպասում անհամբեր: Նա երկար տա-  
րիներ կարող էր այսպէս համբերել եւ սպասել, բայց  
Մուրադն եւ Վարդիկը համոզեցին նրան, յայտնելով՝  
որ Աւագն այլեւս չ'էր վերադառնալու, որովհետեւ Ե-  
րեւանի հարիւրաւոր երիտասարդները խնամախօսներ  
էին ուղարկում Մարոյի ձեռքը խնդրելու համար. Վար-

գիկը համոզեց Մարոյին եւ Գեղամենց զարգացած Գեղամի հետ ամուսնացրեց նրան: Աւագի ուշանալը համոզեց նրան, որովհետեւ նա խմանում էր որ Շուշանի սիրոյ համար էր վերադարձել Աւագը հայրենիք:

Թէ ինչպէս Աւագ եւ Մարոն մինչեւ այստեղ էին հասել, պատմենք մեր ընթերցողներին:



Մի քանի տարի անցել էր, Լ. գիւղի վերաշինութիւնից: Աշուն էր. գիւղացիք վերջացրել էին իրենց դաշտային եւ կալային գործերը: Կալիորկոտի շաբաթն էր. ամեն տուն պատրաստութիւններ էր տեսնում հարիսայ եփելու, որ Սուրբ Գէորգ զօրառարի ասունը կատարելուց յետոյ գաղաներով, խորովածներով, գինիով, օղիով եւ ամեն տեսակ բարիքներով բեռնաւորուած վարագայ վանքն ուխտի գնային: Լ. գիւղի բնակիչներէն շատերն էլ այս նուիրական ուխտը կատարելու գնացին. ոմանք ամբողջ ընտանիքով եւ ոմանք մի քանի հոգի տանը թողնելով: Տուն չ'էր մնացել, որ իւր ներկայացուցիչը չ'ունենար վարագում. Օհանի որդի Վահանը եւ իւր կին Շողիկը Շուշանին էլ հետները տարան. նոքա չ'էին խառնվում ուխտաւորներին, Շուշանի ծանօթ հիւանդութեան պատճառով, որպէսզի ուրիշներն էլ չ'վարակուէին այս ստակալի ախտից, միայն Աւագն էր որ ընկերացել էր նրանց, թէեւ նրա հայրն եւ մայրը համոզում էին նրան, որ այլեւս չը յաճախէր Օհանենց տունը, բայց

նա պատճառ էր բերում իւր սիրած ուսումը, համոզելով նրանց, որ չը վախենային այդ տեսակ հիւանդութիւնից, որովհետեւ աներկիւղ մարդուն չի պատահում այդ տեսակ հիւանդութիւններ: Ծնողքն իմանում էին Աւագի միտքը, նրա համար էլ չ'էին ուղում կոտորել իրենց զաւկի սիրտը, Օհանի ընտանիքը մի մղոնաչափ հեռու էր մնում ուխտաւորներից, իսկ վանքում բոլորովին առանձին մի խուց տեղաւորուեցան: Գիւղացիներն իմանում էին, որ լուսնոտութիւնից բռնուողն չի առողջանում բժիշկների դեղերով. նա մինչեւ մահը տանջում է իւր զոհին, միայն թէ հըրաշքով բժշկուելուն խիստ մեծ հաւատ էին ընծալում. Շուշանը վիզը ծուռ նայում էր դէպի իւր ընկերուհիները, որոնք նոյնպէս ցաւում եւ աղօթում էին նրա առողջութեան համար, որովհետեւ երկար ժամանակ էր, որ տանից դուրս չ'էր եկել Շուշանը, այդ պատճառաւ նրա կեղարանքը աւելի ճերմակելու սիրունցել էր. ամեն ոք մատնանիչ էր անում նրան, գովասանելով նրա անհուն գեղեցկութիւնը, աստալով միանգամայն, որ նա այնպիսի մի հիւանդութեան էր ենթարկուել, շատ երիտասարդներ զարմանում էին Աւագի ուրախութեան վերայ. նա առջնում էին Սուրբ ուրախութեան վերայ. նա առջնում էր նման այլեւս ախտը չ'էր, «ուրեմն նա չի սիրում Շուշանին, սուտ է եղել այն տարածայնութիւնները, ուրեմն ինչի՞ չի գատվում նրանից», ասում էին:

Արգարեւ Աւագը գիւղական ամեն խմբերի մէջ մանում, ուրախութիւններ էր անում եւ եկեղեցումն էլ աշխոյժ եռանդով երգում էր. նա ամբողջ ուխտաւորների թւում միակ սիրուն ու գեղեցկագէժ երիտասարդն էր. գլխին դրել էր ճերմակ քոլոզը, շուրջը

փաթաթած Պարսկաստանի մետաքսեայ գոյնզգոյն թաշկինակները, շատախի նուրբ շալերից պատրաստած հագուստը՝ խիստ գեղեցիկ յարմարուել էին նրա պարթեւ հասակին: Այս խայտաճամուկ տարազով՝ Աւազը մի գեղեցիկ իշխանազնի էր նմանում:

Գիշերից երեք ժամ անցել էր. Աւազը դուրս ելաւ վանքից եւ գնաց նորա Հիւսիս-Արեւելեան մացառապատ բլրի վերայ գտնուած «վերին աւազան» կոչուող աղբիւրի շուրջը պտտելու:

Նա ման էր գալիս եւ մեղմիկ երգեր էր երգում. յետոյ մօտեցաւ աղբիւրի պաղորակ ջրից խմելու. ետեւից երկու փափուկ ձեռքեր մերձեցան նորա ուսին, նա գլուխը ետեւը դարձրեց եւ լուանկային լոյսի զօրութեամբ ճանաչեց մի ծանօթ դէմք, որը ծիծաղելով հարցրեց.

— Վախեցա՞ր, Աւազ:

— Ինչի՞ց վախենամ, հպարտութեամբ պատասխանեց Աւազը եւ բոպէական լուծիւնից յետոյ՝ հարցրեց. Դու գիշերով ի՞նչ ես շինում այտեղ, Մարօ:

— Քո անուշ ձայնը լսեցի՝ եկայ. ես կարծում էի թէ Շուշանն էլ քեզ հետ է. ա՛խ որքան սիրում էի ես նրան, բայց ծնողքս չեն թողնում այժմ, որ մօտն երթամ եւ մխիթարեմ իմ սիրելի ընկերուհուն, ասաց Մարօն եւ սկսեց լաց լինել:

— Դու չե՞ս վախենում նորա հիւանդութիւնից, հարցուց Աւազը.

— Ինչի՞ վախենամ. նա հրեշտակի նման մի աղջիկ է, շատ բախտաւոր է, որ քեզ նման մի գեղեցիկ աղամարդի իւր մօտն ունի. միթէ ես քեզնից աւելի՞

եմ, Աւազ. եթէ դու էն հիւանդութեան ենթարկուիս, թող ես էլ ենթարկուիմ, ասաց Մարօն:

— Բայց նա Սուրբ Խաչի հրաշագործ զօրութեամբ պիտի առողջանայ, Մարօ. ասաց Աւազը եւ երկիւղած ջերմեռանդութեամբ խաչակնքեց երեսը:

— Ասում են, որ էն ախոր խիստ վատ հիւանդութիւն է, նրանից բռնուողը չի առողջանում, Աւազ. դու ախոս ես, քեզ նման երիտասարդները քիչ են ճարուում մեղանում. մենք՝ աղջիկներս թող մեռնինք. հոգուդ մատաղ, Աւազ, զգոյ՛ջ կաց, չ'լինի թէ վարակուիս:

— Թող ես էլ վարակուիմ, խօ՛ Շուշանից աւելի չեմ, պատասխանեց Աւազը:

— Ա՛խ, Աւազ, այդպէս մի՛ ասի. թող Մարօն կուրանայ, չ'տեսնէ Աւազն այն հիւանդութեան ենթարկուելիս: Մարօն կակծից կը մեռնի, եթէ՛ Աստուած ոչ անէ, դու այդ հիւանդութեան ենթարկուիս:

— Ո՞ր Մարօն, հարցուց Աւազը:

— Այն, որ խօսում է քեզ հետ, որ երկու տարուց ի վեր գիշեր ցերեկ քո անպատում սիրով խորովում է:

Աւազը շուարեց, մի անելանելի գրութեան մէջ ընկաւ, որովհետեւ Մարօն էլ իրենց գիւղի ամենագեղեցիկ աղջիկներից մէկն էր եւ պատուաւոր ծնողների զաւակ, որն այժմ իւր ձեռները խաչածու սրտին դրած՝ արտասուում էր: Երկուքն էլ լուռ էին, բայց Մարօն Աւազի լուծիւնը խզեց:

— Աւա՛զ, աղատի՛ր ինձ իմ գտնն ամանջանքներից, կամ ձեռնովդ սպանի՛ր ինձ ու այտեղ թաղի՛ր, որ եման Արդալի ձեռքը չ'ընկնիմ ես. մեր գիւղում

քե՛զ միայն եմ սիրում ես. գիտեմ՝ դու էլ Շուշանին ես սիրում, բայց Շուշանին սիրողները շատ են. թող քաղքցի Գրիգորն ամեն նրան. նա էլ խեղճ է, նա նրա սիրովը խելագարվում է. խօսք տուր ինձ, Աւագ, սիրո՞ւմ ես ինձ, թէ չէ: Եթէ դու մերժես ինձ, ես հէնց այսօր ինձ պիտի խեղդեմ, էլ առաւօտ ողջ չ'ես տեսնի ինձ. ես չեմ ուզում իմ լոյս հաւատն ուրանալ:

Աւագը չ'էր կարողանում թշուառ աղջկան մի մխիթարական պատասխան գտնել. շատ ճիշդ էին նրա ասածները. քրդերն ուզում էին նրան փախցնել. երեք տարի էր, որ ծնողքը նրան պահել էին իրանց գիւղից հեռաւոր Ա. գիւղում: Խան Արդալի անզգամ շաթիր Ծաւէշը հոտ առել էր, որ Մարօին Ա. գիւղում թաղցրբել էին. նոյն շաբաթը լուր էր ուղարկել նրա ծնողներին, որ Մարօյին ուղարկէին իրան, ապա թէ ոչ՝ Լ. գիւղի պատիժը կը թափէր եւ Ա. գիւղի վերայ:

Աւագը խիստ յուզուեց Մարօյի սրտատուջ աղերսանքից, բաւական խորճելուց վերջ՝ պատասխանեց:

— Մարօ՛, ես հաւատում եմ, որ դու ինձ անհունապէս սիրում ես, բայց չ'եմ կարող խաբել քեզ, թէ պիտի կարողանամ խօսք տալ քեզ սիրելու, որովհետեւ հէնց այս պահուն սպասում է ինձ մէկը, որի կեանքն ու պատին էլ վտանգի տակ է. եթէ ես նրան առաջուց խօսք տուած չ'լինէի եւ նա քաղքցի Գրիգորին մերժած չ'լինէր, իմ սիրելին դու կը լինէիր. հասկացար անշուշտ, թէ որի համար իմ ակնարկում:

— Շուշանը՞. նա ինձ շատ է սիրում. նրա հիւանդութիւնն ազատեց նրան իմանի ճանկերից. եթէ դու պատմես նրան, նա թոյլ կ'տայ քեզ, որ ինձ սիրես. նա այն քարասիրտ աղջիկներից չէ, որ քեզ իւր

սիրոյ կը քերին զո՛հ անէ. երանի՛ թէ՛ ես էլ այն հիւանդութիւնը ունենայի եւ ազատուէի այն անօրէնների ձեռքից, ասաց Մարօն եւ Աւագի առջեւը ծունկ չոքեց:

— Ինձ մի յուզեր, Մարօ՛, աղաչում եմ. ես մի կերպ աշխատում եմ քեզ էլ աղատել այն անհաւատների ձեռքից: Եթէ գիւղը վերագոռնանք, այն ժամանակ լուր կ'ուղարկեմ քեզ:

Մարօն՝ այս խօսքերը լսելով, չոքած տեղից խլեց Աւագի ձեռքերը եւ կրակի նման այրուող շըրթուները նրա աջ ձեռքի վերայ դրօշմեց, ասելով.

— Դու բարեսիրտ ես, Աւագ. դու խօսք ես տալիս ազատելու ինձ այս անելանելի վիճակից:

Մինչդեռ Մարօն անհամբեր համբուրում էր Աւագի ձեռքը, անա մերձակայ մացառից դուրս թռաւ մի այլ աղջիկ, աշնան չորացած տերեւները կոխտակելով: Շուշանն էր դա, որը գալ ինչ գալով պահ էր մտել եւ նոցա բոլոր խօսակցութիւնները լսել: Աւագը տեսաւ նրան՝ քիչ մնաց, որ ամօթից ուշաթափուէր. իսկ Մարօն ուրախութեան աղղեցութիւնից գինովցած՝ չիւմացաւ, թէ ի՛նչ կատարուեց իւր շուրջը, մինչեւ Շուշանի այս խօսքերը լսեց:

— Աւագ, այս բոլորից սկսած՝ հրաժարվում եմ ես քեզանից. այսուհետեւ Մարօն պիտի լինի քո սիրելին, ես իմ սէրը զոհում եմ նրան, դու խօսք տուր նորան, երբ նա այսքան տանջվում է քեզ համար. այս իսկ պահուն ա՛ն ու փախիր Ռուսաստան, աղատի՛ր խեղճին այն անհաւատ ու պիղծ քրդերի ձեռքից. իմ մասին մի՛ մտածի. իմ կեանքն արդէն ապահոված է:

Աւագի դրութիւնն անտանելի դարձաւ. երկու



եկել փնտուելու Շուշանին եւ Աւագին, նոյնպէս փընտրուում էին Մարոյի ծնողները՝ Գալօն եւ Փետիբօն իրենց աղջկան :

Սոքա թող փնտուն իրենց որոնածները, իսկ մենք դառնանք վերին աւագանի վերայ, ուր թողեցինք շուարած վիճակի մէջ Աւագին եւ Մարոյին :

Շուշանի մեկնելուց յետոյ, Աւագը երկար ժամանակ դիտում էր նրան, մինչեւ նա անյայտացաւ. տակաւին բռնած լինելով Մարոյի ձեռքը նորապսակ հարս ու փեսի նման: Մարօն իւր ամբողջ մարմնովը դողդողում էր, իսկ Աւագը կարծում էր, թէ կատարուածը երազ էր. նորա սիրտը հեշտութեամբ չէր կտրվում Շուշանից. քառորդ ժամաչափ այս գրութեան մէջ մնացին նոքա, մինչեւ որ Մարօն հաւաքեց իւր թուլացած ուժերն եւ ասաց.

— Տեսա՞ր, Աւագ, ես քեզ չ'տախ՞, որ Շուշանը բարեսիրտ է. նա թոյլ կ'աայ որ ինձ սիրես. այժմ ի՞նչ ես ուզում անել. պիտի յարգե՞ս նրա կամքը:

— Այո՛, պատասխանեց Աւագը. ես նրան եւ թէ քեզ հաւատարմապէս եմ սիրում, ես միշտ նրա հրամանները յարգել եմ. բայց այս վերջինը սոսկալի էր, Մարօ. ես չ'եմ կարող մոռանալ նրան, չ'եմ էլ կարող քեզ այս վիճակում թողնել. գնա՛նք, եթէ Աստուած այսպէս էր կամեցել, թող նորա կամքն օրհնեալ լինի:

— Ես քեզ խլեցի նրանից, Աւագ, ինչպէս երեւի՛ դու խղճահարվում ես. խեղճ Շուշան. իմանում էր, որ դու էլ պիտի վարակուէիր, թէ քո եւ թէ հաւատի սիրոյ համար ամեն բան զոհեց նա. բայց ես սոսկում եմ, Աւագ, այլեւս ոտներումս կարողութիւն չի մնացել. ես մոռացայ իմ շնորհակալութիւնը յայտնելու

Շուշանին, որ նա վեհանճնութեամբ այսչափ դոճողութիւնը յանձն առեց, ես այժմ նոր եմ զգում, որ նորա չափ արժանիք չ'ունիմ քո առջեւ. դու նորից գնա՛ նրա մօտ, Աւագ. ես խղճահարվում եմ. ես չ'եմ ուզում որ դու զրկուիս նրանից, բայց սիրտս նուաղում է. ես այսօր ոչինչ չ'եմ կերել, միշտ լաց եմ եղել, ասաց Մարօն եւ ուշաթափուեցաւ:

Աւագը մոռացաւ իւր գրութիւնը. աղբիւրից ջուր հասուց եւ ուշաթափուած Մարոյի երեսին սրսկեց, պորտն ուրեց եւ հազիւ թէ կարողացաւ նրան ուշքի բերել: Որովհետեւ իմացաւ նա, որ այսօր Մարօն ու չինչ չ'էր կերել, նա յիշեց իւր նոյն աւուր ստացած քաղցրի եւ խորովածի պատանները, որ մէջքը կապած շալի մէջն էր դրել, հանեց եւ կերցրեց Մարօին: Երբ կատարելապէս ուշքի եկաւ Մարօն, հարցրեց.

— Ես էլ վարա՞ ուեցի Շուշանի հիւանդութիւնից, այնպէս չէ՞, Աւագ:

— Չէ՛, հոգիս, Շուշանի հիւանդութիւնը կեղծ է. նորա այս հիւանդութիւնը նրա համար է սարաւէ. նորա այս հիւանդութիւնը նրան ազատի իման Արդալի ձանկեւրից. դու քաղցած էիր, նրա համար այնպէս եղար, պատասխանեց Աւագ:

— Բայց դու էլ ինձ չ'ե՞ս սիրի, որ այդպէս հիւանդ լինիմ:

— Ես քեզ սիրում եմ, Մարօ, ինչպէս իմ հօգին. վեր կա՛ց գնանք եւ Շուշանի հրամանը կատարենք. այսուհետեւ ոչ նա է մեզ տեսնելու եւ ոչ էլ մենք նրան. ամեն բան վերջացաւ. նա իւր սուրբ եւ մաքուր ձեռքովը իւր սէրը պատուատեց մեզ վերայ: Աւագը եւ Մարօն թող գիշերով շարունակին իւր

բենց ճանապարհը եւ դնան հասնին մինչեւ Էջմիածին, ուր առաջին անգամ տեսանք մենք նրանց, իսկ մենք դառնանք վանքը եւ Շուշանի գրութեան մէջ մըտնենք:

Շուշանը գլուխը դրել էր եկեղեցւոյ շէմքի վերայ եւ խոր քնի մէջ մի անուելի երազով տառապում էր: Հակառակ աչնան ցրտերին, նա սաստիկ քրտնել էր: Երազում տեսաւ, որ կան Արզալի յիսուն ձիաւորները իրենց գիւղը շրջապատել էին. կրակը չորս կողմից դէզարեղ բարձրանում էր. քրդերը սրերը մերկացրած կոտորում էին ամենքին, իսկ իրան եւ Մարոյին ճուռքաշ տանում էին: Կէս ճանապարհին կօճենց Գրբիգորն Աւագի հետ մի մի ձերմակ ձի նստած, ձերմակ հագուստները հագած, յանկարծ վրաները յարձակուեցան. սրերը մերկացրին եւ մի ակնթարթում բոլորի գլուխները թօցրին, յետոյ իրենց ձիերի վերայ դնելով, փախցնում էին դէպի Ռուսաստան:

Նրան այնպէս էր թւում, որպէս թէ երկու ամիս ժամանակ էր անցել, որ չորսը միասին մի մեծ ու գեղեցիկ քաղաքում երջանիկ կեանք էին վարում, Մարոն պատուել էր Աւագի հետ, իսկ ինքը մտադիր էր քաղաքի կուսանոցը մտնել. բայց կօճենց Գրբիգորն արգելում էր նրան. նա ասում էր. «Ես վանքից եմ փախել, դու վա՞նքն ես ուզում գնալ»:

Շուշանն ասում էր. «Ես ուխտել եմ անպատճառ մի վանք մտնելու»:

— Ե՛ս էլ այդ ուխտն արի, բայց հրաշքով դուայ քեզ, երկուսիս ուխտը միեւնոյնը լինելով, սրտներս էլ պէտք է որ միեւնոյնը լինի. եթէ դու հաւատում ես հրաշքի, Շուշան, Աստուած այնպէս էր կամեցել:

որ մենք աղատուէինք մեր թշուառ վիճակից. գիտե՞ս, այս քանի տարի է՝ ինչքան տանջանքներ, շարժարանքներ կրեցի ես, դու չե՞ս խղճահարվում, որ ինձ այս վիճակումն ես թողնում:

— Ես համաձայնում եմ, Գրբիգոր, այն պայմանաւ, որ այս քաղաքումն ապրինք. էլ կան Արզալի իշխանութեան տակը չը վերադառնանք, ասաց Շուշան:

— Բռնակալների իշխա՞ ութեան տակ ի՞նչ գործ ունինք մենք այլևս, Շուշան, այսօր Ընէս Միսոյի փեայ Մուրադին էլ տեսայ ես. նա ինձ իրենց տունը տարաւ. Վալդիկը շատ խնդրեց, որ քեզ եւ իւր մօրաքրոջ աղջկան նրանց տունը տանիմ: Գնա՛նք, քանի որ չի միթնել:

Մինչդեռ երազում Շուշանը Գրբիգորից «գնանք» ձայնն էր լսում, ահա ի այլ ձեւք եւ մի կանացի ձայն զարթեցրեց նրան, որ ասում էր.

— Շուշա՛ն, վեր կա՛ց, այս ցուրտ եղանակին է՞ր ես պառկել այստեղ, այս քանի՞ ժամ է, որ ես ու եղբայրդ փնտոտում ենք քեզ:

Շողիկն էր այդ:

Շուշանն արթնցաւ եւ եկեղեցու դուռը համբուրելուց յետոյ իւր եղբոր կնոջ հետը միասին իրենց յատկացուած խուցը գնաց, ուր դարձել էր արդէն Վահան եւ անհամբեր սպասում էր Շողիկի վերադարձին: Ժամն անցել էր, որ Վահան եւ Շողիկ որոնում էին Շուշանին, մինչեւ դասն նրան եկեղեցու դրան մօտ: Երբ Շողիկն ու Շուշան խուցը մտան, Վահանը հարցուց.

— Աւագն ի՞նչ եղաւ :

— Նա ինձ հետ է՛ր, պատասխանեց Շուշանը՝ վշտալի եւ մի քիչ բարկացած ձայնով :

— Ոչինչ, նա ուր որ էլ լինի կը վերադառնայ, աղամարդ է, նա կարող է ամեն տեղ գնալ. բայց այս բազմութեան մէջ մի հասած աղջիկ ի՛նչպէս է համարձակուում մինակ դուրս ելնել ու եկեղեցու դրան մօտը պտուկել, դու այսքան ժամանակ մի այսպիսի բան չէիր արել, Շուշան, այսօր ի՛նչ պատահեց քեզ հետ, որ այդ անխոհեմութիւնը գործեցիր, տեսնողները կարծում են թէ՛ իրօք լուսնոտ ես:

Շուշանը չը խօսեց. նա սաստիկ տխուր էր. իւր կեանքի ամբողջ ընթացքում առաջին անգամն էր, որ մեզ ծանօթ սոսկալի հարուածն էր ընդունել. նա այժմ մտածում էր իւր տեսած սոսկալի երազի վերայ, մի ժամ հազիւ թէ քնել չէր, բայց շատ երկիւրներ էր տեսել. երկու ամսի չափ էլ ժամանակ էր անցկացրել: Շատ ցուում էր, որ Շողիկը շուտով արթնացրեց իւրան. եթէ հնար լինէր կը ցափար նա շարունակել իւր տեսած երազը, որով կարողանար գնալ Վարդիկինց տունը եւ իւր կորուսած ընկերուհու հետը տեսութիւն անել: Նա մտածում էր եւ ինքն իրեն այսպէս էր խորհում. «ա՛խ, որքան լաւ կը լինէր, որ տեսած երազս ճիշտ լինէր եւ Գրիգորի հետ միասին բնակուէինք այն գեղեցիկ քաղաքում»:

Գիշ վերջ Մարօյի մայրը Փեփրոնէն կանգնեցաւ բակի դրան առջեւ ու հարցրեց.

— Մարօն այստեղ չէ՞:

— Չ'ենք տեսել, պատասխանեց Շողիկը:

— Ո՛ւշ, տունս քանդուեց, ասաց Փեփրոնէն եւ երկու ձեռքերը ծնկներէ վերայ խփելով հեռացաւ խցի դռնից:

## ԺԱ.

Գիշերն անցաւ. արշալոյսին վանքի գիշերային կոչնակը դարկին. ուխտաւորները եկեղեցի հրաւրուեցան: Մեծ եղաւ Շուշանի զարմանքը, երբ նկատեց, որ Գրիգորը ձախ թեւից մի երկար ժապաւէն կախած դասն էր կանգնել եւ շարական էր կարդում: Երբեմն գնում էր ատենը քարոզներ էր ասում ու կրկին իւր տեղն էր դառնում, խեղճ երիտասարդը գունաթափուել էր, նա մի սիրուն միբուք թողուցել եւ սեւ շորեր էր հագել, որոնք բոլորովին յարմար էին նրա տարիքին ու հասակին, այս շորերի մէջ աւելի գեղեցիկ էր երեւում քան ուրիշ ժամանակները: Շուշանը տեսնում էր նրան իւր կանգնած տեղից. բայց Գրիգորը իւր պաշտօնովն էր զբաղուած. նա երեկոյեան մութին էր հասել Լիմ անապատից Վարազայ վանքը՝ որպէս ուխտաւոր, որովհետեւ ամեն տարի սովորութիւն ունէր այս ամսին Վարազայ վանքըն ուխտի գնալու. իսկ այս տարի կրկնակի նպատակով եկել էր նա: Նա լաւ գիտէր, որ Շուշանին էլ ուխտի պիտի տանէին Վարազ. փափաքում էր զէթ մի անգամ էլ տեսնել նրան: Գրիգորը Վարազայ տիրացուներէից լուր առաւ, որ Օհանի որդի Վահանը, նրա կին Շողիկը եւ քոյր՝ Շուշանը վանքի պատուաւոր խցուսն էին հիւրընկալուել:

Տարին անցել էր, որ Գրիգորը Լիմ անապատի միաբանն էր եղել. դեռ երեք ամսի չափ էր, որ սար-

կաւազութեան աստիճանն էր ընդունել նոյն ժամանակի վանահայր՝ Շիրոյենց Գարբէլ եպիսկոպոսից, որն մի խտտակեաց ճգնաւորի համբաւն ունէր ամբողջ Հայաստանում եւ որի պատճառովն էլ Վասպուրականի առաջնորդութեան պաշտօնին արժանացաւ։ Աղթամարի կաթողիկոս էլ պիտի օծուէր, բայց Աշտարակեցի ներսէս կաթողիկոսը մի նամակով յիշեցրել էր նրան իւր էջմիածնում կատարած ուխտը այս պատճառով էլ հրաժարուեցաւ նա կաթողիկոս օծուելուց, որի փոխարէն Պետրոս Բլբլուլն օծուեցաւ :

Օ՛րն երկուշաբթի էր. առաւօտեան ժամերգութիւնից դուրս եկաւ ժողովուրդը : Գրիգոր սարկաւազը նկատեց, որ Շողիկն եւ Շուշան եկեղեցու դրան առջեւ կանգնել էին եւ իրեն էին դիտում. երբ Գրիգորը աչքն ընկաւ Շուշանի վերայ, մի սարսուղ զգաց. նրա սիրտը սկսեց սաստիկ բարախել մի հընչիւն ժամացոյցի արագութեամբ : Շողիկը մօտեցանրան եւ բարեկամական յարգանքներով նրա որպիսութիւնը հարցրեց : Գրիգոր սարկաւազը մի անգամ սեւ աչքերը դարձրեց դէպի Շուշան, որի աչքերում մի ծաղրի եւ ուրախութեան փայլը նկատեց, եւ որից յոյս առնելով, թողեց Շողիկի հետ ունեցած տեսութիւնը եւ դարձաւ դէպի Շուշանը՝ հետեւեալ խօսքերն ասելով .

— Օ՛, բարեւ, Շուշան քոյրիկ. այդ դ՞ու ես, որ քան ես փոխուել. եթէ Շողիկը չը լինէր, ես չ'էի կարող ձանաչեալ քեզ :

— Աստուած օգնական, Գրիգոր Սարկաւազ, պատասխանեց Շուշանը. մոռանալով իւր հետ պատահածը :

Տեսած երազի եւ հրաշքի տգրեցութեամբ ուրախացած՝ շարունակեց Շուշանը. «դ՞ու էլ ես շատ փոխուել, գոյնըդ, հագուստներդ էլ ես փոխել, մանաւանդ թէ միւրուք էլ ես թողել. ես կարծեցի թէ վարդապետ էիր դարձել, բայց ժամում թեւիցդ գցած ժապուէնից հասկացայ, որ դեռ սարկաւազ ես :

Շուշանը Գրիգորի թեւի վերայ գցած ժապուէնի մասին տեղեկութիւն չ'ունէր, որ նրան ուրաւ էին ասում :

Շողիկը Գրիգորին իրենց խուցը հրաւիրեց խորովածով պատուելու : Նրա փափաքն էլ այն էր արդէն. նա ամենայն ուրախութեամբ հետեւեց նրան. երբ Վահանը տեսաւ, որ Գրիգորը Շուշանի եւ Շողիկի հետ միասին իրենց խուցը մտաւ, խիտ շատ ուրախացաւ, որովհետեւ երկար ժամանակ էր, որ նրան չ'էր տեսել, եւ ինչպէս իւր հայր Օհանը, նոյնպէս եւ ինքը՝ չափազանց համակրում էր նրան : Վահանը մի Քիչ սարկաւազի հետ խօսելուց վերջ, հարցրեց Շողիկից .

— Աւագը չ'երեւա՞ց, այս տղան ո՞ւր գնաց գիշերով. մի՞ գուցէ վշտացրիք նորան : Մարօն երեւա՞ց. այս առաւօտ դարձեալ որոնում էին նրան :

— Աւագին ո՞վ ի՛նչ է ասել, որ վշտանայ մեզանից, պատասխանեց Շողիկը, իսկ Շուշանը մի խոր հառաչ արձակեց :

Գրիգոր սարկաւազի մտքից շատ բաներ անցան, երբ այս հարցերը լսեց եւ Շուշանի տխրութիւնը նկատեց. մանաւանդ նրա հառաչանքում շատ բան էր պարունակվում : Նա յիշեց, որ միեւնոյն գիշերը երազում պատկվում էր Շուշանի հետ : Գրիգոր սարկաւազը վա-

հանի հետ մի քիչ սարից ձորից խօսակցութիւններ  
անելուց յետոյ իւր շնորհակալութիւնը յայտնեց եւ  
«մնաք բարեւ» ըսելով իւր խուցը գնաց: Ծուշանը նրա  
ետեւից դուրս ելաւ եւ նրա տխուր մեկնելն էր գի-  
տում: Գրիգորը մի անգամ եւս դարձաւ եւ ուղղակի  
Ծուշանի երեսին նայեց. Ծուշանը տխուր էր, եւ յու-  
սահատած:

Գրիգոր սարկաւազը իւր խուցն առանձնանալով  
Ծուշանի այս առուր վարժունքներից քաջալերուած,  
հետեւեալ ոտանաւորը գրեց.

Տխուր ես, ֆոյրիկ, դեմքդ անկարեւած  
Արսաւուր աջերդ, խիստ յուսահասած.  
Ասա՛ ինձ, ֆոյրիկ, ի՛նչ է պատահել,  
Որի՞ց ես այդպէս սաստիկ գայրակդել:  
Կարծես քշնամիդ դեմդ է կանգնած,  
Ասում ես նրան սաստիկ զգացում.  
Մի սանջի՛ր, ֆոյրիկ, ասա՛ անկասկած.  
Կը հարածեմ նրան, բոզ գիտնայ Ասում:  
Եթէ հասկացար վասի նպատակ  
Թող տայիր նրան իսկոյն մի ապսակ  
Կամ արտին ուղիդ խփեիր գնդակ,  
Անեիր նրան իսպառ շունասակ:  
Այն ի՛նչ կրակ էր, որ արտունու ծագեց  
Եւ ֆեզ ինձ հոգւով կապեց, կաշկանդեց.  
Պատաստ եմ, ֆոյրիկ, միայն հրանայի՛ր,  
Մաքուր եմ արտով, միայն ինձ սիրի՛ր:  
Անցաւ փոքորիկ, խաղաղեց ծովիկս,  
Նոյն մարդ ջեմ այնեւ, սիրելի ֆոյրիկս,  
Դարձեալ տեսնում եմ երեսիդ ժպիտ,

Որ հեռացել էր վարմանքս կոպիտ:  
Երանի՛ր թէ ես ֆեզ չեի տեսել.  
Ծարժմունքիդ ու վարմունքիդ չեի նկատել  
Հաւաստ ֆոյրիկ, գերիդ եմ դարձած  
Եւ քո սուրբ սիրով իսպառ շողախում:  
Եւ ինձ հեռանալ, ազատութիւն ֆեզից,  
Այց ֆուռս էլ իսպառ հեռացար ինձանից.  
Դանի հեռանալ, ֆակի հեռանալ,  
Ինչնեմ ջերմ սիրով գերիդ կը դառնալ.  
Մի փորձ փորձեցի, որ ինձ ասեիր  
Եւ դեմ յանդիման զիս անարգեիր,  
Մի բան չ'ասացիր, վշտանար նոզիս,  
Որով հասնեի գեր նպատակս:  
Անիծի՛ր, ֆոյրիկ, մարդային բնութեան,  
Որին գերի է աշխարհը համայն.  
Որքան հարածես, այնքան գորսանալ,  
Տգեղ երեւոյթք ծնունդ եմ նրան:  
Անիծի՛ր, ֆոյրիկ, փախի՛ր նրանից  
Որ չ'բաժանուի բարին ֆեզանից.  
Գիտեմ բարի ես դու շատ կիներից  
Վարժով մաքուր ես նոյնիսկ արբերից:  
Սակայն հեռացի՛ր, խորշի՛ր վատերից,  
Ընտրի՛ր ֆեզ ընկեր, պարկեշտ անձերից:  
Հեռացի՛ր, ֆոյրիկ, ասի՛ր վատերին  
Որ չ'բաժանուի ֆեզանից բարին:  
Զգոյշ կա՛ց, ֆոյրիկ, այն ղեզուներից,  
Որոնց մէջ բախ կան խիստ բուն բոյներից,  
Ինչ պիկդ մարդ չիկի՛ հեռու վատ կեանքից,  
Շուտով կը խաբուի շողոփորներից:  
Հեռացի՛ր, ֆոյրիկ, խորշի՛ր նրանցից,

Որ չ'բաժանուի բարին ֆեզանից:  
 Այսօր կամ եզուց կը հեռանալ ֆեզանից  
 Թող այս մնայ ֆեզ յիշասալ ինձնից,  
 Չ'իկնի որ խաբուիս նեկզաւորներից,  
 Որոց սիրեն, շեզուն սարբեր եւ գործից,  
 Հեռացի'ր, ֆոյրիկ, խորշի'ր անցանից,  
 Որ չ'բաժանուի բարին ֆեզանից:  
 Բարոյական մեծ պաշար ու հանձար  
 Ընտրի'ր դու ֆեզ զեւ ու զօրաւոր ճար,  
 Խնդրում եւ, ֆոյրիկ, պաշտի'ր դու սնւ,  
 Որ սիրե ֆեզ Տեր եւ հրեշտակի ննւ:  
 Մօսացի'ր, ֆոյրիկ, սիրուիւր նորանից  
 Որ չ'բաժանուի բարին ֆեզանից:  
 Աղօթում եւ ես ի խորոց արթից  
 Թող փրկե ֆեզ Տեր չար պատահարներից.  
 Ընդունի'ր, ֆոյրիկ, եղբորդ այս նուեր,  
 Որ կը մնայ ֆեզ յաւեւս անձնուեր.  
 Միայն խնդրում եւ, սիրելի ֆոյրիկ,  
 Գրես պատասխան նամակաւ փոփրիկ.  
 Որպեսզի պանել քո սուրբ յիշասալ  
 Եւ արտով մնամ սիրոյդ բեռան սալ:  
 Ընդունի'ր, ֆոյրիկ, կարօսս ողջոյնի  
 Եւ ինձ սուրբ սիրոյդ արա' արժանի:

Գրեգոր այս ոտանաւորը գրելուց յետոյ մի քանի անգամ երգեց սրտատուչ եւ յուզիչ եղանակով. ինքը լաց էր լինում, չէր իմանում, թէ խցի դրան առջեւն էլ մի արարած էր կանգնել եւ իրանից աւելի լռիկ ու մնչիկ արտասուք էր թափում: Մի քանի ժամ խըցում փակուած մնալով Գրեգոր սարկաւազը, փափա-

քեց դուրս ելնել, ազատ օդ շնչել եւ վանքի բակի մէջտեղում գտնուած պողոտակ աղբիւրից մի քիչ ջուր խմել, լուացուել եւ սրտի կրակն անցկացնել: Խցից դուրս ելնելով նկատեց, որ Շուշանը՝ լալուց աչքերն ուռած՝ կանգնել էր իւր խցի դրան առջեւ: Նա շատ էր փափաքում, որ նրան իւր խուցը հրաւիրէր, բայց ամօթից չ'կարողացաւ այդ հրաւերն անել. միայն թէ դողդողուն ձայնով հարցրեց.

— Դու լա՞ց ես եղել, Շուշան. ինչի՞ աչքերդ այդքան ուռել են:

Շուշանը՝ փոխանակ պատասխանելու Գրեգոր Սարկաւազի հարցին, ասաց.

— Գրեգո՛ր, ես յանցաւոր եմ զգում ինձ քո առջեւ. ես պատճառ դարձայ քո աշխարհի վայելքներից հրաժարուելուն, իսկ ա յօր ես ինքս եմթարկուեցի այդ պատժին: Խնդրում եմ, քաղաքն վերադառնալիս մի անգամ էլ մեր գիւղը գաս, այնտեղ բաներ ունիմ քեզ յայտնելու:

Սարկաւազը ծոցից հանեց եւ Շուշանին յանձնեց մեզ ծանօթ երգը, խօսք տալով նրան, անապատը գընալուց առաջ գիւղը գնալու եւ մի քանի օր նոցա տանը հիւր մնալու:

Արդէն ուխտաւորների վերադարձի ժամը հասել էր. ամեն ոք պատրաստութիւն էր տեսնում ճանապարհ ընկնելու, որովհետեւ հեռները բերած բոլոր պաշարեղէնը սպասել էր, մանաւանդ ուրախութիւն պաշարեղէնը սպասել էր, մանաւանդ ուրախութիւն պատճառող գինին եւ օղին: Ուխտաւորներն իրար էին անցել Մարօյի անյայտանալու պատճառով, բայց Աւագի մասին ոչ ոք չէր հարցնում, բացի Օհանեսնց Վահանից եւ Շողիկից: Որովհետեւ Աւագի ծնողները

չ'էին եկել ուխտի, շատերը կարծում էին, թէ գիւղն էր վերադարձել գիշերուան հովով. այնքան իրարանցում, հարց ու փորձեր եղան, Շուշանը ոչ ոքի բան չի յայտնեց, ոչ էլ իւր եղբօր կի: Շողիկին, որից ոչ մի գաղտնիք չէր պահել մինչև այն օրը:

Լ. գիւղի ուխտաւորները գիւղը վերադարձան. վահանի սրտի վերայ մի մեծ բեռ էր ծանրացել. գիւղը հասնելուն պէս նրա առաջին հոգան եղաւ Աւագին փնտուել, Աւագը գիւղումն էլ չէր: Գաղտնիքը պարզուեց. Մարօն Աւագի հետ այնպատացել էր: Կակոսի եւ Փեփրոնի տխրութիւնն ուրախութեան փոխուեցաւ, որովհետեւ նոյն երեկոյեան Շուշանը եղելութիւնը յայտնել էր Շողիկին: Օհանը միեւնոյն օրը իսկ Արդալից կանչուել էր, նա Շաւէշի գործած աւերգաժութիւնները յայտնել էր իմանին, որ բարկանալով թէ Շաւէշին եւ թէ Ահմէին փայտի կապել տուեց եւ մահամերձ վիճակի հասցնելով նրանց, դուրս հանեց շաթիրական պաշտօնից:

Իսկ Արդալի կինը՝ Զաւահիր խաթունն էլ ձանձուրացել էր այդ երկու ծառաների գործած ոճիրներից, վերջինս աւելի շատ էր համակրում Օհանին, որը պատճառ էր եղել իւր էրկան անգթութիւններ գործելուց դադրելուն: Զաւահիր խաթունին շատ ցաւ ու վիշտ էր պատճառում հայերի կրած տառապանքները. նա մօր կողմից հայ էր եւ գաղտնի օգնութիւններ էր անում տանջանքների մատնուած հայերին. նա յիշում էր իւր մօր թափած արտասուքներն ու խրատները, նրա համար էլ խիստ զթոտ ընտելութեան տէր էր դարձել:

Ահմէն եւ Շաւէշը դուրս ելնելով իրանց պաշտօ-

նից՝ միացան Գող Մժղօյի խմբին եւ առիթի էին սպասում Օհանից վրէժը լուծել: Նոքա Խանի սիրելի դէվըրիշին կաշառեցին, որ գուշակէր իմանին՝ թէ Լ. գիւղում մի գրաբաց մարդ իմանում է վարդիկի տեղը. նա մատ ունի նորա այնպատանալու գործում եւ թէ ինքն իմանում է, որ Օհանի աղջիկն այսահար չէ: Դաւընը կատարեց իւր խոստումը. բայց եւ այնպէս նոցա պատրաստած բոլոր որոգայթները՝ Օհանի մի հարուածով խորտակուեց:

Օհանն իմացել էր, որ արտաքսուած ծառաները միացել էին Մժղօյի խմբին, Խանի ձեռքով բանտարկել տուեց նրանց, Մժղօյի երկիւղն էլ քիչ չէր Օհանի համար: Նորա զօրութեան դէմ պատերազմելու համար գէնքի ուժը հարկաւոր էր: Օհանը յաջողեցաւ համար գէնքի ուժը հարկաւոր վերջի ու էլ ձեռք բերելու, ոչ շատ դժուարութեամբ վերջի ու էլ ձեռք բերելու, որովհետեւ մինչև այն օրը Լ. գիւղում ոչ մի գէնք չէր պահուում, բայց Օհանի իմաստուն հնարագիտու չէր գտնուում, բայց Օհանի իմաստուն հնարագիտու ու հրացան մտաւ գիւղը: Նա արդէն յայտնապէս կրում էր իւր գէնքերը եւ միշտ պատրաստ վիճակի մէջ էր պահում: Տէր Մուշեղն էլ քարոզում, համոզում էր ժողովուրդին, որ գէնք առնէին եւ Գող Մըժօնների նման մարդկանց գիմարէին:

Գող Մժղօն լրտեսում էր Օհանի ընթացքը. նա լուր էր առել իւր ծպտուած ընկերների միջոցով, որ Լ. գիւղացիք պատրաստութիւններ էին տեսնում. նա քաղաքացի Արդար Փանոսին պատգամաւոր ուղարկեց Օհանի մօրը: Օհանը չը հաւատաց խորամանկ լրտեսին. նա ցոյց տուեց նրան իւր գէնքերը, աներկիւղ պատասխանելով:

— Արդէն սրանք նրա համար եմ պատրաստել, եթէ ուզում է, թող մի անգամ էլ փորձ անէ մեր գիւղի վերայ գալու. թող նա լաւ գիտենայ, որ մի Մուրադի փոխարէն՝ այժմ քսան հոգի պատրաստուած է, չորս հոգի էլ զիշերապահներ ենք վարձել:

Արդար Փանոսը տեսաւ և գիւղի կազմակերպուած վիճակը. նա սարսափահար հերացաւ Օհանի մօտից եւ գնաց տեսածները պատմելու Մժղոյին: Ուրովեհաւ Մժղօն սովորութիւն ունէր իւր զինուած ընկերներով այն գիւղերի, վանքերի եւ եկեղեցիների վերայ գաղտնապէս յարձակուելու, որ անդեր ինքն իմանում էր, թէ զէնքեր չ'էին գտնուի:

Արդար Փանոսը՝ իւր կեղծաւոր ընաւորութեամբ ձգնաւորի անուն էր հանել Վանում. նա ամեն օր թէ երեկոյ եւ թէ առաւօտ, ուր որ էլ գտնուէր, եկեղեցուց ետ չէր մնում. ամեն գիշեր ժամակոչներին նա էր ձայն տալիս, որ վեր կենային եւ թաղերում ման գային իրենց կոչնակի տախտակներով, իսկ ինքը եկեղեցի էր մտնում, Սաղմոս, Նարեկ եւ ապաշխարութեան վերաբերող աղօթքներ ու շարականներ էր կարդում արտասուածոս աչքերով: Վանում ի՛նչ ծանր հիւանդ էլ որ լինէր, նրան էին կանչում աղօթելու եւ վերան Նարեկ կարգալու. վախեցողների երակն էր բռնում նա եւ մի ինչ որ ծածուկ եւ անհասկանալի աղօթք էր կարդում: Նա երբեմն անյայտանում էր ամիսներով եւ նորից քաղաքն էր վերադառնում: Ժողովուրդի մէջ տարածայնուել էր թէ. Արդար Փանոսը լեռներում ձգնելու է գնում. ամիսներով հաց չի ուտում, հրեշտակների հետ է խօսում. մի օրում գնում է Երուսաղէմ ու վերադառնում: Առ հասարակ Վանայ

հայ ու թիւրք ժողովուրդը մեծ հաւատ ունէր նորա վերայ: Զարմանալին այն էր, որ Արդար Փանոսը ոչ մի արհեստ, գործ ու եկամուտ չ'ունէր, բայց մի իշխանաղնից աւելի բարեկեցիկ էր ապրում: Նա բազմաթիւ ընտանիքի տէր էլ էր. ժողովուրդը հաւատացել էր, թէ հրեշտակները նրան առանձին գումարներ են հասցնում, որովհետեւ արդար էր նա եւ Աստուծոն սիրելի:

Արդար Փանոսը՝ Վանայ Այգեոտանների բնակիչ էր. նա ամեն իրեն պատահողներին բարոյական խրատներ էր տալիս Մուրք Գրքից, յայտնաւորքից եւ բանց վարքից պատմութիւններ էր անում. աղօթք, պահեցողութիւն եւ ողորմութիւն էր քարոզում: Ամեն ամսին խոստովանում ու հաղորդվում էր: Եկեղեցին արձակուելուց վերջն էլ մի ժամից աւելի բազկատարած աղօթում էր. որքան որ խաչ, պատկեր եւ վերք կար եկեղեցում, համբուրում եւ ապա դուրս էր գալիս: Նա իմանում էր, թէ եկեղեցի մտնելիս եւ ելնելիս ի՛նչ աղօթքներ պէտք էր ասել, ո՞ր ժամանակ պէտք է ծուներ գնել, ոտքի վերայ կանգնել կամ նրսակել: Ինքը կատարում եւ ուրիշներին էլ սովորեցնում էր, առանց ձանձրանալու: Ամիսը մի անգամ էլ, հաղորդուելիս, տէրտէրներին, վարդապետներին ու արացուներին ձաշ էր տալիս: Ի՛նչ մարդ որ փորձանքի պատահէր, որի տանը որ գող մտնէր, Արդար Փանոսն ամենից առաջ էր գնում ու մխիթարում: Շատ ժամանակ տանտէրերը չէին իմանում, թէ իրենց տունը զիշերը գող էր մտել ու գոյքերը գողացուել: Արդար Փանոսը գնում էր նոցա մօտ իւր պարտակահութիւնը կատարելու եւ այն ժամանակ միայն հասկանում էին, որ իրենց տունը գող էր մտել: Այդ ժամանակները գնալով գողերի թիւը շատանում էր. նոքա այնպիսի գործիքներ էին պատրաստել, որոնցմով

դիւրութեամբ բարձրանում էին կտուրները վերայ ու  
ցած իջնում. տանը գտնուած իրեղէններն առնում ու  
փախչում էին, երբեմն էլ պատերը ծակում ու դռները  
քանդում էին՝ այնպիսի զգուշութեամբ, որ տան տէ-  
րերը չ'էին իմանայ, նոյնիսկ՝ եթէ արթուն էլ լի-  
նէին: Շատ ժամանակ, երբ տան տէրերն իմանում է-  
ին, նոքա զանազան կենդանիների ձեւն էին ստա-  
նում, կապկի նման պատերից թռչում եւ շան նման  
թաթերի վերայ դալով փախչում էին. այս ամեն հնա-  
բազիտութիւնը վերագրվում էր Գող Մփփօյին: Այն  
ժամանակները դեռ լուցկին մուտ գտած չ'էր վանում:  
Մի օր Գըղմօրենց հարուստ տան վերայ գնաց Փանո-  
սը: Տանտէրն եւ իւր կիներ ճրագը պնակի տակ դրած՝  
արթուն հսկում էին, որովհետեւ ամեն տուն ահու-  
գողի մէջ էր, գողերի երկիւղից չէին կարող քնել.  
պառաւ տանտիկինը տեսաւ, որ կտուրից մի թռկ  
կախուեցաւ, որից մի մարդ կատուի ճարպիկութեամբ  
սողալով իջաւ բակը, ապա շան ձեւ առնելով մօտե-  
ցաւ պատուհաններին եւ դռներին, սկսաւ ականջ դը-  
նել եւ չորս կողմը զննել. քառորդ ժամ հազիւ թէ  
տեսեց այս զգուշական գործողութիւնը. յետոյ այգու-  
դուռը բաց արաւ: Տանտիկինը իւր մարդուն զգու-  
շութեամբ զարթեցնելով, սասց.

— Չայն մի՛ հանի, բակումը գող կայ. այգու-  
դուռն է բանում. մէկ հողի է, դէնք էլ չունի հետը.  
պատրաստ կա՛ց, բռնենք սրան եւ տեսնենք թէ ո՞վ է:

— Բայց նա ընկեր ունի, հազիւ լսելի ձայնով  
փախաց մարդը:

— Ես պատուհանից դիտեցի. ոչ ոք չի երեւում այ-  
գում. սենեակի դուռն էլ բաց եմ թողել, որ ներս մտնի:

Մինչդեռ այր ու կին խօսում էին, կամաց սեն-  
եակի դուռը բացաւ գողը. մի քանի քայլ առաջացաւ  
թէ ոչ, պառաւը պնակը վերուց: Արդար Փանոսը, մի  
սրածայր երկաթ ձեռքին ետ դարձաւ ու փախաւ.  
Թէեւ նա իւր հագուստները փոխել էր, բայց տանտի-  
րոջ սուր աչքերը ճանաչեցին նրան. տանտէրը ետեւ  
ւիցն ընկաւ, որ բռնի նրան. գողը ետ դարձաւ եւ իւր  
ձեռքի սուրը նրա կողը խրեց ու փախաւ:

— Դու իմ մարդուն սպանեցի՞ր սուտ ճգնաւոր:

Արդար Փանոսն ուղեց կնոջ փորն էլ ծակել, բայց  
այգու դուռը փակուել էր արդէն:

Հետեւեալ առաւօտեան Գըղմօրենց տան գողու-  
եան դէպքը եւ Գէորգ աղի վերաւորութիւլը ժողովրդ-  
եան մէջ տարածայնուեցաւ: Կառավարական պաշտօն-  
եաները Արդար Փանոսենց տունը պաշարեցին. բայց  
ո՛րքան մանրագնան են խուզարկութիւններ կատարե-  
ցին, ոչ մի գողութեան նշան չ'կրցին գտնել նրա  
տանը: Նրա կիներն ու զաւակները այնպէս էին տարա-  
ձայնել, թն Փանոսն երկու ամիս կը լինի, որ Կարին  
է գնացել: Նորա մայրը՝ Մարիամ մի թղթի կտոր  
ձեռին բռնած ցոյց էր տալիս ասելով.

— Ահա նրա գիրը, որ սրանից տասն օր առաջ  
ենք ստացել Կարինից:

Ճիշդ էր որ Մարիամի Փանոսը միշտ գնում էր  
Կարին, Մուշ, Բաղէշ, բայց ի՞նչ գործով. ոչ ոք չ'էր  
իմանում, մինչեւ որ նորա գողութեան գաղանիքը  
յայտնուեցաւ, թէպէտեւ ժողովուրդը այնքան էր նա-  
խապաշարուել նրա առաքինութիւններից եւ հրաշա-  
գործութիւններից, որ չ'էր հաւատում, թէ Մարիամի  
Փանոսը Գող Մփփօյի նման աւաղակութիւններ էր ա-



հրամանն ընդունելու) երկյարկանի աներ շինել: Կոյր փաշան փախչող իշխանների բացակայութեան գրաւեց նորանց կալուածները, նոցա աները կողոպտելուց վերջ:

Երբ Մարտիրոս աղան մի քանի տարուց յետոյ նորեց հայրենիք վերադարձաւ, կոյր փաշայի կիներ նրանից այնքան քաննոց ոսկիներ պահանջեց, որ իւր կարմիր Դալիմի \*) վերայ որքան կարեր կային նրանցով ծակկուէին: Տուգանքը \*\*) վճարուելուց յետոյ կարողացաւ Մարտիրոս աղան համարձակ անից դուրս գալ, \*\*\*) այն էլ իւր աներորդու կարս Սաֆարենց Յակոբ աղի միջամտութիւնով, որն կոջարաշուծեան պաշտօն էր վարում այս ժամանակները:

Կոյր փաշայի գանձապետն էր Կաւազողլոնց անուանի Մանուէլ աղան, որի հարստութեան ոչ ոք չէր հաւատարւում այն ժամանակները: Վանում ոչ մի տուն չ'կար, որ Կաւազողլոնց պարտական չը լինէր. նոքա վաշխառութիւնների շնորհիւ, անտանձան կալուածների եւ անհաշիւ ոսկիների տէր էին դարձել. նոքա բաժանուելիս ոսկիները մի մեծ ամանով էին չափում եւ մասն առնում, որովհետեւ ոսկիների թիւն այնչափ շատ էր, որ չէին կարող համրել:

(\*) Դալիման մի վերարկու է, կարմիր մահուսից սաւրասուռած, որ միևնչէր այսօր ել Վան ֆաղափի հայ կիներից ունակ հազնում են:

(\*\*) Ոսկիները իւր ձեռնով կարել էր Թագեգիւշեկն Մանուկը իւր դերձակ վարպետի մօտ աշակերտեղած ժամանակները, որին մեկի սեսակի Վան ֆաղափ Պօղոս-Պետրոս եկեղեցու սպիտակախառ միրուհով ֆա-

Վասպուրականի հայոց առաջնորդութեան պաշտօնն էր վարում՝ Թափաղալան Ալի փաշայի սերելին՝ Սարայէլեան Յարութիւն եպիսկոպոսը, նա մեծ ազդեցութիւն էր ձեռք բերել թիւրք պաշտօնեաների շրջանում. որ մի չափազանց կրքոտ մարդ էր նա շարունակ մտրակը ձեռքին նստում էր առաջնորդարանում. բոլոր մեծամեծներն ահով եւ սարսափով էին մօտենում նրան. առհասարակ մտրակում էր նա ամենքին երբ բարկակացած լինէր, այս պատճառով էլ իշխանները ձանձրացել էին նրա խստութիւններից:

Յարութիւն եպիսկոպոսը գիտողութիւններ էր

հաւայ եղած ժամանակները, այսպիսի պատճառներով անեկայն մանրամասնութեամբ նկարագրում երևեր ծերունագարդ ֆահաւան:

(\*\*\*) Նմանապէս սակը փակվում էին նոֆա, որոնք բռնապետներից անբասակում էին քե՛ որոնք երկին գիր եւ գրել, որ գակ երկրին տիրել, նոֆա նուսներին հայերի տեղին (մօրեղբայր) էին համարում: Այսպիսի շիւծու անբասակութիւններով ո՛րքան հայերի կեակները մաշուել է բակերում, ծակեր շորակների սակ, ֆակների կեակները հնձուել է յայտնապէս, միևնչէր այն օր, երբ այս տեսակ անբասակութիւններին յաջորդեց մի ուրիշը, որին ԱՆՉՆՈՒՒՆ (Փեղայի) անուկը տուին. եւ այս անբասակութեամբ որքան շեկ տուեր ֆակեցին, որքան երիտասարդների բակերում խեղդանաւ արիւն, ունակ յայտի եւ ունակ կախաղակի մահուան դասապարտելով, որպիսի յասագոյն պատիժները դեռ շարունակվում եւ հայ երիտասարդների վերայ Հայաստանի շատ ֆաղափներում:

անում եւ կոյր փաշայի արարքների մասին: Փաշան ձանձրանալով սրա խտտագոյն դիտողութիւններէից, մի օր հարցուց եպիսկոպոսից.

— Առաջնորդ, դու ձանաչո՞ւմ էիր Մկրտիչ առաջնորդին, որին կախեցին խոշարի բերդից. նա էլ քեզ նման դիտողութիւններ էր անում օրէնքի գործադրութեան մասին:

Քաջասիրտ եպիսկոպոսը՝ այս յարմար պատասխանը տուեց փաշային.

— Փաշա՛, դու էլ ձանաչո՞ւմ ես Թափաղաւան Ալի փաշային, նա շատ բարբարոս փաշաների գլուխները թոցրել է:

Առաջնորդը պահանջում էր, որ կոյր փաշան եւ իւր պաշտօնեաներն՝ օրէնքի խտուութիւնները միմիայն հայերի վրայ չը գործադրէին: Նա իբրևուսք էր տալիս նրանց Մարիամի Փանոսի նման մարդկանց պատժելու, բայց նրա ընկերներն ինչի չէին պատժուում, որոնք թիւրքեր էին եւ Փանոսից աւելի չարագործութիւններ էին կատարում:

Յարութիւն եպիսկոպոսը չը կարողացաւ տանել այս բարբարոսական դրութիւնը. նա Կ. Պօլիս վերադարձաւ. Պատրիարքի, Ալի փաշայի եւ իւր ծանօթ եղող ամեն կարգի պաշտօնեաների աղղկեցութեամբ՝ յաջողեցաւ անուանի Օսման փաշային Վան ուղարկել առանձին հրովարտակով, որն առնելով իւր ահագին բանակը Վան հասաւ եւ բռնապետներին զսպեց: Այն օրից Օսմանեան պետութիւնը կարողացաւ Հայաստանը իւր իշխանութեան տակն աննել կանոնաւորապէս, ամեն քաղաքներում կանոնաւոր զօրքեր թողնելով եւ օրէնքներ հաստատելով:

Երբ Յարութիւն եպիսկոպոսը նոր հրովարտակով յաղթութիւն տարած, իւր պաշտօնատեղին էր վերադառնում, Կարին քաղաքը հասնելով պատրիարքարանից մի նամակ է ստանում, որով նրա պաշտօնանկութիւնն էր յայտնուում, առանց մի օրինաւոր պատճառի, որովհետեւ Վան քաղաքի իշխանները չը կարենալով սովալ նորա խտուութիւններին, երբ իմացել էին թէ՛ եպիսկոպոսը կրկին Վան է վերադառնում, բողոքել էին Պատրիարքին եւ մի ուրիշ առաջնորդ էին խնդրել: Յարութիւն եպիսկոպոսը՝ հնազանդելով Պատրիարքի արձակած հրամանին, Կարինից Կ. Պօլիս վերադարձաւ եւ եղելութիւնը հասկանալով թուլակամ պատրիարքից, իւր բնական բարկութիւնով կաթոլիկներին դիմեց եւ դաւանափոխ եղաւ:

Օսման փաշան\* բռնապետներին զսպել էր արդէն, ումանց հնազանդութեան բերելով եւ ումանց Կ. Պօլիս աքսոր ուղարկելով. երկիրը իւր կատարեալ բարեկարգութեան աստիճանին հասել էր: Կոյր փաշան չը թաշակապ բանտարկուել էր. նրա արարքները հրապարակային քննութեան ենթարկուեցան, որովհետեւ շատ ծնողներ աղերսագրերով Օսման փաշային էին դիմում եւ օրէնքի արդար գործադրութիւնն էին խնդրում: Սափրիչապետի մայրը փաշայի ոտքն էր ընկել եւ իւր միակ որդու արիւնի փոխարէն՝ արիւն էր պահանջում:

(\* ) Արփիսեակց կաղ Գասպար ավերակ իբրեւ խորհրդակից Օսման փաշայի՝ Վան եր եկել, որը Բաղիսիսակ բեկի ձերբակալման գործում մեծ դեր եր կատարել, եւ որն Վանում կնիքել է իւր մահկանացուն: Սորա նկարագրութիւնը քոյնում եւնի մեր միւս հասրկերում նկարագրելու:

Օսման փաշան՝ լսելով սափրելչապետի մօր խօսքերը, հարցրեց կոյր փաշայից.

— Կո՛յր, չարագործութիւններդ մի մի պատճառ գտար, իսկ սրա սափրելչ որդի՞ն ինչ էր արել, որ խեղդամահ ես անել տուել:

Կոյր փաշան դողդողալով մօտեցաւ նորա ակամջին եւ այսպէս փոփաաց.

— Կնոջս զեղեցիութիւնը յայտնել էր:

Օսման փաշան այլեւս չ'արողացաւ երկար զեմանալ, ուստի եւ գոռաց,

— Դահի՛ճ, պէտք է՝ որ այս անդգամի գլուխը կտրուի:

Դահիճն արդէն պատրաստ էր, կարմիր հագուստները հագած եւ մերկացրած սուրը ձեռքին, բայց ներկայ եղող չեխերի միջամտութեամբ սպանուելուց ազատուեց: Միւսնոյն գիշերը կոյր փաշայի բազմութիւն ծառաները բանտի պատը ծակելով փախուցին նրան կարին քաղաքը. ուր արտաքնոցի ժահանոտ հորումն ընկնելով իւր արժանի պատիժն ընդունեց, ապակահութիւններում աւանդելով իւր ապականուած հոգին:

Կոյր փաշայի ապարանքը, սուսն ու տեղը եւ բոլոր ունեցած հարստութիւնները զբաւուցան: Հարստահարուած ժողովուրդի ուրախութեան չափ ու սահման չ'կար. ամեն բերան օրհնում էր արդարադատ Օսման փաշային:

Բողբիսան բեզը, Խան Աբգալը, Խան Մահմուտը եւ սոցա նման քիւրտ բռնապետներին էլ ձերբակալեց Օսման փաշան եւ Կ. Պօլիս աքսորեց:

Յայտնի հարստահարիչները իրենց արժանի պատիժներն ստացան, մնում էին գող Մփոյի նման

գաղանի հրոսակախամբերը, որոնց ձեռք բերելը շատ դժուարին մի խնդիր էր, ինչպէս տեսանք նաեւ բռնապետները իշխանութեան օրով: Այսպիսիներին պատժելու համար մեծ դեր կարող էր կատարել ժողովուրդը, որոնց եւ հրամայեց Օսման փաշան, ամեն թաղերում եւ գիւղերում յատուկ մուսնտիկներ կանչել տալով, որ նոքա չարագործներին բռնելով կառաւարութեան յանձնէին, հակառակ դէպքում, սպանէին այնպիսիներին, որոնց սպանողները ոչ միայն պիտի պատժուէին, այլ եւ պիտի վարձատրուէին բարձրագոյն իշխանութիւնից: Հրաման տրուեց հպատակ ժողովրդեան, ի հարկին եւ զէնք կրելու, առանց կրօնի խտրութեան: Այդ օրից սկսեալ՝ աղատամիտ հայերը զէնք առին եւ իրենց տները պահպանում էին, բայց այդպիսիների թիւը դժբախտաբար շատ քիչ էր: Ամբողջ Վասպուրականում մի տէր Մուշեղ միայն կար եկեղեցական դասակարգում, իսկ ժողովրդի մէջ Օհանի նման մի քանի անձինք, որոնք առիթից օգտուելով՝ յորդորում էին ժողովուրդին զէնքեր առնելու եւ կազմակերպուած վիճակ ունենալու, վտանգների դէմ կուռելու համար, մնացեալները հակառակ էին այս գաղափարին, նոքա զէնք գործածողներին հաւատի թշնամի էին համարում, քարոզիչ վարդապետները խօսանէ՛քներ էին որոտում եկեղեցու բեմից, նոքա վախենում էին, որ ջերմեռանդ եւ կրօնասէր հայերը իրենց սէրը կը նուիրէին զէնքի եւ այդպիսով հաւատները կը թուլանային. նոքա տեսնում էին, որ զէնք գործածող մուսնոսնդ թիւրքերն ամուր էին նաեւ իրենց կրօնքի վերայ: Տէր Մուշեղին գող Մփո էին անուանում զէնք կրելու թշնամի եղողները:

Երկիրը խաղաղել էր . Վարդիկի եւ Շուշանի նման հաղաբաւոր զեղեցիկ հարսներն ու աղջիկներն ազատուել էին բռնաւորներէ ձերաններէց : Գիւղահան ժողովուրդն էլ սկսել էր ազատ շունջ առնել եւ իւր արդար վաստակով պարապել, բայց մի ամենազօրաւոր թշնամի մնացել էր տակաւին, որ ժողովրդին մեծ կորուստ էր սպառնում : Տգիտութիւնն էր այս : Ողջ Վասպուրականում տասնի չափ մարդիկ չ'կային, որ կարգալու հետ նաեւ գրել իմանային, վարդապետներէ եւ քահանաներէ մէջ հազիւ կարող էին գտնուել մի քանիսը, որոնք կարողանային գէթ պարզ նամակներ շարադրել, նոքա արհեստ էին դարձրել եկեղեցական գրքեր կարդալ կամ ընդօրինակելը, եկեղեցական երգեր երգել, սուրբ գրքից կամ ճառեր տիրից քորոզներ պատրաստելը, էն էլ Աստուած քարոզ համարի նոցա պատրաստած բարաբանութիւնները : Առեւտրականներէ մէջ՝ մէկը չէր ձարուում, որ կարենար մի հասարակ տոմար գրել : Գիւղացիներէ մեծ մասն արդէն կարգալու հոտն էլ չէին առել, վարդապետներ ու քահանաներ կային, որոնք չ'էին իմանում՝ թէ Քրիստոսն էր առաջ աշխարհ եկել՝ թէ Լուսաւորիչը, նոքա շատ անգամ վիճաբանում էին անպէտք նիւթերի վերայ, իւրաքանչիւր ոք իւր խելքին էր զօռ տալիս, իւր մտացածին վարդապետութիւններն առաջ քշելու եւ ժողովրդի աչքին շատ դիտուն երեւալու : Քաղաքամիչի եօթն խորհրդաւոր թիւ կազմող եկեղեցիներէ քահանաներէ միջեւ այս վիճաբանութիւնն էր գառնում :

— Նոյեան տապանի վերայ քանի՞ բեւեռ կար, Աբրահամի շան անուան ի՞նչ էր, Ենովքն ու Եղիան

երկնքումն ի՞նչ են ուտում, մարդկանց հոգիներն ո՞ր տեղ են հաւաքվում, Քրիստոսն ո՞ր քրիստոնեայ աղբի զաւակն էր, եւ այլն :

Նոքա այսպիսի երեւակայական բաներով էին զբաղվում, մանաւանդ աշնանային եւ ձմեռնային երկար գիշերները : Գրել կարդալ չը գիտցողները զարմանում էին նոցա կարծուած անհուն իմաստութեան վերայ : Ճարպիկ լեզու ունեցողները յաղթանակը տանում էին եթէ սխալ էլ լինէր իրենց յայտնած մտքերը, էլ էն վարդապետն կամ տէրտէրը փառաբանվում էր ժողովրդից, նրան Սողոմոն իմաստունից աւելի դիտուն էին համարում :

— Տօ՛, աշխարհումս էլ գիրք չէ մնացել, որ չի կարդացել մեր տէրտէրը, ասում էին, տէր Պողոսն էլ չը կարողացաւ նրա սատասխանը տալ :

Շատ անգամ ելլ տաք վէճի էին բռնում, փայտով էր լուծվում խնդիրը, մանաւանդ ծովամիչի երկու անապատականների միջեւ տեղի ունեցած կռիւները, շարականների սկսուածքների, բարձր ու ցածր երգելու, յայտաւուրք կամ ճաշու գիրք կարդալու վերայ գրակալներն ու մոմակալները միմիանց գլխին էին տալիս : Լուսարարը բան չ'ուներ թող կանթեղները վեր քաշէր, դարձեալ նրանց կտորները վար էին թափվում, այնուհետեւ հայհոյանքները յաջորդում էին աղօթքներին եւ փառաբանքներին :

Այս ժամանակները իւրաքանչիւր թաղի կամ գիւղի ուսուցիչն էր իւր տէրտէրը, որ երկար տարիներով դասեր էր տալիս, աշակերտները հազիւ կարողանում էին թուրթակի նման անգիր անել փոխ, քարոզ եւ շարականներ, ուրիշ ոչինչ, ուսման, գրագիտութեան վրայ ո՞վ էր խորհում :

# ԺԳ.

Ինչպէս տեսանք, Լ. գիւղի ժողովուրդն իմացաւ, թէ Աւագն ու Մարօն վարազայ վանքից անհետացել էին, բայց ո՞ւր, ոչ ոք չ'գիտէր: Աւագի եւ Մարօյի ծնողները էլ տեղ չ'մնաց, որ չը գնացին իրենց գաւակներին փնտռելու, բայց ոչ ոքից չը կարողացան մի լուր առնել: Մարօյի ծնողքը նախ կարծում էին, թէ Շաւէշն էր փախցրել իրենց շղակին, բայց գաղտնիքը պարզուելուց յետոյ՝ ապահով էին, որ այլեւս իրենց աղջիկն աղատուել էր:

Աւագն եւ Մարօն վարազայ խաչի տօնի գիշերը քալելով հասեր էին Աղբակ գաւառի Չուխ գիւղը, այնտեղից էլ մի օրից յետոյ Բարթողիմէոս առաքեալի վանքը, ուր երկու օր մնալով, հանդատանալուց յետոյ՝ Սալմաստի վերայով Խոյ եւ Արտազ գաւառները գնացին: Նոքա ճանապարհին շատ վանքերի եւ մեծամեծ հայ գիւղերի պատահեցան, մինչեւ որ հասան հայոց Լուսաւորչի Մայր Աթոռ՝ Ս. Էջմիածին, որի մասին Աւագը շատ պատմութիւններ էր լսել իւր ուսուցիչ Օհանից եւ որը մի քանի տարի կը լինէր գրաւել էին Ռուսները Պարսիկներից: Նոքա ջերմեռանդութեամբ համբուրեցին սուրբ տեղերը, նոցա ոտքերը չ'էր բռնում, որ հեռանային վաղարշապատից որովհետեւ այս տեղը միայն կարողացան ազատ շունչ առնել: Հինգերորդ օրն էր, որ նոքա այստեղն էին հասել, ոչ քրդի եւ ոչ էլ թրքի երես չ'էին տեսել, նրա համար էլ քաղցր էր թւում նոցա վաղարշապատի

հոգն ու ջուրը: Նոքա վարազայ խաչին դուրս էին եկել վարազից եւ Գիւտ խաչի շարաթապահքին Էջմիածին էին հասել. Աւագը երբէք չ'էր տեսել ձեռնադրութեան հանդէս. նա շատ էր փափաքում այս հանդէսը տեսնելու:

Ծախսելու փողերն սպառելու վրայ էր, Աւագը առաջին անգամ այստեղն զգաց անձանօթ երկրի եւ պանդխտութեան դառնութիւնը. ինքը մինակ չ'էր, որ ծառայութեան մանէր եւ մի կերպով գլուխ պահէր. խեղձերը աղքատի նման կծկուել էին Էջմիածնայ տաճարի հարաւային պատի տակ աղօթում եւ իրենց դառն վիճակը վերայ էին խորհում եւ ուրազատարբ հրեշտակի նման վրայ հասաւ մեզ ծանօթ Նըղնը՝ ղենց Մուրատը:

Շուշանի հիւանդութեան պատճառով գիւղացիներից շատերը վախենում էին Օհանինց տան հետ յարաբերութիւն անելուց: Այն երիտասարդները, որոնք ուզում էին խնդրել Շուշանի ձեռքը, մանաւանդ քաղքցի Խօձենց Գրիգորը, որ իւր հայրենական կալուածները մշակել տալու եւ արդիւնքը հաւաքելու համար տարուան մեծ մասը Լ. գիւղումն էր անցկացնում, պատրաստ էր իւր անձը զոհել եւ Շուշանին ազատել տալ այս սոսկալի հիւանդութիւնից, իսկ Աւագը իւր մեռնելն էր ուզում, քան զեղեցիկ Շուշանին այդ վիճակում տեսնել, որի մօտից չ'էր ուզում կուլ էր նրա վերայ, որ մի՛ գուցէ վառման թոնիրն ընկնէր կամ գնար գետում խեղդուէր:

Շուշանի մայրը երկու տարի առաջ մեռել էր. Օհան չ'էր կամեցել մի ուրիշի հետ ամուսնանալ եւ

իւր զաւակներն մէջ խորթութիւն մտցնել: Շուշանը մօր կողմից որբացել էր. նրա միակ մխիթարութիւնը իւր եղբօր կին Շողիկն էր, որոնք միայն ծանօթ էին նրա կեղծ հիւանդութեան գաղտնիքին: Աւագը բոլորովին հաւատում էր Շուշանի հիւանդութեանը. նա չափազանց արտում ու տխուր էր, մանաւանդ նրա հիւանդութիւնը տեղի ունեցած ժամերին, աղօթում ու լաց էր լինում, մատաղ, խունկ ու մոմ էր խոստանում սրբերին, որ ազատէին սիրուն Շուշանին:

Շուշանը նկատում էր Աւագի տանջուելն ու մաշուելը. նա չէր կարող հօր պատուէրը կոտրել, որովհետեւ հայրը պատուէրել էր նրան ոչ ոքի չը յայտնել. սակայն Աւագի դրութիւնը եւ նրա վրայ ունեցած անհուն սէրը՝ ստիպեց նորան խիստ զգուշութեամբ թէնել, բայց անկարելի էր նրան լսել, երբ գիւղացիք իւր սիրելուն անուանում էին «ընկնաւոր Շուշան»:

Շուշանը մի կամաւօր բանտարկեալ էր դարձել, այլ եւս չէր ուզում տանից գուրս ելնել, գիւղի ծաղկաւէտ աղբիւրներն, լեռներն ու բերտատեղը գնալ ուրախ ընկերուհիներն հետ: Մուկ Աւէն եւ իւր կուսակիցներն ասում էին. «Աստուած լաւ պատմեց նրան, տեսա՞ք, Գալուստ վարդապետի անէծքն ի՞նչպէս բռնեց. ո՞վ է խմանում, թէ թթու խմորն ու աղն էլ չ'են որդնտուել, բայց նա դարձեալ շարունակում է իւր փոօզէտանութիւնը»:

Միամիտ տէր Մուշեղը ամեն երեկոյ գալիս էր Օհաննէսց տունը եւ ջերմեամբ հաւատով «խարատեա» էր կարդում Շուշանի գլխին, որովհետեւ նա էլ էր ուզում նրան հարս տանել իւր աղի համար:

Ահա թէ ի՞նչպէս եղաւ, որ խօճենց Գրիգորը թողեց իւր այրի մօրը, պատկենական կալուածները, աշխարհական կեանքը եւ Լիմ անապատը քաջուեցաւ վարդապետ լինելու:

Ինչպէս տեսանք, Գրիգորը Շուշանին շատ էր սիրում. Օհանը միայն նրան էր ուզում՝ տալ իւր աղջիկը, բայց Շուշանը Աւագին էր սիրում: Նա մի օր մեծ պատրաստութիւնով իւր մօրը քաղաքից ուղարկեց Լ. գիւղը Օհանի մօտ՝ հարսնախօսութեան: Շուշանը հասկանալով նրա նպատակը, արձամարհանքով էր վերաբերուել սրա հետ, սէրը Գրիգորի մէջ խոր արմատ էր գցել. նա Օհանի համակրանքը չահել էր. իսկ ամենից գլխաւօրը, ուր օրիորդն էր, չէր ուզում նորա հետ խօսել. որովհետեւ Շուշանն էլ կարգաւ էր իմանում. մի քանի անգամ համակներ գրեց եւ իւր ձեռքով նրան յանձնեց: Շուշանը Գրիգորի տուած նամակը կարգաց եւ յանձնեց Աւագին, պատուէրելով, որ քաղցրութեամբ յայտնէ նորան, որ այլեւս այդպիսի միտք չունենայ իւր մասին, բայց Գրիգորը իւր յայտը չէր կտրում նորանից. նա իւր սիրահարական դրուածքներով գրեթէ մի նշանաւօր բանատեղծ դարձաւ. յոյս ունէր, որ այստեսակ դրուածքներով պիտի կարենար շահել Շուշանի սիրտը, նա իւր բոլոր գրած թղթերը Շողիկին էր յանձնում, որ նա էլ տար Շուշանին: Առաջին անգամ հետեւեալ ոտանաւորն ուղարկեց:

Միջանասակ, շուսիսիպար,  
Լայնաճակիս, յօկեր կաւար.  
Խաճաջակի նշակաղպար,

Մարմնոյ անդամք՝ ֆեֆոյշ յարմար,  
 Ծանրաբարոյ խիստ հեզաբար,  
 Դեմս ե կանգնեց իմ Շուշանիկ,  
 Երբ չի հանում ձայնն անուշիկ  
 Ես կարծում եմ ինձ ասում ե,  
 Մի այլ անձի պաղասում ե,  
 «Ազատի՛ր ինձ», աղերսում ե»:  
 Ի՞նչ ես ուզում ինձնից, հրեշտակս,  
 Քեզ եմ յանձնում սեա կսակս.  
 Թե ինձ երբեք պատժեն արով,  
 Ողջ կը մնամ քո սուրբ սիրով:  
 Ասումս, երկիւնք, հրեշտակք, մարդիկ,  
 Մեր եմ գոչում, այլ դու հերթիք  
 Տակցես, գերես ինձ բշուռիս.  
 Յե՞րբ վարմունքովդ մաշես հոգիս:  
 Խորհախորհուրդ խիստ գաղտնապան,  
 Ունեայ ու փորձ երիտասարդ.  
 Չի կարող քեզ մոռնայ մի պահ.  
 Դո՛ւ ես երա կեանքը զուարթ:

Շուշան այս գրութեանն էլ պատասխան չը տուեց:  
 Գրիգորը նկատում էր, երբ ինքը նրանց տունն է  
 մտնում, Շուշանը անից դուրս է ելնում. նա չի ու-  
 ղում մինչեւ անգամ իւր երեսը նայել: Ստիպուած՝  
 հետեւեալ ոտանաւորով մի վերջին փորձ ուղեց անել:

Թշուառ եմ ես, քեզ անարժան  
 Սիրսս քեզնից ե անբաժան,  
 Կարծեցիր ինձ մի մարդ դաժան,  
 Բայց սիրոյդ չ'արիր արժան,

Գիտեմ, քե՛զ դու ինձ ասում ես,  
 Բայց ես հոգւով պաշտում եմ քեզ:  
 Որքան մերժես ինձ, անարգես,  
 Ինձ քո սիրով կը բորբոքես.  
 Էլ ձւր չ'ունիմ, անուսկացիր,  
 Որ հեռանամ, ինձնից պո՛ծիր:  
 Այս աշխարհում ինձ գերեզման  
 Միայն մնաց դեղ ու դարման:

Այս վերջին բանաստեղծութիւնն ուղարկելուց  
 վերջ, Գրիգորը մի անգամ եւս մտաւ Լ. գիւղը եւ ա-  
 ռաջին սովորութեան համաձայն Օհանեսնց տանը հիւր  
 եղաւ: Օհանը գիւղը չ'էր նոյն օրը. Շուշանը տեսնելով  
 այս անգամ Գրիգորին, մի խոժոռ հայեացք ձգեց նորա  
 վերայ, ասելով.

— Գրիգոր՛, չ'ես ամաչում. այն ի՞նչ թղթեր ես  
 ուղարկում ինձ. դու ուզում ես ուրիշին պատկանած,  
 ուրիշին նուիրուած սիրտը խլել՞. դա ձեր փոստ ապ-  
 բանքներին չի նմանում, որը ո՞ւմն ուղեհաք՝ ծախէք.  
 Խնդրում եմ, այսուհետեւ թղթեր մի՛ գրէք ինձ. ապա  
 թէ ոչ՝ մեր տանը էլ ոտք չը դնէ՛ք. ես մի թշուառ  
 ու հիւանդոտ աղջիկ եմ. ձեր քաղաքի զարդարուն  
 աղջիկները յարմար են քեզ պէս քաղքցուն հարս գառ-  
 նալու. ի՞նչ ես տուել ինձ, որ պոկ չ'ես գալիս: Ես  
 չ'էի ուզում այս բաները գործածել, բայց դու այնքան  
 հետեւեցիր, որ ստիպել տուիր ինձ ասելու, որո՞նք մի  
 տարուց ի վեր դիզուել էին սրտիս վերայ:

Այս խոցոտիչ խօսքերը լսելով Գրիգորը իւր  
 պաշտելի էակից, սրի եւ դնդակի հարուածներէից ա-  
 լելի ազդեցութիւն գործեց իւր սրտի վերայ. նա ուխ-

տեց այլևս չը վերադառնալ քաղաք, այլ Լ. գիւղից  
 երկու տուր ճանապարհաչափ հեռու ծովամիջի Լիմ  
 անապատը գնալ: Նա կատարեց իւր ուխտը: Վանքի  
 միաբանները նրան իրենց աչքի լոյսի պէս սիրում  
 էին, որովհետեւ Գրիգորը իւր ջերմեռանդութեամբ,  
 շնորհքով եւ ազնուականութեամբ գերազանցում էր  
 բոլոր ձգնուորներին, սակայն Շուշանի սէրը կարելի  
 չէր մի վայրկեան անգամ մոռանալ, ինչպէս տեսանք  
 նրա սիրոյ համար էլ յանձն էր տուել Լիմ անապատից  
 վարազի վանքն ուխտի գնալ, միայն թէ Շուշանի  
 կերպարանքն ու հասակը տեսնելով իւր սրտի փափաքն  
 առնէր: Գրիգորի զարմանքը մեծ եղաւ, երբ վարա-  
 զում Շուշանը հրաւիրեց նրան մինչեւ անգամ իրենց  
 գիւղը իւր գաղանիքը յայտնելու: Բնազգը նրանում  
 շատ բաներ էր յայտնում:

## ԺԳ.

Գրիգոր սարկաւազը վարազից մեկնելով երկու  
 օր քաղաքում անցկացրեց իրենց հայրենական տանը  
 կարօտակէզ մօրը հիւր լինելով, երրորդ օրը նա Լ.  
 գիւղը գնաց, ուր անհամբեր սպասում էին նրան Շու-  
 շանն ու Շողիկը: Օհանի ընտանիքը մեծ պատուով  
 ընդունեց նորան, սակայն գաղանիքին ծանօթ էր մի-  
 այն Շողիկը, որ ինչպէս գիտենք, Շուշանի միակ  
 գաղա՛սպահն էր: Շուշանը Շողիկի հետ միասին Գրի-  
 գոր սարկաւազի մօտ գնացին իրենց հիւրանոցը, ուր  
 առանձին նստել էր նա եւ գիրք էր կարդում: Շու-

շանն ամենայն մանրամասնութեամբ պատմեց Գրիգոր  
 սարկաւազին Աւագի եւ Մարոյի անյայտանալու պա-  
 րագաները եւ վարազայ վանքում իւր տեսած երազը:  
 Քանի նա պատմում էր, նոյնքան սարկաւազը յուզ-  
 ւում եւ ուրախութեան արտասուքներ էր թափում,  
 մինչեւ որ այս բառերով վերջացրեց Շուշանը իւր  
 այրած սրտից բղիտող պատմութիւնը:

— Այժմ ընտրութիւնը քեզ է մնում, Գրիգոր,  
 կամ ինձնից կը հրաժարուես, կամ վարդապետու-  
 թիւնից:

— Ես ամենը կը զոհեմ քեզ համար, Շուշան.  
 ամբողջ երկու տարի է լինում, որ քո սիրով տան-  
 ջուեցի ես, հաւատա՛, իմ անուշահոտ Շուշան, չի պա-  
 տանել մի գիշեր, որ երազումս չ'եմ տեսել քեզ. դու  
 թէեւ ինձ անարգում էիր, անդիմանում էիր, բայց  
 կարծես ինձ ասէին. «մի յուսահատիր, նա քոնն է»:  
 վարազում տեսածդ երազի նման միեւնոյն գիշերը ես  
 էլ մի երազ տեսայ, որով քեզ հետ սրահուում էինք:

— Գրիգոր՛ը, ես իմանում եմ, որ քո տառապանք-  
 ները շատ եղան, եւ այդ ամենի պատճառը ես եղայ.  
 սէրը կուրացրել էր ինձ, որ չէի կարողանում քո եւ  
 Աւագի մէջ արժանիք ասած յատկութիւնը որոշել: Ես  
 Աւագին փորձեցի, բայց տեսայ, որ նրա դէպի ինձ ու-  
 նեցած սէրն այնքան էլ կատարեալ չ'էր. նա Մարոյի  
 հետ խօսած ժամանակը՝ նրանում սէրը երկուսի բա-  
 ժանուեց, մինչդեռ դու տեսար, որ ես նրա սիրուն  
 մերժեցի քեզ. այժմ նոր եմ զգում, թէ դու ս'ըբան  
 բարձր տեղ ես բռնում իմ սրտում, դու իմ պատճա-  
 ուս մինչեւ անգամ ուրացար աշխարհ, կարծես ամ-  
 բողջ աշխարհումս ինձանից սիրուն աղջիկ չ'կարեհա-

յիւր ճարտել, բայց Մարօն մի անգամ խօսելով նրա հետ, տարաւ նորա սիրտը: Նա ոտնատակ արաց իմ սէրը, թէեւ ես նրան միամտացրի հաւատի սիրոյ անուշտով. հաւատի սէր ունեցողը՝ կարող էր եւ ուրիշ կերպ վարուիլ: Այն զիշէր նրան ես տեսայ, ինչպէս մի փոփոխական երախայ, նրա համար էլ իմ սիրտը պողեց նրանից. հէնց էն բողէին քո անկեղծ սիրոյ շողը կաթեց իմ սրտում. ինձ համար Աւագը այլեւս մեռած էր համարում: Առաջները՝ երբ ուրիշներն ինձ վերայ աչք էին դնում, ես կարծում էի թէ՛ նրան մօրթոտել էին ուղում, հէնց արիւնաթաթախ սուրը նրա կրծքից դուրս էին քաշում, բայց նա փոխադարձաբար այնպէս չէր զգում եւ ինձ համար: Ես վաղուց գուշակել էի, որ Մարօն հետեւում էր նրան. նա իւր պահ մտած տեղից շարունակ ուղարկում կանչում էր Աւագին եւ ժամերով միասին էին մնում. իսկ վարագ ուխտի եկած օրն էլ ո՛ւր որ գնար Աւագը, նա առանց ամաչելու՝ նրա հետեւիցն էր նայում. ինչ տեղ նստէր նա, միշտ նրա երեսին էր մտիկ աալիս, առանց աչքերը թարթելու: Ես նկատում էի, որ Աւագն էլ երբեմն խնչիկ-փնջիկ էր անում նրա հետ, բայց երբէք չէի հաւատում նրանից, թե նա պակաս է սիրում ինձ. ես կարծում էի, թէ նրա սիրտն էլ իմ սրտին է նմանում: Ա՛խ, ես շատ երկարացրի պատմութիւնս, Գրիգոր, այնպէս չէ՞. սակայն վշտացած սրտերը պէտք է որ սիրելիների տաջ անկեղծաբար բացուին:

— Դու որքան խօսիս, այնքան էլ սիրելի ես դառնում ինձ, Շուշան. ես վաղուց փափաքում էի քեզ հետ երկու խօսք միայն խօսել, բայց դու չէիր կամենում. այժմ որ խօսում ես, կարծում եմ թէ լսածներս երազ են:

— Ուրեմն ի՞նչ միջոց ես գործ դնում հօրեցս կամք առնելու, որ քո սարկաւազութեան խնդիրն արգելք չը լինի, ասաց Շուշան:

— Ես հէնց այս բողէին կը գնամ եւ ամեն բան պարզութեամբ կը յայտնեմ նորան: Նա արգէն իմանում է, որ ես քո սիրոյ համար անապատը մտայ, որ քո ուրիշի վերայ պտակուիլը չը տեսնէի, եւ եթէ հնար լինէր, մինչեւ անգամ չը լսէի: Ես չ'եմ կարծում, որ Օհանը մերժէ. նա ուրիշների նման նախապաշարեալ մարդ չէ, պատասխանեց Գրիգորը:

Շողիկը լուռ ու մտնջ լսում էր Շուշանի եւ Գրիգորի խօսքերը: Նա յայտնեց, որ Օհանը մի քանի զիւղացիներէ հետ թոնրատանն էր նստել եւ մի ինչ որ զիւղական հարցի մասին էին խօսում: Գրիգորն Օհանեց թոնրատունը գնաց եւ շնորհալի կերպով բարեւեց ներկայ եղողներին ու նստեց. առջին անգամ նրա աչքին պատահեցաւ Օհանի գէնքերը, որ նոր էր սրբել եւ թոնրատան պատերից կախել: Գրիգորի հետաքրքրութեամբ գէնքերին նայելը նկատելով Օհան, հարցուց ծիծաղելով.

— Սարկաւազ, դո՞ւ էլ գէնքի թշնամի ես:

— Բնդհակառակը, պատասխանեց սարկաւազը, ես գէնք չը գործածողներին թշնամի եմ. որովհետեւ, մի մարդ, որ իւր կեանքն ու պատիւը չի կարող պաշտպանել, չի կարող պահպանել նաեւ հաւատի սրբութիւնը:

— Ապրի՛ս, ազնիւ եկեղեցական, երբ քեզ նման հարիւր հատ եկեղեցական ունենայ հայ ազգը, այն ժամանակ կարող է իւր ազատութիւնը ձեռք բերել, ասաց Օհան:

Երբ սոքա այս տեսակ խօսքերով էին ղրաղվում. ահա հիւրանոցի գրանը չորս զինուած քիւրդ ձիաւորներ իջան. Խան Արդալի ծառաներն էին, որոնք կանչեցին Օհանին եւ մի փակուած նամակ յանձնեցին նրան, հայերէն գրերով գրուած: Խան Արդալն այս նամակով յայտնուած էր Օհանին, թէ Օսման փաշան իրենց վերայ է եկել եւ լուր է ուղարկել, որ սիրով յանձնուեն եւ հնադանդուելու խօսք ասն:

— Խանն ի՞նչ է պատասխանել փաշային, հարցուց Օհան:

— Նա ուզում է կռիւ անել, պատասխանեց Ալին (այսպէս էր լրաբերներն մեծի անունը):

Օհանը մի օր առաջ էր եկել խանի մօտից. նա արդէն այս մասին խորհուրդ էր տուել, որ անձնատուր լինէր. որովհետեւ նա լաւ գիտէր որ խանի խաթամուծ ամբոխը չ'էր կարող կանոնաւոր զօրքերի հետ կռուել. բայց խան Արդալը չ'էր ուզեցել մտիկ անել նրա խորհրդին, յոյս գնելով իւր բազմաթիւ քիւրա ցեղակիցների վերայ: Օհանն այս անգամ երկգիմի պատասխանեց խանի նամակին: Օձի գլուխը ջախջախելու ժամանակը հասել է... ասաց իւր մըտքում եւ հետեւեալ կարճ նամակը գրեց:

Մեծազօր Տէ՛ր իմ, Խան Արդալ.

Ձեր նամակն առի. ես արդէն այդ մասին խորհուրդ տուել եմ Ձեզ. եթէ հաւատում էք Ձեր մարգերի անձնութեան, զիմադրեցէ՛ք:

Չիաւորները նամակն առին ու հեռացան:

Խան Արդալը վստաղութեամբ Գաւաշ գաւառի Մոխրաբերդունն էր ամբացել այս ժամանակները: Նա ցեղակից էր անուանի Բաղրխան բէյին եւ խան Մահմուտին:

Գրիգոր սարկաւազն առանձնացաւ Օհանի հետ. նա ասում էր.

— Խան Արդալի զօրութիւնը պիտի ջախջախուի թէեւ, բայց տարակոյս չ'կայ, թէ մի բռնապետից ազատուելով դարձեալ պիտի ենթարկուենք մի ուրիշ բռնապետութեան:

Թիւրք մեծամեծներն էլ այսպէս էին ասում. «Հայե՛ր, դուք ինչի՞ էք ուրախացել, Շարիֆ գնաց, Օսմանն եկաւ, Օսմանն էլ գնաց՝ Մահմուտն է գալու. երբ «Սաչօ» անուշով փաշա գալու լինի, այն ժամանակ ուրախացէ՛ք»:

Շատ ճիշդ էին թիւրքերի նկատումները: Հպատակ ժողովուրդը, որ ստրկութեան ամենացած անդունդն էր իջել, երբ տեսնում էր իշխանութեան փոփոխութիւնը, կարծում էր՝ թէ նորեկ գառաւորը իր աղատութիւնն էր բերելու հետը: Դժբաղդաբար շատ անգամ պատահում էր, որ լաւերը գնում էին եւ աւելի վատերն էին յաջորդում նրանց:

Գրիգորը երկար խօսեց Օհանի հետ. եկեղեցականները մտաւոր եւ բարոյական վիճակի, ժողովուրդի կրած ստապանքների եւ նոցա դարման տանելու մասին, որոնք Օհանի գլխաւոր խորհրդածութիւններն էին, յետոյ խօսքը փոխեց Գրիգոր իւր անապատ գնալու եւ իրերի փոփոխուելու մասին: Վերջապէս նա բացարձակօրէն յայտնեց Օհանին իւր մտադրութիւնը: Օհանին անհաւատալի էր թուում Շուշանի յամառ կամքի փոփոխուելը. նա քիչ խորհելուց վերջ՝ պատասխանեց.

— Գրիգօ՛ր, ես իմանում եմ, որ դու Շուշանի պատճառով զոհեցիր աշխարհային բոլոր հաճոյքներդ.

ինչպէս գիտես, ես առաջ էլ խօսք էի տուել քեզ. եթէ Շուշանն ուզում է, ես երբէք չ'եմ հակառակուի, եթէ դու նոյնիսկ վարդապետ էլ ձեռնադրուած լինէիր, ինձ համար երբէք նշանակութիւն չ'ունին այդ տեսակ հարցեր, որովհետեւ ես փորձով իմանում եմ թէ սէրը միշտ սէր է մնում. դու եթէ նոյն իսկ կաթողիկոս լինէիր, միշտ պիտի յիշէիր Շուշանին եւ հառաչանքներն անպակաս պիտի լինէին քո վշտացած սրտից. այս համոզումով էլ հենց այս գիշեր կը կանչեմ սէր Մուշեղին, թող նշաններդ օրհնէ:

Գրիգորը վերկայաւ նստած տեղից եւ Օհանի ձեռքը համբուրեց ու բախ սրտով: Օհանը կանչեց իւր վահան որդուն եւ հարս Շողիկին, որոնցից ստուգեց Շուշանի մտադրութիւնը եւ անմիջապէս ուղարկեց վահանին սէր Մուշեղին կանչելու, որը գալով՝ ուրախ սրտով օրհնեց Գրիգորի եւ Շուշանի նշանադրութիւնը:

Հետեւեալ օր Գրիգորը վերադարձաւ քաղաք եւ ուրախութեան աւետիսը տուաւ իւր այրի մօրը: Նա միեւնոյն օրը հանեց վրայից անապատականի սեւ սքեմը եւ հագաւ իւր նախկին հաղուստները. միբուքն էլ ածիլեց եւ մի ամսի չափ փափուեցաւ տանը, որովհետեւ գլուխը չէր կարող անից դուրս հանել: Ամեն կողմից «նո՛ւյ, բո՛ւյ, ուխտազանց» էին կանչում նրան: Անառակ երախտները կտուրներից հայնոյում, քար, հող ու ջուր էին ածում նրա վերայ. քիչ էր մնում, որ խեղճին քարկոծէին: Անապատի փախստականը ստիպուցաւ ակամայ բանտարկութիւնը կրելու: Օհանի փոռէսդանութեան անուներ բոլորովին հաստատուեց վերան, որովհետեւ նա յանձն էր առել սարկաւազին

աղջիկ տալու: Մուկ Աւէի գործը յաջողուեց. նա այլ եւս իւր բնական սուլորութեան համաձայն թողեց գիւղական գործերը եւ բամբասանքի մեծ պարկը շալակած գիւղերն էր ման դալիս Օհանին վատահամբաւելու համար. նա մինչեւ անգամ առաջնորդարանը գնաց եւ սէր Մուշեղի կարգադրկութիւնն էր պահանջում առաջնորդից: Տէր Մուշեղը «օրիւօփ մասնեսյի եւ զանձիւփ եղիցի փրկութիւն» կանոնի զօրութեամբ աղատուեցաւ:

Գիւղացիներին ու քաղաքացիներին շատերը ցաւում էին, որ Գրիգոր սարկաւազի նման մի լաւ մարդ յանձն առաւ զօհելու իւր սարկաւազութեան աստիճանը մի լուսնոտ աղջկայ համար:

Աւագի ծնողները խիստ տխուր էին, իրենց որդուց մի լուր չ'ունենալու պատճառով. ուրախ էին միայն Մարօյի ծնողները՝ Կակոսն ու Փեփրոնէն, որ Աւագի նման մի խելացի աղամարդի հետ էր գնացել իրենց աղջիկը, եթէ խորհելու մի կէտ կար, այն էր, որ չ'էին գիտէր՝ թէ ուր են գնացել նոքա: Փեփրոնէն լսել էր, որ քաղաքում Կորէճոնց Մանուկը բախտ բանալ էր իմանում. երբ ամիսն անցաւ Աւագից ու Մարօյից մի լուր չ'եղաւ, կախարդին դիմեց նա: Կորէճը քրքրեց իւր թերմաշ գրքերը, մինը վերցնում ու միւսը ցածր էր դնում. նա իւր չորս կողմում շարել էր զանազան նշանադրերով թղթեր եւ հին ձեռագրքեր, որոնց «Սողոմոնի», «Աեցիսագարեայ» եւ «Մորարփ» էր անուանում: Կախարդը մի քանի գրքեր ձեռքեւցեց յետոյ, մի քանի խորհրդաւոր տառեր գրեց թղթերի վերայ. այս գործողութիւնները լրանալուց յետոյ, դարձաւ դէպի Փեփրոնէն եւ ասաց.

— Մօրքոյր, ըստ ասած տղէն ըսանեւհինդ տարեկան, պարթեւ հասակով մի գեղեցիկ երիտասարդ է. նրա առջեւ երկու ճանապարհ կայ, դուք համարում էք նրան, որպէս կորսուած մի որդի. նա ո՛ւր որ էլ գնացել է այս մօտիկ օրերում պիտի վերադառնայ, բայց նրա միտքը սխալ է. ինչ գործի համար որ գալու է, չի՛ յաջողուիր. նրա վերջը շատ վատ լինելու է, որովհետեւ երկու աղջիկներ կան, որոնք նրա խելքը տարել են. նա քիչ յիտոյ իւր խելքն էլ պիտի գցէ:

Փեփրոնէն ախուր տրտում գիւղը վերադարձաւ քաղաքից, գուշակութիւնը խիտա վատ տպաւորութիւն գործեց նրա սրտի վերայ, նա ողջ առողջ գնաց քաղաք ու հիւանդ վերադարձաւ գիւղը, թէեւ կորէծը իւր աղջկայ մասին վատ գուշակութիւններ չէր առնել, բայց նա ցաւում էր որ Աւագի սէրը երկուսի էր բաժանուել:

Գրիգոր սարկաւազի նշանօրհնութեան օրից մի ամիս անցել էր. նրա մայրը հարսի համար օժիտներ առնելով և գիւղը գնաց, ուր մի շաբաթ հիւր մնալուց վերջ՝ հրաւիրուեցաւ եւ Գրիգորը: Առաջնորդը հրաման էր տուել, որ ամուսնանար սարկաւազը, հրաման էր տուել նաեւ լիմ անապատի Գարբիէլ և պիսկոպոսը, որը թէեւ շատ էր ցաւում Գրիգորի նման մի ուսեալ սարկաւազից զրկուելուց, բայց երբ համոզումները չը կարողացան ազդել Գրիգորի վերայ, ստիպուած՝ նրա ազատ կամքին թողեց:

Գրիգորը չ՛ ուզեց շքեղ կերպով հարսանիքի հանգէս կատարել. ինչպէս գիւղացիները սովորաբար դ՛օլ գուռնով էին կատարում, Օհանի ցանկութիւնն էլ

արդէն այդպէս էր: Նա և, գիւղի Ս: Ստեփաննոս եկեղեցում պատկուեց Տէր-Մուշեղի ձեռքով:

Երբ նորապսակ հարս ու փեսէն եկեղեցուց տուն էին վերադառնում, որոց հետեւում էր գիւղական խառնիճաղանջ ամբոխը, միեւնոյն ժամանակ մի պարթեւահասակ երիտասարդ մինչեւ մէջքը ձիւների մէջ թաղուած գէպի գիւղն էր գալիս անհամբեր: Աւագն էր. նա և, գիւղը հասնելով առաջին անգամ ուզում էր Օհանեհց տունը գնալ եւ Շուշանի հետ տեսութիւն անել, ապա իրենց տունը գնալ: Նա տեսաւ, որ բաղմութիւնը եկեղեցուց գէպի Օհանեհց տունն էր յառաջանում. Աւագը հասկացաւ թէ հարսանիք էր կատարվում, բայց թէ ովքե՞ր էին պատկուողները՝ չէր իմանում. նա տեսաւ՝ որ մի խումբ երիտասարդ եւ մի խումբ աղջիկներ հարսի փեսի առջեւն էին ընկել, ուրախ գուարթ հանաքներ էին անում: Փեսին շուրջալաւ, սուրը մէջքին կապած եւ աւետարանը գիրկն էին տուել, իսկ հարսի զլխին մի հաստ քօղ էին գցել, ձեռքին տուած մի ձերմակ թաշկինակ, որի մի ծայրն էլ փեսէն էր բռնել: Հարսնաւորներից առաջագնաց երիտասարդները ճանաչելով Աւագին, սկսեցին ուրախութեան աղաղակներ բարձրացնել, ասելով.

— Աւագն է, Աւագն է, տղամարդը լաւ հասաւ, որ Գրիգորի եւ Շուշանի հարսանիքին ներկայ գտնուի:

Երբ Աւագը լսեց այս մահացուցիչ խօսքերը մէջքը խրած դաշոյնը մերկացրեց եւ փեսայի վերայ յարձակեցաւ. փեսան էլ մի ձեռքով աւետարանը բռնած՝ կշտից կախած սուրը մերկացրեց իւր անձը պաշտպանելու համար: Հարսանիքը տրտմութեան փոխուեցաւ եւ հարսնաւորները երկու մասի բաժնուե-

ցան, մի մասն Աւագին էր ուզում արդիւիւլ, միւսը փե-  
սային : Աւագն ու Գրիգորն առիւծի նման դռում էին.  
ուզում էին, որ իրանց բռնողները ձեռքից դուրս գա-  
յին : Աւագին յաջողեցաւ մի անգամ պրծնել արգե-  
լողների ձեռքից, բայց անա միւս խումբն արգելեց  
նորան: Աղմուկ, աղաղակ եւ հայհոյանք յաջորդեց  
խաղաղ ուրախութեան. կռուի լուրը շուտով հասաւ  
Օհանին, որը հիւրանոցում նստած հարս ու փեսի եւ-  
կեղեցուց վերադառնալուն էր սպասում: Պոսոյենց  
կողմի մարդիկ արդէն զիւղական սովորութեան հա-  
մաձայն հաստ փայտերով զինուած կռուի տեղը հասել  
էին: Բաղմութիւնը ծովի ալիքները նման միմիանց  
վերայ էր կուտակվում, փայտի հարուածներ էր, որ  
տալիս էին միմիանց. հարիւրաւոր կտարուած փայտի  
կտարները վեր էին թռչում եւ բաղմութեան վերայ էին  
թափվում. կտարած գլուխներից աղբիւրի նման ար-  
իւն էր հոսում: Որովհետեւ նոյն օրը Աւագը երկար  
ձանապարհ էր եկել, ոտներում եւ թեւերում այն-  
քան կարողութիւն չէր մնացել, նորա համար չը կա-  
րողացաւ իւր բարկացած կրքի արդիւնքը տեսնել,  
չատերին վերաւորել էր արդէն, եթէ յոգնածութիւնն  
էլ չը լինէր, անսպասձառ շատերին էլ պիտի սպանէր:  
Տէր Մուշեղը կռուի ձայները լսելով եկեղեցուց հա-  
սաւ կռուատեղը եւ մէջներն բնկաւ հաշտութիւն կա-  
յացնելու. նրա ազդու ձայնը եւ պատկասելի դէմքը  
կռուողների վերայ մեծ ազդեցութիւն դործեց : Նա  
ստում էր.

— Անխելք ժողովուրդ, երկու զինուած քրդի  
առջեւ կասու էք դառնում. իսկ միմիանց հետ կրու-  
ուելիս՝ առիւծ :

Նրան ցոյց տուին արիւնաշաղախ Աւագին, որը  
դեռ ձգտում էր իրեն բռնողները պրծնել ու Գրիգորի  
վերայ վազել. սուրն առել էին ձեռքից. խելքը կո-  
րուած մարդու նման այլեւս չէր իմանում նա այս  
ժամուն, թէ ինչ էր գործում. նրա իմացականու-  
թիւնը գրեթէ կորսուել էր: Հարս ու փեսին մի կեր-  
պով անվնաս ներս փախցրին:

Շուշանը լուս էր նորահարսի սովորական պար-  
կեշտութեամբ, իսկ Գրիգորը կրակ էր կտրել իւր դէմ  
կատարած անսպասվութեան պատճառով: Նոքա հարս  
ու փեսի համար պատրաստուած թախտի վերայ էին  
նստել, Շուշանը Գրիգորի ականջին այսպէս փսփսաց.

— Գրիգոր, մի յուզուիր. նա իւր սրտի կսկիծից  
այնպէս արաց. արդէն ամեն բան վերջացաւ. էլ ինչի՞  
ես նեղվում:

Գրիգորի մօր ձեռք ու ոտքը դող էր առել քա-  
ղաքացի կնոջ յատուկ եղած երկչոտ բնաւորութեամբ:  
Տէր Մուշեղը եւ զիւղական անկողնակալ անձինք մի-  
ջամտելով, կռուին վերջ տուին. ամեն ոք իւր տունը  
քաշուեցաւ : Կակոսն ու Փեփրոնէն Պոսոյենց տունը  
գնացին, որ Աւագից լուր առնէին Մարոյի մասին:  
Որքան հարցեր արին նրանից, ոչ մի պատասխան  
չկարողացան ստանալ, որովհետեւ այդ ժամանակ նրա  
ականջները խլացել էին. նա իւր հոգեկան դրութեան  
մէջն ընկած՝ տանջվում էր, իսկ ծնողքը զիւղական սո-  
վորութեան համաձայն խանձով էին փաթաթում նրա  
գլխից ստացած վերքերը :

Նոյն զիշերը Աւագը հնոցային տենդով տա-  
ռապում էր. նա ոչինչ չկերաւ. հետեւեալ  
օր դարձեալ ուզում էր յարձակում գործել Օհանենց

տան վերայ, բայց նրա ճնողքն ու դրացիները արգելեցին: Խեղճ երիտասարդը հառաչանքներով եւ ա՛խ ու վա՛խ քաշելով լաց էր լինում. նրա մայրը՝ ձեռները կցել ու գլխի վերեւ նստած ողբում էր իւր թշուառ որդու դրութեան վերայ. նա շարունակ իւր էրկան ասում էր .

— Մարդ, որդիս խելագարվում է. մի ճար, մի դարման հասցրու սրան :

— Ի՞նչ ճար անեմ, կնիկ. էլ պտակուած հարսին կարելի՞ է ետ առնել. մեղաւորն ինքն է. ինչի՞ Մարոյի հետ փախաւ, որ սրան այսքան սիրում էր :

Այս խօսակցութեան ժամանակ Աւագ խելքը գըլուխն էր եկել եւ հօր խօսքն ընդհատեց ասելով .

— Բարէօ, Շուշանն ինքն ասաց. «Մարոյին տար Ռուսաստան, որ ազատուի քրդերից», եւ սկսեց հեկեկալ :

— Դու Մարոյի հետ չը պտակուեցա՞ր, որդի, հարցուց մայրը :

— Չէ՛, ես նրան յանձնեցի իւր մօրաքրոջը, պատասխանեց Աւագը :

Էլ չկարողացաւ խօսել, որքան ուզեցին իմանալ թէ ո՛ւր էր նրա մօրաքոյրը : Այդ ժամանակ կրկին եկան կախոսն ու Փեփրոնէն . Պոսօն պատմեց նրանց, որ Աւագը Մարոյին տարել յանձնել էր Ռուսաստանում իւր մօրաքոյր Նուբարին :

Այս անպատվութիւնը անտանելի էր ճնողների համար, որովհետեւ Աւագը չէր պտակուել նրանց աղջրկայ հետ . բայց ո՛ւր էին Ընէս Միսոյենք, չկարողացան համկնալ : Աւագը գլուխը ծռել էր, ինքն էլ չէր իմանում, թէ ինչ էր խորհում . որքան հարցեր

էին անում նրանից, չէր պատասխանում : Փեփրոնէն խորհուրդ տուեց նրա մօր՝ Գոհարին, որ քաղաք գնար եւ կորէծուն գիր բանալ տար : Գոհարը քաղաք գնաց եւ կորէծին դիմեց. կախարքը միեւնոյն գուշակութիւնն արաց, ինչ որ արդէն արել էր Փեփրոնէին. նա բարկացաւ Գոհարի վերայ ու յանդիմանեց նրան այս խօսքերով .

— Դու չե՞ս հաւատում իմ գուշակութիւններին. ես քանի օր առաջ գուշակեցի քո որդու մասին, այժմ ինչի՞ անուշդ էլ փոխել ես :

Բայց Գոհարը գործից տեղեկութիւն չ'ունէր, ինչպէս տեսանք Փեփրոնէն էր, որ քանի օր առաջ այս հարցն արել էր կորէծուց. որովհետեւ կախարքը սովորութիւն ունէր նախ ճնողների, յետոյ գուշակուած անձերի անունները գրել եւ զանազան մանուշաճուրղաւ հարցումներ անել պատահած դէպքի պարագաներից, յետոյ գուշակութիւն անել. նա հարցրեց Գոհարից :

— Քո անունը Փեփրոնէ չէ՞, քո էրկան անունը կակոս չէ՞, դու Լ. գիւղացի չե՞ս, Աւագը քո աղջկան չէ՞ր փախցրել :

— Ո՛չ, պատասխանեց Գոհարը. ես թէեւ Լ. գիւղացի եմ, բայց իմ էրկան անունը Պոսօ է. Աւագն իմ որդին է, իսկ տարած աղջիկը մեր գիւղացի կախօսինն է :

Կախարքը հասկացաւ եղելութիւնը, թէ քանի օր առաջ իւր մօտ հանդիպողը թէեւ այս հարցի վերաբերմամբ գուշակութիւն անել տուել էր իրեն, բայց ուրիշ կին էր, ուստիեւ մեղմացրեց իւր բարկութիւնը, հետեւեալ խօսքերն ուղղելով Գոհարին :

— Մօրքոյր, մի՞ քանի օր առաջ ես գուշակեցի քու որդու մասին, շատ էլ դժուարութիւն քաշեցի, բայց ինձ մօտ եկող անզգամ կիներ ինձ խաբեց, նա իմ աշխատութիւնները չը վարձատրեց, նրա համար էլ քո որդին գժուել է:

Գոհարը կախարչին ոտներն էր ընկել, աղաչում, պաղատում էր, որ իւր որդու փրկութեան համար մի ձար անէր: Կախարդը խոստացաւ. այն պայմանաւ, որ մի զոյգ սև հաւ ուղարկէր եւ մի լիտր մաքուր իւղ: Գոհարը ո՛չ միայն պահանջուածները կ'տար իւր որդու ազատութեան համար, այլև իւր հոգին էլ պատրաստ էր հանել եւ Կորէձին յանձնել, միայն թէ Աւագն առողջանար: Հետեւեալ օրը Գոհարը մի իշարէտ բարիք բարձած Կորէձուն նուէր ուղարկեց եւ փոխարէնը մի եռանկիւնի՝ փաթաթուած թղթի կտոր ստացաւ, որը նա պատուիրել էր Աւագի հագուստի վրայ կարել:

Աւագի դրութիւնը քիչ քիչ լաւացաւ, որից յետոյ Կորէձը\* մարգարէի համբաւ ընդունեց Վասպուրականում: Օրը հարիւր մարդիկ էին դիմում նրան, գուշակութիւններ էին անել սալիս եւ կախարդական

(\*) Կորեձ՝ կախարչի մակաւորակն էր, որի համար էլ այս անունով էր անուանուել եւ: Միևեւ աշտր էլ երա համբաւը մնացել է Վանայ ժողովրդեան մէջ, այս կախարչի մասին զանազան առասպելական պատմութիւններ եւ անուն, որոնք քի եւ գիր էր գրուել եւ մարկանց տալիս, նոյն աներեւոյթանուն էին: Եղուցի վերայ գիր էր գրուել եւ կանանց էր մերկացնուել:

գրեր էին առնում: Սիրահարները, հիւանդատէրերը, կորուստ ու՝ եցողները, մանկացածները, վերջապէս նրանք՝ օրոնք մի ցաւ, մի վիշտ ունէին, Կորէձուն էին դիմում. նրա տունն ախտաւորներով լիքն էր: Նա զաղանապահ ընկերներ ունէր, օրոնց պաշտօնն էր քաղաքում, գիւղերում ման գալ եւ կախարչի հրաշքներն ամէն ախտաւորներում պատմել. նրանցից մինն այսպէս էր պատմում.

— Ես տղայ էի, հայրս բաւական կարգալ գրել էր իմանում. նա ուսման շատ սէր ունէր. ինձ Կորէձի մօտ աշակերտ առեց, նա եւ հայրս շատ մտերիմ բարեկամներ էին միմեանց: Մի քանի տարի նրա մօտ աշակերտելուց յետոյ աներեւոյթանալու դասն էլ սովորեցրեց ինձ: Ձ'նուն էր. նա մի փոքրիկ գիր գրեց, յանձնեց ինձ, պատուիրելով՝ որ ճանապարհին պատահողներին հետ չը խօսէի. նա առաց, «Եթէ մէկի հետ խօսի, կամ բարեւես, թալիսմանը կ'աւրուի եւ դու էլ կը գժուես»: Գիրը ծոցս դրի, արշալոյսի մօտերը Այգեաստանից քաղաք գնացի, մտերմագոյն բարեկամներիցս շատերը պատահեցին ինձ, բայց չ'էին բարեւում: Քաղաքը հասայ եւ ուղղակի այն սրճարանը մտայ, որ ամեն օր գնալու սովորութիւն ունէի: Սրճարանապետը դեռ նոր էր սկսել կըրակ անել, եւ դուռը բացի ներս մտայ, սափրիչը եւ դարձաւ եւ դէպի դուռը նայեց, բայց ոչ ոքի չ'տեսաւ. նա իւր գոյնը գցեց երկիւղից ու սկսեց խաշակնքել երեսը. եւ կրկին դուռը բացի, սափրիչը մի դարհուրելի ճիչ արձակելով սրճարանից դուրս փախաւ: Ես դուրս ելայ սրճարանից եւ գնացի այն մանրավաճառ բարեկամիս կրօպակի վերայ կանգնեցի, որը իւր հարգատ եղբօրը հաւատար սիրում էր ինձ. նա նոր էր

բացել կրպակը եւ իւր մանր մունր պարանքներն էր դրստում. ես նրա կշիռքը վեր վերցրի եւ անուկի վերայ դձեցի, որից աղմկալի մի ձայն բարձրացաւ. մանրավաճառը կշիռքին նայեց, որի առատաղին կապուած չուանը դեռ շարժվում էր. երբ նա նայում էր, ես նորից վերցրի կշիռքը. սարսափանար՝ երխասարդն էլ դուրս փախաւ կրպակից: Այս երկու գործողութիւնները կատարելուց վերջ, ես ինքս էլ մի երկիւղ զգացի. թողեցի շուկան եւ Պոյախանի գլխում գտնուած արտաքնոցներից մէկի մէջ մտայ եւ վրայիս գիւրն անհետացուցի: Շուկան վերադարձայ. մանրավաճառի եւ սրճարանապետի խանութների վրայ նորեկ խանութպանները գիղուել էին: Գունաթափուած սափրիչը եւ մանրավաճառը պատմում էին բազմութեան նոյն առաւօտեան իրենց գլխին եկածը. ես ծիծաղեցի նոցա երկչոտութեան վերայ՝ ասելով.

— Անպատճառ քամին բացած կը լինի դուռը կամ շարժած կշիռքը. սոցա աչքերին այդպէս է երեւացել:

Նորա երգվում էին, թէ «մի անգամ չէր տեսաներս, երկու երեք անգամ կրկնուեցաւ, ի՛նչ քամի, ի՛նչ բան. խօ՛ մենք կոյր չ'էինք, դու ծիծաղում ես մեզ վերայ, Կալի՛կ\*, ո՛վ էլ լինէր մեր տեղը կը վախենար»:

Կորէժու համբաւը չորս կողմ տարածուել էր:

(\*) Այս պատմութիւնը պատկեր կր Կալիկ վարժապետը սրանից երեսուն տարի առաջ մի արժանահաւաս վանեցու, որը նոյնութեամբ պատկեր եւ տղերս զրոյրին:

Մի անգամ թէմիւր փաշան լսելով նրա մասին, ուզեցել էր գուշակութիւն անել տալ, եթէ ուղիղը չը յայտնէր՝ կտխաղան էր բարձրանալու: Փաշան մի բան մոխրումն էր թաղել, մին էլ ձեռքումն էր բռնել եւ հարցրել էր նրանից.

— Այժմ գուշակի՛ր, ձեռքումս ի՛նչ եմ բռնել, իսկ մոխրումն ի՛նչ կայ թաղուած:

Կորէժը շուտ է գձում եւ մի քանի նշանագրեր դրելուց յետոյ՝ գուշակում է.

— Ձեռքումդ՝ մի խիլ կայ, իսկ մոխրում սակի եւ թաղել:

Փաշան տեսնում է, որ ձիշաը գուշակեց, աղատում է Կորէժուն կախաղանից:

# ԺԵ.

Գրիգոր սարկաւազը պատկուելուց վերջ՝ երեք օր մնաց լ. գիւղում. յետոյ քաղաք վերադարձաւ կնոջ եւ մօր հետ: Նրա դրացիներն եւ բարեկամները, մանաւանդ քանանները, դադարեցին նոցա տան հետ յարաբերութիւն անելուց: Նա միեւնոյն գարնան մտադրուեց Վանից Կ. Պօլիս գնալ: Պարզխտութեան մէջ վանեցիները միմեանց հետ ոխրով էին վարում: Օհան էլ համաձայն էր Գրիգորի այս պանդխտութեան դիմելուն, որ աշխարհ տեսնէր, մարդերի հետ ծանօթանար եւ իւր ինքնաշխատութիւնով ձեռք բերած ուսումը կատարելագործէր: Կ. Պօլսում Գրիգորի նման անձեր կարող էին միայն այլազգութիւն, խոհարարու-

թիւն, բեռնակրութիւն, սափրիչութիւն եւ զանազան ստորին պարագայունքներ ձեռք բերել, որով կարող լինէին մի չոր հացի գին ձարել թէ իրենց եւ թէ հայրենիքում ապրող դժբախտ ընտանիքի համար:

Օճանը խորհուրդ տուաւ Գրիգորին որ ժամկոչութեան պաշտօնը ձեռք բերէր Պօլսում, քան թէ ուրիշ անպատուարեր գործերով զբաղէր. որովհետեւ ժամկոչութեան հետ միասին կարող էր եւ ուսման հետեւել իւր պարագայ գտնուած ժամանակամիջոցներում:

Աւագը թէեւ առողջացել էր, բայց ամեն օր գընում էր քաղաք եւ Դոճկնց տան մօտերը նստում մինչեւ երեկոյ եւ կրկին գիւղն էր վերադառնում: Մի ամսից աւելի շարունակեց Աւագը քաղաք գնալ գալը, մինչեւ որ Շուշանը մի օր սիրտ արաւ նրան ներս կանչելու, խղճալով նրա արգահատելի դրութեան վերայ. նա նախ պատուհանից խնդրեց Աւագից, որ ներս գալով խելօք մնայ, պատկի օրուան պէս դժութիւններ չ'անի: Աւագը երգուեց, որ խելօք կը մնայ, մի ծրար ունի յանձնելու եւ մի քանի խօսքեր կ'ասի ու կը հեռանայ: Շուշանը իմանում էր, որ Աւագը իրեն ոչինչ չ'էր անելու, նրա վախը Գրիգորիցն էր. նա մտածում էր, թէ մի օր Աւագը կարող է վատել Գրիգորին, մանաւանդ թէ՛ շարունակ իրենց դռան վերայ կանգնելով դրացիները ծաղրին եւ բամբասանքներին առարկայ էին դարձել. Աւագին համոզելու եւ տանից հեռացնելու համար Շուշանի քաղցր լեզուն էր հարկաւոր: Շուշանը դուռը բաց արաց. Աւագը խիտտ պարկեշտութեամբ ներս մտաւ. Շուշանը նրան մինչեւ անգամ պտուղներ տուաւ ուտելու եւ հարցրեց, թէ կեանքիւրի էլ ախորժակ ունի՞: Աւագը փոխանակ պա-

տասխանելու՝ ծոցից մի ծրար թուղթ հանեց եւ երկարացրեց գէպի Շուշանը ասելով.

— Ա՛ն այս ծրարը. դու սրանք չ'էիք կարգացել. թող նոքա չ'մնան մի օտար մարդու մօտ: Գրիգորի գրած նամակներն ու ոտանաւորներն էին սոքա, որ Շուշանին էր ուղարկել: Շուշանը բաց արաւ եւ կարգաց հետեւեալ երեք ոտանաւորները:

Ա.

Երգի՛ր երգի, Տիտր սոխակ  
 Աղու ձայնովի արժիս միակ  
 Թեչեր շարժող գաղցրակուրագ.  
 Թե չ'հանես ձայնիկի ազդու,  
 Էլ չ'ես տեսի յասիս ինձ դու:  
 Մի համր եմ ես ինկաւուրսոյց.  
 Ե՛կ, մի՛ ծածկեր այն պիկի հանգոյց,  
 Զոր բնութիւնն ինձ քեզ ուսոյց  
 Այսպէս անս անեւ լարդիկ,  
 Մի հանկուրդ ունիս քաղցրիկ,  
 Որ չ'եւ կարող յայտնել լոյս իսկ  
 Անեւանեւ՝ հարստարմիկ  
 Կամ իւր պաշտած միակ անձիկ,  
 Թե կարեւաս արձակել զայն  
 Գոյի է արդեւ աշխարհս հաւնայն:

Բ.

Աշխուհի ունիս գերք աղաւնոյ,  
 Յօկերդ կամար, դեմքդ շուսնոյ.

Փայտն կոկոն խիստ հոսարէս,  
 Հասա անասոյ ե հրապարակ,  
 Երեսիդ գոյն պայծառ յաւէս,  
 Քիրդ ու բերանդ մաքուր, յսակ-  
 Փայտին դիմացդ վարժն անասակ:  
 Հասակդ ասես՝ խիստ վայելուչ  
 Մարմնոյդ անդամք գրաւեն գուշ,  
 Այսպէս յարմար, քաղցր եւ անուշ  
 Որ հայ աղջկանդ ե վայելուչ,  
 Թե զգացում եւ սիրտ ունիւի,  
 Պէտք ե հոգւով ինչ նեւ կապուիւ:

Ք.

Օ՛ն, նախ խորհի՛ր. սպա գործի՛ր.  
 Անեն գործում պիկն համբերի՛ր.  
 Կ'անցնին անեն երազք պասիր,  
 Իւղցրիկ յուսով միշտ սպասիր:  
 Որով երբեք չ'ես պառաւիր:  
 Ո՛հ, քանի՛ դառն ե քե խաբուիս  
 Այն եակից, որոյ պաշտես  
 Բոյրանուէր արտւոյդ յասիս:  
 Դառն ու ընդի ե, խղճայի,  
 Յայնժամ սպրուսոյ յաշխարհի:  
 Շուշանը արասուածութիւնը աչքերով եւ յուզուած  
 սրտով կարգաց այս ոտանաւորները. նա յիշում էր  
 Գրեգորի այս սողերը զբաժ ժամանակի կրած տառա-  
 պանքները, իսկ Աւագը, որ լսութեամբ դիտում էր  
 Շուշանին, ընդմիջեց լսութիւնն ասելով.  
 — Շուշա՛ն, դու իմ արեան պարտական ես, ես

պիտի գժուիմ կամ թէ պիտի մեռնիմ. այս աշխարհում  
 առանց քեզ կեանք ունենալ էլ աւելորդ եմ համա-  
 րում:

— Աւագ, դու չը լսեցի՞ր այն խօսքերը, որ վա-  
 րագայ վերին աւաղանի մօտ ասացի քեզ, երբ Մարօն  
 ծունկ էր չոքել առաջդ եւ աղաչում էր. ես այն օրից  
 եղբայր համարեցի քեզ, որովհետեւ՝ ի՛նչ սիրով որ  
 տանջուում էր քեզ համար Մարօն, նոյն սիրով տանջ-  
 ւում էր եւ ինձ համար Գրեգորը. Աստուած այնպէս  
 էր կամեցել, որ Մարօն քոնը լինէր եւ ես Գրեգորին,  
 դու ինչի՞ էն խեղճին տարար օտար աշխարհը թողեր.  
 Ինչի՞ էն խեղճին էլ անբախտացրի՛ր, ասաց Շուշան:

— Դո՛ւ հրամայեցիր, Շուշան. ես քո բոլոր հրա-  
 մանները կատարելէի, բայց վերջինս չկարողացայ կա-  
 տարել, պատասխանեց Աւագը:

— Պէտք է՝ որ այս խնդիրս էլ կատարես, եղ-  
 բայրս, դու կարող ես նորից գնալ այնտեղ, ուր Մա-  
 րօն սպասում է քեզ անհամբեր. իմ՝ Գրեգորի հետ  
 խաչով, աւետարանով պատկուելուց վերջ, էլ քեզ ինչ  
 յոյս է մնում, որ սպասում ես: Ես ցաւում եմ աւելի  
 քո վիճակի վերայ, Աւագ, ինձ էլ քեզ հետ մի տան-  
 ջիր. թշնամիներին մեզ վերայ ծաղրել մի՛ տուր,  
 գնա՛ Մարօյի հետ պատկուի՛ր:

— Արդէն ես եկել էի, որ քեզ ու ծնողներին  
 միասին տանէի, որ դու Մարօյի հետ վիճակ գծէիք.  
 կամ թէ մի կերպ հրաման տայիր ինձ, որ ես նրա  
 հետ պատկուէի Երեւանում: Ընէս Միսոյենք էլ այնտեղ  
 են, Մուրադն արդէն վարդիկի հետ պատկուել է. նո-  
 քա շատ համոզեցին ինձ, որ ես այնտեղ պատկուէի  
 Մարօյի հետ, բայց ես առանց քո վերջնական հրամա-  
 նը լսելու չ'ուզեցի անել այդ:

— Ես քեզ այն օրն էլ ասացի, այսօր էլ եմ ասում, Աստուած թող չնորհաւոր անի քո ու Մարօյի միութիւնը. ես բոլորանուէր սրտով ընդունում եմ, որ դու պսակուես Մարօյի հետ եւ երջանիկ կեանք վարէք:

— Ուրեմն դու չ'ես վշտանում ինձանից, ի՞նչ վա՛տ չե՞ս անուանում ինձ:

— Ո՛չ, ո՛չ, դու իմ յաւիտեանական հոգեւոր եղբայրն ես այսուհետեւ. մենք աւետարանի վերայ էլ քոյր եղբայր (\*) կը դառնանք, բայց ձեր պսակուելուց վերջ:

— Բայց դո՛ւ, Շուշան, այնքան ես պաղել ինձանից, որ իսկի չ'հարցրիք թէ մենք ո՞ր ճանապարհով գնացինք Երեւան եւ Բոէս Միսօյեաց հանդիպեցանք:

— Ինձ համար միեւնոյն է, պատասխանեց Շուշան. բաւական է, որ ձեք նպատակին հասել էք դուք:

Իգական սեռին յատուկ եղած բնական նախանձն եւ հպարտութիւնը ամաչում էր Շուշանին. Աւագի այս միամիտ հարցերն աւելի ատելութիւն էին գրգռում նորա մէջ, քան թէ կարեկցութիւն:

— Ուրեմն դու ինձ հրամայում ես՝ որ գնա՞մ, Շուշան, հարցրեց Աւագ:

— Այո՛, Աւագ ջան, իմ հոգու եղբայր, գնա՛

(\*) Հայաստանի շատ գիւղերում սովորութիւն կայ, որ Չուսիկի սուստեան եկեղեցում արեսարանը հարկաւորելիս՝ հասակ առած աղջիկները եւ երիտասարդները միասին կը գնան արեսարան կը հարկաւորեն եւ խոյր եղբայր լինելու ուխտը կը կատարեն:

պսակուիր, խելքդ քեզ հաւաքի՛ր. էլ ամեն օր մի՛ դալ մեր դրան առջեւ կենար, ամօթ է. տեսնողները թէ՛ քեզ եւ թէ՛ մեզ լաւ չ'են ասի:

Աւագ այս վերջին խօսքերը Շուշանից լսելուց յետոյ մի հնազանդ երեխայի նման գլուխը կախեց, շակուեցաւ դէպի դուռը եւ արագութեամբ հեռացաւ գնաց Շուշանի մօտից: Նա արդէն իւր ուղեղային հիւանդութեան առաջին հարուածն ընդունել էր, ճանապարհին ինքն իրեն խօսում էր, ձեռներն ու ոտները շարժում էր, երբեմն էլ վերվեր էր թռչկոտում, նորան պատահողները կարծում էին, թէ արբել էր: Նա մերթ հանդարտ քայլում էր, մերթ ձիու արագութեամբ վազում էր, ինչպէս մէկը հալածէր նրան ետեւից: Միեւնոյն երեկոյեան Աւագը իւր շունչը ձանձիկ գիւղումն առաւ, գրպանում երեք խնձոր ու չորս տանձ ունեւալով, որ Շուշանն էր տուել: Ձանձիկ գիւղի Տէր Յովհաննէսը, որ նրա մօրեղբայրն էր, տուն տարաւ նրան. նա նկատեց, որ Աւագը զանազան ծամառութիւններ էր անում եւ երբեմն ինքն իրեն ծիծաղում:

— Աւագ, էդ ինչե՞ր ես անում, դու իմե՞լ ես, հարցուց Տէր Յովհաննէսը:

— Չէ, տէր հայր, ես իմ հարսանիքի ուրախութեան հանդէսն եմ կատարում. Շուշանը հրաման տուեց ինձ, ես կը գնամ Երեւան, որ Մարօյի հետ պսակուելմ:

Տէր Օհաննէսը տեսնելով Աւագի այս դրութիւնը, որքան ստիպեց որ գիշերը մնար իրենց տանը հանգիստ անէր, յանձն չառեց. նա շարունակ թռչկոտելով ասում էր:

— Շուշան ջան, Մարօ ջան. պսակվում եմ,

Մարօ ջան, Շուշան ջան, երկուսից էլ առնում եմ, Շուշան ջան, Մարօ ջան:

Խեղագարուած Աւագն իւր այս վիճակով երեք օր ու գիշեր շարունակ քալելով Լ. գիւղից Երեւան հասաւ. որ տեղից աւելի քան երեք ամիս կը լինէր՝ որ հետացել էր. նա մինչև անգամ լողալով անցաւ ապրիլեան ամսի յորդացած Երասխ գետը: Երեւանից հայրենիք վերադառնալուն՝ նա Բայազիտի կարաւանին էր միացել, ճանապարհին՝ ամեն պատահած լեռները, ձորերը, քարերը, գետերն եւ աղբիւրները նըշնել էր, որ վերադարձին չը մոլորուէր, նա չէր խմացել թէ քիւրա բոնապետներին ձերբակալել էր Օսման փաշան եւ երկիրը խողաղել էր, իւր այս վիճակում չիմացաւ նաեւ թէ երեք ամսուան ընթացքում ինչ բարեկարգութիւններ էին կատարուել Վասպուրականում:

Աւագը Երեւան քաղաքը հասնելուն պէս վաղվաղելով, թոչկոտելով Ըսէս Մխոյեանց տունը մտաւ եւ բարձր ձայնով կանչեց:

— Մարօ ջան, Շուշան ջան, պատկուում եմ, Մարօ՛ ջան:

Վարդիկը ճանաչեց Աւագի ձայնը եւ երախան դրկած՝ դուրս վազեց սենեկից: Երբ Աւագը Վարդիկին տեսաւ, թոչկոտելով հարցուց:

— Ո՞ւր է Մարօն, ես եկել եմ պատկուելու նրա հետ, Շուշան այնպէս ասաց:

Վարդիկը նախ կարծեց թէ Սողոմ հասկացել էր, որ Մարօյին պատկել էին Գեղամենց Գեղամի հետ, նրա համար էլ այնպէս է ասում. ուստի եւ իւր ընտանիքալոյսութեամբ սկսեց համոզել Աւագին:

— Աւագ ջան, հոգուդ մատաղ լինի՛մ, ներս արի, չորերդ փոխի՛ր, Մարօն մի տեղ հիւր է գնացել, այժմ կ'ուղարկեմ կը բերեմ:

— Չէ՛, չէ՛, գոտում ու գոչում էր Աւագը, պէտք է որ Մարօն էս բոպէիս տեսեմ, ես պատկուել եմ ու գում նրա հետ:

— Լաւ Աւագ, շատ լաւ, դու ներս արի մի քիչ հանգստացի՛ր, մինչև որ նա գայ. ծիծաղելով պատասխանեց Վարդիկը, աւելցնելով եւ այս վանեցիկական խօսքերը. «Թօ՞, քիւու ու ծուռ լաճ, էդա խալաւնե՞րդ ինչի ես կըտտեմ»:


Աւագը շարունակում էր իւր ուրախական թոփշները. երբ Վարդիկը նկատեց որ բոլոր զբաղիներն իրենց տունն են լեցվում, բռնեց նրա ձեռքից եւ սենիւրեանց տունն են լեցվում, բռնեց նրա ձեռքից եւ սենեակը մտցրեց: Տես սպասուհին շուտով ջուր բերեց եւ Վարդիկի հետ միասին լուացին Աւագի գլուխն ու ոտները, յետոյ հագցրին նորա այնտեղ թողած հագուաները, որոնք առաջին անգամ Մուրադը Երեւանից հասցնելով էջմիածին հագցրել էր նրան շատ դժուարութեամբ: Այս անգամ երբէք դժուարութիւն ցոյց չը տուեց, նա երախայի նման հնազանդում էր, ինչ որ Վարդիկը հրամայում էր: Որովհետև չորս օր էր որ Աւագի աչքերում քուն չէր մտել, երբ Վարդիկի սենեկի փակուած օդը շնջեց, անմինջապէս քունը կոխեց: Վարդիկը ծածկեց նրան եւ ծառային պատուիրեց, որ Մուրադին լուր տանէր:

Մուրադն Աւագի վերադառնալու լուրն անելուն պէս, տուն վազեց, երբ նա զարթնել էր քնից եւ առաջուան նման թոփշներ էր անում սենեկի մէջ իւր մշտանուագ խօսքերը կրկնելով:

— Վա՛յ, բացականչեց Մուրատը, խեղադարուե՛լ է խեղճը:

Ըսէս Մխոյեանց տունը սգաւորի կերպարանքն ստացաւ . նորա շատ էին խղճահարկում Աւագի այս վիճակի վերայ: Այնուհետեւ պարթեւահասակ երիտասարդը մի անդուսպ գիծ դարձաւ, փողոցներում երգելով մասն էր գալիս:

Մարօն լսել էր Աւագի վերադարձը, շատ էր փափաքում մի անգամ տեսնել նրան, բայց ամուսինն արգելում էր նրան. մինչեւ որ մի օր իւր սենեակի պատուհանից անսաւ նրան, որ ցնցոտիներ հագած՝ իւր ւովորական համերգն երգելով թռչկոտում էր, ետեւից մի խումբ երախաներ ընկած՝ «հո՛ւյ, բո՛ւյ գիծ կը՛ ոս» էին կանչում: Բիչ մնաց որ Մարօն պտտուհանից ցած գլորուէր, երբ անսաւ իւր սիրելուն այն ողորմելի վիճակում: Այնուհետեւ Մարօն իւր ամբողջ կեանքում սուգ պահեց Աւագի վերայ. հարստութիւնը, զարդարանքը, հանգիստ կեանքը, սիրելիներին եւ բազմամեներին մխիթարանքները՝ նրա աչքում ոչ մի նշանակութիւն չ'ունեցան: Մարօն այն օր էր որ տեսաւ Աւագին, նա շատ խնդրեց Մուրատից եւ Վարդիկից որ գտնէին նրան եւ մի անգամ իւր մօտ տանէին, գէթ մի անգամ էլ խօսէր նրա հետ, բայց արդէն կառավարութիւնը բռնելով նրան յիմարանոցն էր ուղարկել:



## ԺԶ.

Գրիգորը պակուելուց չորս ամիս վերջ. Կ. Պօլիս պանդխտութեան գնաց, ժողովրդի բամբասանքներից բազատուելու միակ պատճառով, ապա թէ ոչ՝ նա լաւ ապրուստ ունէր եւ Վան քաղաքում, իւր հանդուցնալ հօր կօջկեանց փանոս աղի թողած ընդարձակ կալուածներին շնորհիւ, որի միամօր դաւակն էր արգէն: Նա Կ. Պօլիս հասնելուն պէս՝ Գէլոնց Աւանէս աղից հարիւր զուրուշ պարտքով փող էր առել . որովհետեւ բաւական ժամանակ նա պարտք էր մնացել, մինչեւ յաջողուել էր նրան ժամկոչութեան պաշտօնը ձեռք բերել: Երբ այս պաշտօնով ապահովուեցաւ, հետեւեալ անդրանիկ նամակն ուղարկեց իր մօր եւ Շուշանին բողբոջիկն Վանայ բարբառով գրած:

Յիսուսի Գրիստոսի ծառայ Գրիգորից շատ սիրով, կարօտով պարեւ կաթնատու մօր, տան անդուոր (կին) Շուշանին եւ սիրելի բարեկամներուն: Թէ որ կը խարցուցէք սաղ, սալամաթ խասանք Ստամպէօլ, մեր ընկերները զըմէնն էլ ալվաղութին էնան (եւ) կանմեր ընկերները զըմէնն եւ էլ գեօ էսա մէկ շարաթի, որ վաջութեն կանեն. ես էլ գեօ էսա մէկ շարաթի, որ էլեր եւ Ստոտաւամայր ժամտան ժամխար: Ինչ ա՛նեմ. ըսկուն պան չեղաւ ձիկ էսատեղ օր անի. փարէս էլ խլաւ. Գելոնց Աւանէս մէկ քանիմ կուտուշ փոխ ետու ձիկ: Իմ սիրելի մէր, ջեօ ձեօ կը պաքեմ, իմ սրտի սիրած Շուշանին վարդի պէս պախես, չեղնի որ մըութի (տրոմի) աչխրիս մէջ կեօ մէնակ ինոր խամարի կ'ապրիմ: Շուշան, էսա գիր տիւ պիտի կարասա.

տիւ էլ մօրս խեղ աղէկ շախուես. չէլնի որ անոր խա-  
 պար չ'անես: Գեօ իմ պախան ըսկուն էր որ չորս  
 ամիս ջէօրով միննք մէյտեղ, աման Աստուած օղորմա-  
 ծի, շուտ կ'ածողի պանս, չուր էրկու տարի կ'ուկեամ:  
 Էսա գիր վազող կրիցի. է մէկէլ կրելուն փարայ էլ  
 կէօրօխկեմ ծե: Շուչան, չէլնի որ հա լաս. ես ըսկուն  
 կիտեմ, որ մըկայ էլ դէմս նստերիս կ'ուլաս. ա'խ,  
 չեմ կանայ մոռնալ. քեանի որ քեղ լաց տէսայ. կ'էլնի՞  
 որ մէկ էլ տեսնանք մէկմէկու, թօ'ղ էնկեախ Աստ-  
 ուած խողիս առնի: Ըստեղ մարդ պան չասե ձիկ. էլ  
 իշունց չեն խոսայ սղախիկ լաճեր. իտիւլէս չեն պօռա,  
 կանչէ. ա'խ, էն ինչ պաներ էր, որ վանայ լաճեր  
 զըմէն տիր կը խանին մեր կելէօխ. մըկայ էլ երմիտս  
 կիւնի կ'ամչընամ: Թէ որ վաթանի սէր չէլնէր, ծե  
 էլ կը պիրի էսա խօրօտ (քեղեցիկ) քեաղաք: Չեղնից  
 շատ սիրով բարեւ տիւր տրկըցներաց. Օհան աղին, ա-  
 ներ աղենց ծէթ պէտ լաճերաց եւ աղջիկներաց. լերուք  
 ողջ, ամէն տէր Յիսուս: Գրիգոր ինօջենց:

Շուչանի զրամ պատասխանը:

Յիսուսի Գրիստոսի աղախին Շուչանից շատ սի-  
 բով բարեւ եմ գլխաւոր Գրիգորին: Սիրելիս, նամա-  
 կըդ առի, չուս (մինչեւ) կարգացի արտըստենքովս  
 թրչիցի. խաթիւն կիտուրս խօ', լալուց աչքեր պըւ-  
 վերի. նա (ոչ) գիշեր կիտենք, նա ցէրէկ, արեւն էլ  
 խաւարի, վեր մե լիւս չ'առնե, քեանի որ տիւ մօտ  
 մե չեա. ինչի՞ խամարի աշխար, կեանք, ա'խ, էն ի՞նչ  
 սեւ օր էր՝ սեւ կեախ (ժամանակ) էր, որ պամնուանք  
 մէյ մէկուց, թէ որ ըսըսկնայ (այսպէս) մնանք, էլ սաղ  
 չեա կընդնէ մե. էլի թող արի էդա դառն կարիպու-  
 թինից. տառցի քեո տուն. թահլայ (գէթ) ես տօպրակ  
 կիսկեմ իմ վիղ օրական մէկ պրտիւճ խաց կը ժողվեմ

կը պերեմ, թող տոսթ տիւշման չ'ասի ձիկ անտէր ան-  
 զլէօխ խարսի. իմ սիրելի Գրիգոր, միտդ բե վալա-  
 զայ մեր խապըրներ, ինչի՞ ըսկան շոտ մտեղ կընաց.  
 եր կը տեսնամ իմ ինկըրներ, սըրտիս վերէն մէյ  
 կիտը պիպար կը լցուի. վո՞վի տեսե որ եթեմն ուրա-  
 խանայ. տիւ խօրից՝ ես մօրից՝ եթիմ ենք. զըմէն  
 (ամբողջ) թարաֆէն տիիցին վէր մեր զըլխուն. թէ  
 ձիկ կ'ուզես (կը սիրես) մէկ շոտ թող արե առանց  
 քիե օր աստուոր չեմ կանայ անի. ես ոչ փարայ կ'ու-  
 գեմ ոչ էլ խօջութին (հարստութիւն) միւնակ քեո սա-  
 դութին կ'ուզեմ. աչքերս ախպիւրի դառցե, քեանի որ  
 կընացեր ես, զըմէն կիշեր էրաղներով կը տեսնամ  
 քիե: Ո՞ր մէկ դարդերս կըրեմ, կսկծու կը մեռնեմ,  
 տիւ կ'ասես էրկու տարի կը մնամ Ստամպէօլ. տառ-  
 նալուդ գեէրեզմանս պիտի կընանես, որ ըսկունի:  
 ինթիւն կիտուրս, իտէրս (հայրս), ախպէրս, տիւր արը-  
 կցներ, իլաք (մանաւանդ) մեր Շողիկ շատ կարօտով  
 բարեւ կանեն քիե. ախով ու վախով, միշտ խուկեց  
 խանելով, քեո անպախտ Շուչան կան կուկեայ (կը  
 պտաի) ժամտներ որ Աստուած մէկ լիտս անի էլ մէլ  
 մե մէյմէկու տիտուն արժան անի: Իմ ինկըրներ ալա  
 (գեո) աղջիկ են. ես խարս էլայ, որ կարիպի ձամպախն  
 աչքեմ. կիշեր ցերեկ սիրտս մոմաացուցելով լամ. թէ  
 ձիկ կ'ուզես, չեա մնայ էդա դառն կուրպաթութիւնի մէջ:  
 Գեո անպախտ կողակից Շուչան:

Շուչանի նամակն ստացաւ Գրիգոր իւր դրացի  
 Մուխսի Մկրտչից, որը իւր կեանքում տասն անգա-  
 մից աւելի գնացել էր Պօլիս ու վերադարցել: Այդ ժա-  
 մանակ թիւրքիայում կանոնաւոր պատեր չ'կային:  
 Ինչո՞ւ Գրիգոր, հարիւր անգամ Շուչանի ձեռագաղիբ

նամակը ծոցից հանելով՝ քսեց երեսին . անիծեց իւր նրանից բաժանուելու պատճառ եղողներին . եթէ հնարաւորութիւն ունենար . հէնց նոյն ժամին կը թեւաւորէր եւ կը գնար Շուշանի մօտը կը նստէր, այլեւս չէր բաժնուի նրանից . նրա վեղը ծռել էլ Գեղոնց Աւանէս աղին ունեցած պարտքը, որ վեր էր առել իւր Պօլսոյ ծախքերը հողալու համար : Ո՛վ էր իմանում . մինչեւ քանի՜ տարի աշխատէր նա, որ կարենար այդ պարտքից ազատուիլ, ինչպէս շատերը չէին կարողացել ազատուիլ նրանից միանգամ առած պարտքից եւ բազմապատկուած տոկոսներից (\*):

## ԺԵ.

Գարնանային մի գեղեցիկ առաւօտ էր, Գող Մըժ-գօն իւր քսան եւ չորս ընկերներով « Կապուտ-կող » կոչուած գեաղիւկի վարի եւ վերի մասերը բռնել էր,

(\*) Ո՞վ է իմանում, թե քանի՞ քանի՜ Գրիգորներ ու Շուշաններ հեռաւոր աշխարհներում խաւրեղ եիև իրենց կեանքն առանց միմեանց տեսութեան արժանի լինելու: Եթե Բերայի եւ Պալլիլլիի գերեզմանանոցները պրպտեմք, այնպիսի պակոյուխս մեռեալների տապալակներ պիտի գտնենք, որոնք կարօտուաշ արտով կնիեղ եև իրենց մանկանացուն, գրկուած սիրելիների տեսութիւնից: Անա ազգիև եւ հայրենիքի կորուստ սպառնացող մի անոնքի բշուարի եւ, որ մահտարածաւից եւ ջարդերից աւելի վնաս է տուել ժողովրդի բազմանալուն:

որ տեղից կարելի չէ մինչեւ անգամ մի թռչուն անցկենար, երբ գողերն այսպէս դարան մտնէին եւ անցորդներին մէջները առնէին: Մժգօի ընկերներից ոմանք հոտ էին առել, որ այն օր անցկենալու էին այնտեղից Մուսուլցի թէջիւրներն իրենց հազարաւոր ոսկիներով եւ ոչխարներով: Նոքա սովորութիւն ունէին, որսը մօտենալիս՝ գայլի նման ոռնում եւ ցին թռչունի ձայնն էին հանում, որով հասկանում էին միւս ընկերները՝ թէ որսը կատարելապէս իւր որս գայթի մէջն ընկել էր, այնուհետեւ մի քանի հրացան արձակելով՝ անձնատուր լինելը կը պահանջէին անցորդներից . որքան էլ շատ լինէր վերջիներին թիւը, որովհետեւ անկարելի էր փախչելով կամ դիմադրելով ազատուիլ շրջապատողների ձեռքից: Մժգօն եւ ընկերները գիշերով հասել էին որոշեալ տեղը, նոքա նկատեցին ձիաւորների դարվեր բարձրանալը, ոչխարների հօտն արդէն անցել էր. եկողները նոցա տէրերն էին, որոնց ընկերացել էին Խան Աբդալի ջոկուած տասն նիզակաւոր նախկին ծառաները: Անցորդները հասան որոգայթի կենդրոնը. ահա չորս կողմից անձնատուր լինելու հրացաններն որոտացին: Ապահովութեան համար ընկերացող պահապան քրդերը խորհուրդ տուին ոչխար գնող վաճառականներին անձնատուր լինելու . ուրիշ ձար չունէին: Գող Մժգօն մի քանի պահապաններ միայն թողնելով լեռների գլխներում, մնացեալ ընկերներով վրաները պրծաւ . ամէնի զէնքերն առնելուց յետոյ, ձեռք ու ոտներն էլ կապեց եւ կողոպտելու գործողութիւնն սկսեց: Մի ժամից վերջ, հարուստ վաճառականները մի շապիկով ու մի վարտիքով միայն մնացին եւ կապանքների տակ անքուծ

ու մտում էին, ինչպէս նաեւ Խան Աբդալի նախկին  
ժառանգը միեւնոյն փառքին էին արժանացել :

Մի շարաթ վերջ յափշտակուած աւարը Մուշ քա-  
ղաքի հրապարակում ծախվում էր :

Վանայ Փաշան որքան ուժ ունէր՝ գործադրեց,  
որ այս անգամ Գող Մժղօին բռնէր, բայց ո՞ւր, նորա  
որտեղ լինելն անգամ իմացողներ չը կային :

Անցաւ մի քանի շարաթ էլ, գեաղբիւի երկու-  
ժայրերում դարձեալ մարդիկ էին երեւում. մի հասա-  
բակ եւ անդէն հայ գիւղացի չորս եզներ առջեւ գցած  
դէպի կարճկան գաւառն էր դնում: Ճաշի ժամանակ  
էր. կապուտ կողի լեռներէց վար հոսող սպաղորակ ջը-  
րերը գիւղացու ախորժակը գրգռեցին, նա արձակեց  
իւր մէջքից հաց ու պանիրն եւ նստաւ իւր փառաւոր  
ճաշն անելու. եզներն արդէն գտել էին իրենց աննդա-  
բար կերակուրը, առատ ջրերի շնորհիւ մշտականաչ  
խոտերից: Գողերը չըջապատեցին անհող ճաշող պար-  
թեւահասակ գիւղացուն: Նա թէեւ տեսնում էր որ  
գողերը իւր վրայ էին գալիս, երբէք երկիւզ կամ  
կասկած չը ծագեց նրա մտքում, մինչև որ անձնա-  
տուր լինելու հրացանի գնդակներն անցկացան նրա  
գլխի վերեւից, գիւղացին դարձեալ սեղից չը շար-  
ժուեց: Աւաղակներն այն ժամանակ նկատեցին որ  
ճաշողը մի հայ քահանայ էր. վերայ վազեցին ամենքը  
միասին որ ձեռներն ու ոտները կապէին. քահանան  
մի ակնթարթում սաքի վերայ կանգնեց եւ յաջողուեց  
նրան քրդերից մինի սուրը խլելու. լեռների գլուխը  
նստող կօթն քրդերը մէկ էլ էն տեսան, որ մի վայր-  
կենում իրենց սասն եւ ութն ընկերները գետին սառ-  
կեցան, եւ մի սեւաչոր ու միբուքաւոր գիւղացի կա-

պում էր նրանց ոտներն ու ձեռները : Հայ տէրտերը  
այնքան արագ կատարեց գործողութիւնը, որ լեռների  
գլուխ նստողները չը կարացին տեսնել թէ ինչպէ՞ս  
թռչունների նման ցած թափուեցին իրենց ընկերնե-  
րը : Գնդակով զարնելն անկարելի էր, որովհետեւ գիւ-  
ղացի հերոսը չոքել էր գիակնացած քրդերի կրծքին  
եւ նոցա գլխի երկար թաշկինակներով կապկապում  
էր ամենքին, կարող էր արձակուած հրացանների գըն-  
դակներէց մինը կպչել եւ իրենց ընկերներին :

Գող Մժղօն իւր ամբողջ կեանքում մի այսպիսի  
անձնաւորութեան դեռ չէր պատահել, նա մինչև ան-  
գամ ամսոսաց սպանել մի այսպիսի հերոս: Այս ան-  
գամ նրանում մի այլ միաք էլ ծագեցաւ. նա խորհեց  
հէնց միեւնոյն ժամանակ խնդրել աննման հերոսից,  
որ ընկեր դառնար իրենց հրոսակային ընկերութեան:  
Քահանան իմանում էր, որ կապուած քրդերը Գող  
Մժղօյի ընկերներէից էին. նա լաւ էր իմանում որ Մըժ-  
ղօն ինքն էլ մի քանիսի հետ լեռների գլխներում  
նստել եւ սպասում է որ ինքը դուրս գայ ընկերների  
գիակների միջից. բայց նա չը հեռացաւ, մինչև որ  
վերաւորուած քրդերի գէնքերն էլ հաւաքեց եւ մի  
մեծ խուրց ցախի նման մօտի փոսը գլորեց, մի սուր  
եւ մի հրացան միայն վեր առնելով իւր համար: Երբ  
այս գործողութիւնն էլ վերջացրեց, մի ոտիւնով  
մօտի մարդաչափ բարձրութիւն ունեցող քարի արան-  
քը հասաւ եւ ամբողջ մարմնով նորա մէջ պահուեցաւ.  
ինչպէս ինքը իւր ձեռքով պատրաստած լինէր առա-  
ջուց՝ թշնամու սպառնացող գնդակներից պահպանուե-  
լու համար :

Գող Մժղօն իւր ընկերների հետ շուարած սեղ-

ները մնացին, ոչ էն էր ցած իջնէին, ոչ էլ էն էր թողնէին ընկերներին այն վիճակում եւ հեռանային: Ահն ու սարսափը պաշարել էր նրանց, նոքա կարծում էին թէ քաջութիւն գործողն առասպելական Դեյվերից մինն էր, որն այս ժամուն հայ տէրտէրի կերպարանքով իրենց ընկերները վերայ էր յարձակուել: Նախապաշարեալ մտքերն աւելի թուլացրին ողջ մնացած քրդերին, նոքա թէեւ լեռների գլխներում ապահով տեղ գտած պահուել էին, բայց սաստիկ քամուց շարժուող ուռննու տերեւների նման դողդողում էին, չափազանց երկիւղը քարացրել էր նրանց: Մի ժամից աւելի անձայն մնացին նոքա այսպէս, մինչեւ որ քարի արանքից առիւծի անեղ ձայնով գոռաց հերոսը, քրդերէն լեզուով:

— Հեռացէ՛ք տարի գլխներից, ապա թէ ոչ, կը կրակեմ ընկերներիդ:

Երբ Մժղօն լսեց մարդկեղէն բարբառով անեղազոր ձայնը, ընկերների հետ միասին իրենց Տալաղի (\*) վերայ երդուեցին, որ չը վտասեն իրեն, եթէ նա համարձակ դուրս գայ եւ իւր եղներն առնէ ու հեռանայ այն տեղից:

Մժղօն եւ ընկերները լեռան միւս կողմը շրջուեցին, իսկ հայ տէրտէրը քարերի արանքներից համարձակ դուրս ելնելով քշեց իւր եղներն ու հեռացաւ այն տեղից դէպի կարճկան:

(\*) Տարաղ եւ ասում քրդերը իրենց ամուսնական պայնանին, երե մին երդուեց սրակով եւ չը կասարեց, կորս կիկն արձակուած ե համարվում այլ եւս իրակից:

Հերոս եկեղեցականի աներեւոյթանալուց վերջ, Գող Մժղօն ցած իջաւ լեռնից իւր ընկերները հետ եւ տասն եւ ութ ընկերներին արձակեց իրենց կապանքներէց, որոնք գրեթէ կիսամեռ վիճակում կապանքնեները տակ նստւմ էին. որի գլխից արիւն էր վազում, որի ոտքը, որի թեւը ջախջախուել էր ու չէին կարող տեղներից շարժուել: Նոքա ամենքն էլ ճանաչել էին իրենց այն վիճակին հասուցողին, որը Լ. գիւղի Տէր Մուշեղն էր: Նա տարել էր աւազակներից մի հրացան եւ մի սուր. էն էլ իւր անձը պաշտպանելու համար:

Տէր Մուշեղը բաւական տարածութիւն կտրել ու հեռացել էր կապուտ կողի սահմաններից, նա այլեւս չը կամեցաւ դաշտային ճանապարհով շարունակել իւր այն աւուր ճամբորդութիւնը. վառայ ծովակի լեռնաշղթաները բռնելով առաջանում էր ու առաջանում անդադար: Երեք ժամից վերջ հասաւ Եղեգիս գիւղի ճահիճի ակների վերելում գտնուող ձորակը, ուր ալբիւրբի գլխում մի հսկայ քիւրդ գլուխը գրել էր մի մանկամարդ կնոջ ծնկների վերայ եւ խոմփում էր: Նա բշխովել էր մի արարական նժոյզ ձիու ոտները եւ թողուցել էր առատախոտ աւուոյանոցում, որ արածէր. իսկ ինքը գէնքերն արձակած, գլխի մեծ քօլօղը նիւզակի ծայրն անցրած եւ աղբիւրի գլուխը խրած, ճանապարհից դուրս ապահով ձորակում քուն էր քաշում: Տէր Մուշեղն աճապարանքով ուզում էր անցկենալ այն տեղից, երբ մի կանացի ձայն հասաւ նրա ականջին. որը մի անգամ այս անունով կանչեց նրան:

— Տէր Հայր. Տէր Հայր,  
Տէր Մուշեղը գլուխը դարձրեց դէպի ինքը հաս-

նող ձայնը, նա այս ժամանակ նկատեց որ մի նորահարս կին երկու ձեռներով կանչում էր իրեն անդադար : Թէեւ թշուառ կինը նորա երեւելուց իվեր շարունակ ձեռքով էր արել, բայց բարկացած աէրաէրի աչքերում սարն ու ձորը մթնել էր այն ժամանակ, մինչեւ որ յուսահատ կինն ստիպուեցաւ բարձր ձայնով կանչել նրան, երբ տեսաւ որ տէրաէրը հեռանում էր ձորակից : Քիւրզը չը զարթնեց եւ այս ձայնից, աէրաէրը թողեց եզներն եւ դէպի ինքը կանչող կինը վազեց : Ինդձ կինը լաց էր լինում եւ անդադար իւր ցուցամատը բերնին էր դնում, որ տէրաէրը ձայն չը հանէր :

Ո՞վ է այդ անօրէնը, հարցրեց տէրաէրը :

— Գերի ընկած կինը դարձեալ մատը դրեց բերնին եւ հաղիւ լսելի ձայնով ասաց :

— Տէր Հայր, օտներիդի զուրբան եղնիմ, ես հայ եմ, էս անհաւատ քուրզը զօտով բերից ընձի հարի իդա տեղ :

Տէր Մուշեղը հասկացաւ որ իւր հետ խօսողը Մուշի հայուհիներից էր, որին ատուանդել էր քնացող քիւրզը : Մի անգամ միայն բռնելով սեղմեց քրտի երկու թեւերը :

— Ա՛յ, աղաղակեց քիւրզը՝ քնից զարթնելով եւ աչքերը բանալով : Նորա երկու թեւերի ոսկորներն էլ ջախջախուել էին Տէր Մուշեղի զօրեղ ճանկերում :

— Է՛յ լըմը՛ն, ազ մըրըմ, (վա՛յ ինձ, ես մեռայ) աղաղակեց թեւերը ջարդուած քիւրզը :

— Էդ պիղձ դու խո վերցրո՛ւ հայ կնոջ սուրբ ճնկների վերայից, հրամայեց Տէր Մուշեղը :

Քիւրզը դու խո ցած դլորեց, որն ամբապէս զար-

նուեց չոր գետնին. նա ուշաթափուել էր արդէն :

Ստելու թեան վրէժխնդրութեամբ լեցուած Մշեցի հայուհին, դուրս քաշեց աղբիւրի գլխին ցցուած նիւզակն եւ ուզում էր իրեն մինչեւ այն տեղ փախուցող քրդի փորը խրել, բայց Տէր Մուշեղն արգիլեց, որովհետեւ նա իւր կեանքում ոչ մի քրդի չէր սպանել. մարդասպանութիւնը նրան արգելում էր պատարագ անելուց : Ի՞նչ մեղք ունէր խեղձը. նրան այնպէս էին հասկացրել, որ քրիստոնեան՝ մանաւանդ քահանան իւրաւունք չունէր մարդ սպանելու, եթէ իւր դէմ ելնողները դադաններից աւելի վտանգաւոր լինէին, եթէ նոյն իսկ իրեն սպաւելու վտանգի մէջը դրած լինէին. նորա համար էլ նա միայն իւր անձին վտանգ սպառնացողներին վերաւորում, թեւերի կամ ոտների ոսկորներն էր ջախջախում եւ թողնում, որոնք անգործածակի դատնալով էլ չը կարենային իրեն վնասել :

Մշեցի կինն աղաչում էր. Տէրաէրին, որ իւր թշնամուն ողջ չը թողնէր, որովհետեւ նա կարող էր առողջանալ եւ նորից վերադառնալ Մուշ՝ իրեն կամ մի ուրիշ հարսի փախուցել, բայց Տէր Մուշեղն ասում էր :

— Որդի՛, Աստուած պատուիրել է որ սպանու թիւն չը գործենք. պէտք է որ նորա պատուէրը պահենք :

— Ա՛խ, Տէր հայր, իդա անհօգիներ մարդ չին, գազան ին, դու չըս գինայ թէ իմա՛լ կօտրեցին ըզ մեր ճըժկները, թո՛ւր՛ի, փեցում գէնի՛ սիրտսի հօլլայ. լաւով ասում էր Մշեցուհին :

Բայց Տէր Մուշեղը, դու խո չէին մտնում աղատամիտ հայուհու այս իրաւացի նկատումները :

— Դէ՛ գնանք, որդի, դու այլեւս ազատուցիր այդ անօրէնի ճանկերից, ասաց Տէր Մուշեղը:

— Կաց, Տէր հայր, ըզ ձին լէ տանինք, իդա իմ մարդու քօճլան (սփոյգն) է, էդ անօրէնը՝ չորս օր առաջ ըսպանեց զէն, զընծի լէ ու ըզձին լէ փախուց:

Մշեցունէին ձեռք տարաւ քրդի զրպանը եւ այն տեղից դուրս բերեց բըխովի բանալին, ձիու ոտների փականքն արձակեց, սանձը բերան դրաւ եւ խնդրեց Տէրաէրից, որ հեծնէր վերան: Տէր Մուշեղը հրաժարուեց, որովհետեւ նա իւր կեանքում երբէք ձի հեծած չէր, նա գրկեց հայուհուն եւ ձիու վերայ դրեց, հրամայելով որ հետեւէր իրեն: Հայուհին հնազանդեցաւ: Նոքա երեկոյեան մութին Կարճկանի Եղեղիս զիւղը մտան:

Այն օրից՝ Գող Մժգօն եւ ընկերները սոսկում էին Տէր Մուշեղի անուընը լսելիս. բայց լաւ էին հասկացել էլ, որ նա չէր կամենում ոչ ոքի սպանել, քահանայութիւնն արգելում էր նրան այդ անելը: Օհանի ազատամիտ խորհրդածութիւններն էլ չը կարացին համոզել Տէր Մուշեղին, որ վտանգաւոր մարդերին սպանելը մեղք չէր, նա այնպէս էր համոզուել, թէ աշխարհականներն իրաւունք ունէին այդ անելու, բայց տէրաէրն ոչ: Տէր Մուշեղը հակառակ չէր ինքնապաշտպանութեան. նա մինչեւ անգամ յորդորում էր իւր ժողովրդին, որ զէնք տանէին թշնամու գէմ. իսկ ինքը որ զէնք էլ էր գործածում, թշնամուն ըսպանելու համար չէր (\*), միայն թէ վէրքեր տար նը-

(\*) Մեկի սեասնի Բաղէշ ֆաղսֆում երկու ուժեղ հայերի, որոնք մեկ ձեռքով կտրում էին քրիստիան

բանց, որ չը կարենային չարժուիլ տեղերից: Այսպէս էլ անում էր նա ամեն ժամանակ, ինչպէս տեսանք նորան նաեւ մի քանի կռիւներում:

Գող մժգօն եւ ընկերները շատ անգամ իրանց հայ ընկերներին ուղարկեցին Տէր Մուշեղի մօտ, որ նրան համոզէին իրենց խմբերին մասնակցելու. բայց նա ծիծաղում էր նոցա յայտնած մտքերի վերայ: Ընդհակառակն նա խրատում էր նոցա, որ ձեռք վերցընէին այնպիսի արեւունքը գործելուց: Երբ տեսան որ անկարելի է համոզել նրան, որոշեցին մի կերպ ձեռք ձգել նրան եւ սպանել, որպէսզի ազատուէին մի այնպիսի անսպարտելի թշնամուց, բայց չը յաջողեցան: Օհանը պահապան հրեշտակի նման զգուշացնում էր Տէր Մուշեղին՝ շարունակ փորձառու խորհուրդներ տալով նրան:

## ԺԸ.

Ամենամթին մի գիշեր էր: Գող Մժգօն ընտրել էր

արծաթ մեծիսը, որոնցից միեր Գող Մուշեղի անուն երեսուն արագակ ֆրդերի զեկերը վար էր քափել, որին ինչպէս յիշում եմ, «Երկին Աղաջակ» էին անուանում տեղացիք: Հայերից եւ քիւրճերից բաղկացած մի մեծ կարաւան Բաղէշից երգում էր գնում. ֆրդերը կողպատում եւ մերկացնում եւ ամենին, երբ կարգն Աղաջակի հօրն էր գալիս, դիմադրում էր, որի գլխին մի փայտի հարում եւ սալիս, այն ժամանակ մերկացած Աղաջակը վեր էր կենում եւ ֆրդերի զեկերը քափում: Այսպէս էլ վկայում էին ակաւստե Բաղէշեցիները: Այս դեպքը պատահել էր արանից 30 տարի առաջ:

սրտոտ ընկերներէից առանին եւ Լ. գիւղի լեռն էր ե-  
կել, որպէս զի այն գիշերը հէնց քնած տեղն սպանէր  
Տէր Մուշեղին:

Գիշերից վեց ժամ անցել էր: Տէր Մուշեղը իւր  
տան անկիւնում հանգիստ քուն էր քաշում, բայց նա  
ամենախօր քնի միջիցն էլ զարթնում էր, եթէ մի  
կատու բարձրանալու լինէր կտուրի վերայ: Անկողնում  
պտկած տեղից նկատէց նա, որ երկու գլուխներ էին  
կարծուել իրենց տան երդիքից. իսկ թօնրատան դռան  
կողքերը փորում էին: Տէր Մուշեղը շունչն իրեն քա-  
շելով՝ վեր կացաւ անկողնից, որը մի խուրց խոտ էր,  
որպէս զի ձայն չի հանէին չորացած խոտերը. խիստ  
զգուշութեամբ մօտեցաւ տան դռան եւ սպասեց այն-  
տեղ՝ մինչեւ որ գողերը գործողութիւնը վերջացու-  
ցին: Երբ դուռն էին բանում որ ներս մտնէին. Տէր  
Մուշեղը մի կարծր փայտ ձեռքը բռնած մէջները պըր-  
ծաւ, եւ միակնթարթում ինը հոգի գետին թաւալեց: Ա-  
մենքը միասին սկսեցին կանչել.

— Ամ մըրը՛ն. (մեռնո՛ւմ ենք):

Մտգօն եւ հետի ընկերը ցած տանիքից վար թը-  
ռան ու փախան: Տէր Մուշեղը կանչում էր տիրուհուն  
եւ հարսներին որ վեր կենային եւ ճրագը վառէին,  
վիրաւորուած քրդերից մէկի ուշքը վերայ էր եկել,  
որը լսելով տէրտէրի այս հրամանը, պոտասխանեց:

— Տէրտէր, մի՛ շտապեր ճրագ վառելուն, մինչ-  
եւ առաւօտն էլ թող տուր որ քնեն հարսիկներդ. էն  
հարուածը որ դու տուիր մեզ, մեզանից ոչ մինը չի  
կարող ընկած տեղից վեր կենալ եւ փախնել:

Այս այն ժամանակներն էր, երբ Օսման փաշան  
արտօնել էր հպատակ ժողովրդին զէնք գործածելու,

գողերին բռնելու կամ առն մտած ժամանակներն սպա-  
նելու:

Ճրագը դուրս հանեց տիրուհին այն ժամանակ,  
երբ ինն քրդերից երեք հոգի էին մնացել, որոնց ոտ-  
ների սկիորները կոտրած լինելով՝ չէին կարողացել  
փախչել: Տէր Մուշեղը վերջրեց նրանց ընկած տեղե-  
րից եւ առն տանելով կոտրածները կապեց, որոնք  
ցաւերի կսկծից գետնի հողերը գլխներին էին ածում:  
Արշալոյսի դէմ՝ Մտգօն երեք ձի ուղարկեց ընկերնե-  
րին աարաւ, ու խտելով որ այլ եւս Լ. գիւղում ոտք  
չը գնէր:

Առաւօտեան Լ. գիւղացիք նոր էին իմացել, որ  
այն գիշերը Տէր Մուշեղից տան վերայ էր կոխել  
Գող Մտգօն եւ ջախջախտած ընկերներն էին միայն  
եղել իւր հետը տարած աւարը: Օհանը խիստ  
արդար զայրոյթով լցուած մեղադրում էր Տէր  
Մուշեղին, որ ողջ էր թողուցել ձեռք ընկածներին,  
մանաւանդ որ նոցա կոտրուած թեւերն ու ոտներն  
էլ խնամքով դարմանել եւ ապա էր յանձնել Մտգօին.  
նա Տէր Մուշեղի ներկայութեան ասում էր:

— Տնաչէնի էրէց, դու քրիստոսի նման բժշկում  
ես Մաղքոսների ականջները, բայց նա Պետրոսի օրով  
պոկուած ականջն էր առողջացնում, մարդ այդքան էլ  
բարեւիր լինելու չէ դէպի իւր թշնամիները: Նոքա  
եկել էին որ քո կեանքը վերցնէին, իսկ դու սատկած  
զայլերի վերքերն էլ ես դարմանել:

Տէր Մուշեղը ժպտում էր Օհանի այս նկատում-  
ները լսելով, նա ասում էր:

— Ես նոցա ծուռ ոտներն ու թեւերը չխոկում  
եւ ձեզ եմ յանձնում, իմ սլաշաօնն այնքան միայն է

հրամայում ինձ, մնացածը ձեզ եմ թողնում, որ ամբողջացնէք:

Օհանն էլ ուժեղութեան կողմից շատ պակաս չէր մնում Տէր Մուշեղից. նա Կ. Պոսում համալուծիւն աւրած ժամանակները վաճառականներէ ամենածանր հակերը մէկ ձեռքով էր վերցնում, որպիսի հակերը չորս մարդով հաղիւ կարողանում էին գեանից վերուցել: Գող Մժգօն իմանում էր, որ նրա գոնից ողջ չէր կարող հեռանալ, նորա համար էլ զգուշանում էր նորա տան վերայ երթալուց:

Այս վերջին զէպրից յետոյ, Գող Մժգօի զօրութիւնն սկսեց թուլանալ, այլևս դադարեց նա յանդուգն յարձակումներ գործելուց, ընկերներէ շատերն էլ հեռացան նրանից. շատ ժամանակ ինքը մինակ էր կատարում դադանի գողութիւններ, այն էլ զանազան ծպտումներով: Մի Տէր Մուշեղ եւ մի Օհան խորտակեցին նորա զօրութիւնը:

Օհանի Տէր Մուշեղին արած երեստուանքը բաւական ազդեցութիւն ունեցաւ: Նա իւր միտքն էր բերում Մշեցի հայուհու ասած խօսքերը, երբ նա թոյլ չը տուեց որ իրեն անեւանգող դազանի փորը խրէր որածայր նիզակը: Այնուհետեւ ինքն էլ սկսեց իւր խղճի հետ կուտելու թէ ինչո՞ւ չըսպանել այն դազանին, որ հարիւրաւոր քրիստոնեայ անմեղներէ արիւնն էր թափել: Ի՞նչ զանազանութիւն կար մարդակերպ դազանի եւ գայլի միջեւ, ինչո՞ւ գայլերին սպանում են, մեղք՝ չի համարվում, իսկ գայլից աւելի վտանգաւոր աւազակներին սպանելը՝ մեղք է համարվում: Բայց եւ այնպէս չէր կարող մի վերջնական համոզման գալ, նա խորհում էր, որ չըսպանել է պատուիրուած

հային, իսկի չէր մտածում, որ նոյն օրէնքը հաստատող Մովսէս Մարգարէն՝ հազարաւոր յանցաւորներէ կեանքն էր հնձել տուել. օրէնքի դէմ թեթեւ մեղանչող, ցրտից տանջուող ինդճ պառաւին քարկոծել էր տալիս, որովհետեւ նա հակառակ օրէնքին՝ կիւրակէ օրում խռիւ էր հաւաքել վառելու համար: Թէեւ Օհանն այս ամէնն ասել էր, բայց նա դարձեալ չէր ուզում համոզուել: Նա իւր ունեցած ուժի չափով էլ տուկուն կամք ունէր, մի անգամ այսպէս էր համոզուել: Տէր Մուշեղն այնքան խաւարամիտ էլ չէր, նա այս ամենը լաւ գիտէր, բայց ասում էր. «Ինչի՞ իմ անարատ ձեռքը շողախեմ պիղծերի արիւնով, այս ձեռքերը նուիրուել են միմիայն պատարաղելու եւ բարիք գործելու համար: Թող ժողովուրդը կատարէ այդ պաշտօնը, ես նրանց թողութիւն տալիս եմ, եթէ ես սպանեմ, ինձ ո՞վ է թողութիւն տուողը, արիւնս ծծող վարդապետնե՞րը»:

— Ա՛յ Տէրտէր, արեւիդ, գլխիդ մեռնիմ, էդ ի՞նչ բաներ ես խորհում. եթէ ես ճշմարտութիւնը յայտնեմ, ինձ ատում են «փոօղիսսակ» է. կէս կարգաւոր էլ ինձ համարիւր, ես թողութիւն տալիս եմ քեզ, դու ինձ լսիր. շատ էլ էն փոսած խելք վարդապետներին մտիկ մի տուր. նոքա իրենց կարդացածը չեն հասկանում: Մեր պապերը շատ լաւ են ասել. «Եթէ նրանք լաւ մանած լինէին, իրենց տան պատից կախած կը լինէին»: Ո՞վ է իմանում թէ նոքա ինչ հօր վաստակներ են, ամենքը մի-մի աշխարհից եկել եւ մեր գլխին վարդապետ են դառել: «Եթէ միբուքում շնորհք լինէր, է՞ծը պէտք է որ մարգարէ դառնար», ասում են թուրքերը, որոնց ազգն անիծած՝ խօսքն օրհնած է:

Տէրութիւն, արի ինձ մտիկ տուր, եղ խելքը խելք չի, ասում էր Օհանը:

Տէր Մուշեղը՝ ոչ մի գիւղացու, ոչ մի ազգակա- նի Օհանի չափ չէր սիրում: Նա իրաւունք էր տալիս նրա ասածներին, բայց մի անգամ այնպէս էր ուխ- տել: Չարմանալին այն էր, որ շատ քիչ էր նեղա- նում կամ բարկանում Տէր Մուշեղը. հպարտութիւն, պարծենկոտութիւն ասած բաները բոլորովին բացա- կայ էին նրանից. նա մի երեխից աւելի պարզ եւ խո- նարհամիտ էր, եթէ Օհանի չափ աշխարհներ տեսած եւ քիչ շատ զարգացած մարդ լինէր, ոչ ոք չէր հաւատա- րի նրան, բայց նա մինչեւ անգամ չէր ուզում գիւ- ղից դուրս գալ շատ ժամանակ: Եթէ նրան ասէին՝ քա- ղաք երթանք, կարծում էր թէ դժուար էին հրաւի- բում իրեն, այնքան որ զզվում էր քաղաքից. նորա գործը միշտ պարզ գիւղացիների հետն էր եղել, նրա համար էլ գիւղացիների հետ մնալ էր սիրում՝ քան թէ քաղաքացիների:

Օհանը շատ էր խորհում որ մի կերպով համոզէր Տէր Մուշեղին, որպէս զի թշնամիները նորա վերայ յարձակուելիս՝ ողջ չը թողնէր նրանց: Այս անգամ աւելի բնական օրինակներով խօսեց նրա հետ, որով միայն կարելի եղաւ պարզամիտ եւ գիւղական թանձ- բամտութիւն ունեցող քահանայի գլխում մի բան մտցնել:

— Տէրութիւն, այս օր մի քանի հարցեր էլ պիտի ասամ քեզ, բայց՝ լաւ խորհելուց յետոյ պատասխանը տուր: Եթէ գոմէշդ կամ եզրդ կատաղի եւ քեզ ու գաւաղներդ կտոռչնորով վերաւորի, ինչ կ'անես այդ անպատանին:

— Կը մորթեմ, պատասխանեց Տէր Մուշեղը:

— Եթէ մկները շատանան եւ տանդ եղած կերա- կուրներն ազականեն, ինչպէ՞ս կը վարուես նրանց հետ:

— Ականատով կամ թոյնով կը ջնջեմ. պատասխա- նեց Տէր Մուշեղը:

— Ա՛յ, հիմի ճիշտը պատասխանեցիր Տէրութիւն. հաստատ հաւատացիր՝ որ Գող Մժգօն եւ նրա նման աւազակները, կատաղած գայլից, օձերից, կարիճներից եւ մկներից էլ վտանգաւոր եւ զգուելի կենդանիներ են: Երբ դու չես խղճահարվում քո աշխատաւոր եզան են: Երբ դու չես խղճահարուիլ նաեւ վտանգաւոր աւա- մորթելուց, մի խղճահարուիլ նաեւ վտանգաւոր աւա- զակներին մորթելուց, եթէ նոյն իսկ նոքա քրիստոն- եաներ լինին, որովհետեւ նրանք խաղաղ ժողովըր- դեան, մէկ խօսքով՝ մարդկութեան թշնամիներն են, ասաց Օհանը:

Տէր Մուշեղը սիրով մտիկ էր անում Օհանի այս խմաստուն ասածներին: Նա իւր մտքում իրաւունք էր տալիս Օհանին: Երբ Տէր Մուշեղին դուրեկան խօս- քեր ասէին, շարունակ ժպտում էր, որով հասկացվում էր թէ՛ նա համոզվում է իրեն ուղղուած խօսքերից: Օհանը համոզումի յաջողութեան նշաններ էր նըմա- բում նրանում, այս անգամ լաւ կարողացաւ բռնել նորա թոյլ երակը. նա տեսնում էր, որ Տէր Մուշեղը տակ ու ծէր պատասխաններով չէր կարող մեջից դուրս գալ, նորա ժպիտներն էլ համաձայնութիւն յայտնել էին նշանակում իրեն ասած խօսքերին: Այն օրից՝ կարծես Տէր Մուշեղի սիրան էլ փոխուեց, նա այլ եւս չէր խղճահարվում, երբ գիւղացիներն աւազակներին սպանում էին: Մշեցունու աղաչանքն եւ արատուք-

ներն էր միաք բերում. այժմ նոր էր հասկացել նա իւր սխալը, որ չէր թողուցել վառուած սիրտ մշեցուն հուն սպանելու իւր էրկան եւ դաւակներին սպանող քրդին:

Մշեցունին եղեգիտում պատմել էր Տէր Մուշեղին, որ ինքը Մուշի դաշտի Մուշեղաչէն գիւղիցն էր. հինգ ձիաւոր քրդեր չորս օր առաջ նոցա տան հիւր էին եղել: Արշալոյսին երբ իրենք միամիտ վեր էին կենում, քրդերը սրերը մերկացրած, ամբողջ ընտանիքը կոտորել եւ միայն նրան էին փախուցել ձիու հետ, իւր աննման գեղեցկութեան պտոճառով:

Մուշեղաչէն գիւղի երկու երիտասարդներն էլ միեւնոյն օրը եղեգիտն էին հասել՝ իրենց գերուհուն դանելու համար, որոնց յանձնել էր Տէր Մուշեղը իւր ազատած գերուհին:

Տէր Մուշեղին համոզելու համար, հարկաւոր էր գտնել նորա թոյլ կողմերը. էն էլ լաւ արամադրութիւն ունեցած ժամանակները, նա համոզվում էր մի միայն բնական օրինակներից, որպիսի օրինակներով միայն Օհանն էր կարողացել գտնել նորա այս բնաւորութիւնը: Տէր Մուշեղի աչքում Օհանի նման խելացի մարդ չէր ճարվում ողջ աշխարհում, նորա համար էլ նրան միայն սիրում եւ գովասանում էր: Նորա ներկայութեան ոչ ոք չէր համարձակվում Օհանին բամբասել կամ փոփոխատան անուանել: Արդէն Մուկ Աւէի ոտքը վաղուց էր կտրվել Տէր Մուշեղենց տանից, նա այլ եւս չէր գիւղում չէր համարձակվում բամբասել Օհանին, այլ քաղաքում եւ ուրիշ գիւղերում, որի խառնակիչ բնաւորութեան ծանօթ լինելով շատերը, կարեւորութիւն չէին տալիս նրա շաւլաթանութիւններին:

Տէր Մուշեղը շատ անգամ պատահել էր Գող Մըժ-դօյին եւ նորա մարդկանց, նա կարող էր սպանել նրան, բայց շատերից լսել էր, որ աւաղակապետը ոչ թէ միայն հարուստներին էր կողոպտում, այլ աղքատներին էլ երբեմն օգնում էր. լինէին նոքա հայ կամ թուրք, ինչպէս անխտիր կողոպտում եւ սպանում էր. այնպէս էլ անխտիր բաշխում էր\*: Ժողովրդի կողմից դանազան կարծիքներ էր յայտնվում Մժղօյի մասին, ոմանք նրան հայ էին կարնում, ոմանք՝ պարսիկ եւ ոմանք քիւրդ. որովհետեւ այս լեզուները հաւասարապէս իմանում էր: Տէր Մուշեղը նորա համար չէր ուզում մահացու հարուած տալ նրան եւ ընկերներին, որովհետեւ նոցանում գտնվում էին եւ հայեր, նա կը մեռնէր՝ բայց հայի արիւնը չէր թափի:

Խօջենց Գրիգորը Կ. Պօլսում շատ սիրելի դարձաւ ժողովրդին, նորան համակրում էին թէ հայրենակիցները եւ թէ պօլսեցիները: Կարճ ժամանակից յետոյ, ժամակոչութիւնից լուսարարութեան պաշտօնին բարձրացաւ իւր համեստ եւ ազնիւ բնաւորութեամբ: Որովհետեւ նա շատ քաղցր ձայն եւ եղանակներ սովորելու բնդունակութիւն ունէր, լուսարարութիւնը յանձնեցին նրան որ ժամում գեղեցիկ շարականներ երգէր: Այսպիսով միջոց ունեցաւ Գրիգորը եւ հայե-

(\*) Մրակից ասուեցիկ սարի առաջ պարսիկ «Քեարաւ Կաջախ» եւ այսպիս եր վարվում հարուստների եւ աղիւսների հետ, որն միևնույն Կարին եւ Բաղեշ գաւառները հասաւ: Ռուսաստանի Նախիջեւան եւ Երեւան գաւառների բնակիչների վերայ սարաւափ ազդեց:

բէն լեզուի կանոնները սովորելու . որովհետեւ մինչեւ այն օր բնական օրէնքին հետեւելով՝ բաւական անսրբալ գրում էր:

Համաճարակի երկիւղից ամբողջ հարուստ դասակարգը թողել էր իւր ունեցածը եւ կ. Պօլսոյ օգաւէտ բարձունքներն էր փախել. միայն պանդուխտ գաւառացիներն էին մնացել, որոնք աներկիւղ կալում էին մահու դէմ, որոնք արդէն առանց նորան էլ կիսամեռ վիճակումն էին գտնվում: Գօլեոան օրական հազարաւորներ զանազան փախչում էին, փախչում էին նաեւ հարուստ գաւառացիներն զէպի իրենց հայրենիքը: Մնացել էին միայն չքաւոր բեռնակիր գաւառացիներն եւ եկեղեցական պաշտօնականները, որոնք աներկիւղ կրում էին մեռելներին զէպի գերեզմանները:

Լուսնկային մի գիշեր էր. եօջանց Գրիգորը Մայր եկեղեցու ընդարձակ շրջարակում պտտում էր տխուր ու տրտում: Մի Շատախեցի բեռնակիր այդ օր սղակի նամակ էր ստացել հայրենիքից, որով յայտնել էին նորա կնոջ մահը: Պանդուխտ բեռնակիրն այդ օր մինչեւ կրեկոյ լաց էր եղել: նորա հայրենակիցները մխիթարելու էին եկել նորան, որ եկեղեցու խցերից մինումն էր մնում: Սոքա հինգ ընկերներ էին, որոնք շարունակ ասում էին.

— Մուրադ, հերեք է, լաց մի լինիր, թող Աստուած քո ձեթկիկ ձագերուն ողորմի:

Բայց նա շարունակ կոծում էր եւ ինչ որ երգեր էր երգում, որոնք անմատչելի էին Շատախից դուրս ելող հայերի համար: Գրիգորը լաւ էր հասկանում Շատախեցիների լեզուն: Այս գիշեր նա էլ էր

յուզուել, միշտ լաց էր լինում. բնազդը նորանում զանազան յայտնութիւններ էր անում, որի համար չէր կարող քնել նա այս գիշեր: Գրիգորը երկար պտրտեց եկեղեցու շուրջը. ահա նորա ականջին հասաւ Շատախեցու երգի զիւ ձայնը, Գրիգորի սիրտը տակն ու վերայ դարձաւ երգի այս յուզիչ բառերը լսելով:

— Ո՞րն էր սիսէ մեկ ծօլն երկու քալիւր,  
Սեւն էր մեջ՝ ավսակն էր պիւլիւր  
Կը զարվիւր, չէր խառվիւր յիրիւր:

Շատախեցին երգում էր իւր կնոջ վերայ, եւ այս խօսքերով նորա սիրուն աչքերն էր գովասանում, որոնց յաւիտենական նով փակուելու ցաւալի լուրն էր առել: Նա ողբում էր միեւնոյն ժամանակ եւ իւր էր անէր որբերը, որոնց մի պատառ չոր հաց հասուցելու համար հեռացել էր անուշ վաթանից, բաժանուել էր անխղիւրի կապով միացած կնոջից եւ սիրելիներէից: Գիշ վերջ՝ դարձեալ շարունակեց Շատախեցին:

— Թողիք որ ընկեւ եւ երեսն գետեր,  
Էջեւ ձեք պեթիկ ձկներուն ընկեր,  
Ինչկի՞ խաւարի տուն շէն ու արեւ,  
Քաւի որ արժեքս եւ անխեք, անմեք:  
Ինչկի՞ խաւարի պաղ պաղ ախրներ,  
Որ սի չը շեւ ետուկիս խաւրներ,  
Շողոն ու Մարդիկ, Վրդոն ու Վարդիկ  
Մնացին անտեք, սկրզ, անխարսիկ  
Մըկայ չի ծխայ արեւ տակն երդիկ:

Գրիգորը սրտի կսկծից արագութեամբ գնում ու գալիս էր եկեղեցու բակում: Նա այժմ մտքով սլացել էր Վան, ինչպէս Շուշանի հիւանդութեան անկողնի մօտը նստած, լսում էր նորա տքոցի եւ խուլ հառաչանքների ձայները, դիտում էր նորա գունաթափ կերպարանքը եւ մեղուչ հայացքը, որոնցմով օգնութիւն, դեղ ու դարման էր խնդրում իրանից: Իսկ նորա հայր Օհանն ու իւր անբախտ մայրը, նորա գլխի վերեւ նստած՝ հարցեր էին ուղղում: — Ո՞ր անդդ է ցաւում, Շուշան ջան, ոտնե՛րիդ մատաղ:

Տխուր երգի վերջին բառերն այնքան աղղեցին Գրիգորի սրտի վերայ, որ նա ինքն էլ սկսեց զառանցական հարցեր անել:

— Շուշան ջան, աչքերիդ, երեսներիդ մատա՛ղ, աճա եկայ, վեր կաց անկողնից, Գրիգորդ եմ, ան՛ս, ճանաչո՞ւմ ես ինձ: Ա՛խ, աչքերս կուրանային, պատասխանս չի տալիս, նա ծանրապէս հիւանդացել է:

Այս ատեն ժամակոչ Մանուկը նրա մօտն էր հասել եւ այս խօսքերը լսելով հարցրեց:

— Ո՞ւմ հետն ես խօսում Գրիգոր, դու ծովե՞լ ես, ինչի՞՞ քեզ ու քեզ խօսում ես այս մութ տեղում, ի՞նչ է պատահել քեզ այս գիշեր:

Գրիգորն ինչպէս երազից արթնած, մի փորձ ուղեց անել դուրս հանելու համար իրեն այս տխուր վիճակից:

— Ոչինչ, Մանուկ ախար, մի քիչ անհանգիստ եմ:

— Օհանի աղջիկն անհանգի՞ստ է անում քեզ, ծիծաղելով նկատեց ժամակոչ Մանուկը, որ Գրիգորի վանայ դրացին էր եւ երկար ժամանակ Մայր եկեղե-

ցու ժամակոչութեան պաշտօնումն էր:  
 Հեռեւեալ օրը Գրիգորը մի նամակ ստացաւ Օհանից, որի մէջ գրել էր մի քանի տող նաև Շուշանը, որով խնդրում էին նորա վերադարձը: Որովհետև Պօլսոյ գօլեռայի լուրը հասել էր Վան, նոքա խոստացել էին մինչևեւ անգամ ճանապարհածախսն էլ ուղարկել, միայն թէ նա ողջ եւ առողջ հայրենիք վերադարնար: Գէլոնց Սւանէս աղին էլ գրել էր Օհանը, բայց նա արդէն փախել էր Պօլսից Զմիւռնիա, որին տակաւին յիտուն դուրուչ պարտատէր էր մնացել Գրիգորը, բայց նա վախեցել էր մինչևեւ անգամ նորա մօտը գնալու. որովհետև վարակուած մեռելների էր մերձեցել Գրիգորն իւր լուսարարութեան պաշտօնից ստիպուած:

**ԺԹ.**

Գող Մժղօն զանազան արչաւանքներում կորուսել էր իւր բազմաթիւ ընկերները, որոնց ընտանիքների հետ խիստ անգթութեամբ էր վարուել կառավարութիւնը, այս պատճառով շատերն զգուշանում էին Մժղօյին իրանց տանը պահելու, բայց մի քանի երկչոտ հայերից եւ չարազործութեան անդունդը գլորուած քրդերից:

Լ. Գիւղի վերանորոգուելու տասն տարին անցել էր, երկիրը բաւական խաղաղել էր, որովհետև կառավարական պաշտօնեաները լաւ էին հասկացել, որ քանի գնար վատոււրականը կ'ամայանար շինարար եւ հարուստ հայերից, այս պատճառով էլ խստագոյն հրա-

ման էր հանել բռնակալներին խստիւ պատժելու հա-  
մար: Աշխարհը չէննալ սկսեց, փախստականներէց ու-  
մանք սկսեցին վերագառնալ իրենց հայրենիքը: Գող  
Մժգոն միայն էր մնացել, որ շարունակում էր իւր  
շահատակութիւնները, բայց ո՛չ առաջուան յանդգնու-  
թեամբ: Երկիրն իւր կատարեալ հարստութեան վա-  
րկեքներէ մէջն էր, շնորհիւ հայ հատարակութեան:  
Ինչ ժամանակէց վերջ Գող Մժգոն էլ անյայտացաւ.  
տարին կը լրանար որ Գող Մժգոյից ոչ ոք լուր տուող  
չկար: Լ. գիւղի ժողովուրդը արդէն իւր կատարեալ  
երջանակութեան մէջն էր, խելացի Օհանի գիւղապա-  
տութեան շնորհիւ: Տէր Մուշեղը, գիւղի փայտաչէն ե-  
կեղեցին քանդեց եւ սրբատաշ քարերից կամարակապ  
մի եկեղեցի շինել տուեց, մնացել էր Ընէս Միսոյնց  
ընտանիքը միայն, որ չ'էր վերագարձել, բայց նրա եւ  
գիւղացոց թղթակցութիւններն անպակաս էին մի-  
մեանցից:

Գարուն էր, Լ. գիւղացիները գոմէշներէ խա-  
մահանէսի հանդէսն էին կատարում. դաշտերը բաց-  
ուել էին: Տէր Մուշեղը մի զոյգ նոր եզներ էր առել.  
որոնք գիւղից կէս ժամաչափ հեռաւորութեան վերայ  
ունեցած իւր սեփական արտը տարաւ արօրավար ա-  
նելու՝ փորձի համար: Տակաւին նոր էր սկսել երկու-  
ակօս բանալ. անա կեատիւկից դուրս եկաւ մի միջա-  
հասակ ու հատակիկ գէրվիշ, որը մի զոյգ գեղեցիկ եղ-  
ներ առաջը գցած գէպի Տէր Մուշեղն էր յառաջանում:  
Քահանան մի քիչ կատակակց եկուորից, որովհետեւ նա  
իւր վերայ կապած ունէր մի զոյգ ատրճանակներ,  
մէջքին՝ կեռ թւր եւ ուսի վերայ դրել էր գէվրի-  
շական երկերեքան լայն ու խոշոր թաբարը: Տէր Մու-

շեղը ու կողմից իր վարն էր անում, ակոս  
ների ուղղությունն էր հսկում և աչքե-  
րի տակից դեպի ինքն առաջազող դերվի-  
շին էր դիտում: Դերվիշը Տեր-Մուշեղի  
մոտ հասնելով, «Օրնյաւ տեր - Տեր-Մու-  
շեղ,» բարեվեց նրան՝ մի հայից ավելի  
մաքուր արտասանությամբ: Տեր-Մուշեղը  
զարմացալ Դերվիշի շնորհքով հայերեն  
խոսեցելու վրա՝

— Զես ճանաչում ինձ, տեր հայր, ծիծա-  
ղելով ասած դերվիշը՝

— Կարգս վկա, չեմ ճանաչում - որդի  
պատասխանեց Տեր-Մուշեղը՝

— Հետո կ ճանաչես, - ասած Դերվիշը: Դու  
այդ եզներն արձակիր, մի քիչ եւ իմ  
բերածները փորձիր, ես սրանք Պարսկաս-  
տանից եմ բերել, և այս երկեւ գիշեր  
է, որ քուն չեմ եղել: Դու փորձիր  
սրանց մինչեւ ես մի քիչ հանգիստ քնեմ.  
Եթե հավանեցիր, շատ էժան գնով քեզ եմ  
տալիս:

Տեր-Մուշեղն արձակեց իր եզները և  
և դերվիշի բերած եզները Լժեց: Հոգնած  
դերվիշը թաբարը կշտին, իսկ ատրճանակ-  
ները բարձի նման գլխի տակ էր դրել և

քու ն էր քաշուամ: Տեր-Մուշեղը ճանաչեց  
 նրան, որ հայ էր նա. մի քանի գլուխ  
 գնաց ու դարձավ յուր նոր լծած եզներով,  
 այդ ժամանակ նրա սիրտը ալեկոծվել սկսեց.  
 նա ինքն իրեն այսպես էր խոսում, «Ով  
 Աստված, այս չար միտքն ու խորհուրդը հե-  
 աացրու ինձանից,» բայց նրա սրտի հուզ-  
 մունքը քանի կգնար կը սաստկանար. նա մի  
 անգամ թողեց լուծը և գնաց դերվիշի գլխի  
 վերեվը կանգնեց. թաքարը ձեռքին առած և  
 սկսեց չորս կողմը լրտեսել. դաշտում ոչ  
 ոք չեր երեվում. դերվիշը խոր քնի մեջ  
 ընկղմել էր. Տեր-Մուշեղը խաչակնքեց ե-  
 րեսը. դարձյալ առաջին խոսքերը կրկնե-  
 լով, «Տեր-Աստված ազատիր ինձ այս չար  
 խորհրդից,» թաքարը կրկին տեղը դրեց և  
 վերադարձավ իր վիճակարն անելու. մի  
 քանի անգամ էլ գնաց ու դարձավ, բայց  
 նրա միտքը ու սիրտը ստիպում էր նրան  
 կատարելու այս գործողութունը, որն  
 արդար զայրութ թագեցրել էր նրանում.  
 նա դարձյալ թողեց մաճը և գնաց դերվի-  
 շի գլխի վրա կանգնեց. վերցրեց թափարը  
 և այս անգամ քանի ուժ ուներ թեվերում,  
 շեշտակի դերվիշի գլխի վրա իջեցրեց:  
 դերվիշի գլուխը երկունքի բաժանվեց:

Այլեվս տեղից չկարողացավ շարժվել նա.  
 Դե գնա դժոխք քեզ ուզարկողին լուր  
 տուր, անիծած, դու էս աշխարհը քանդեցիր:  
 վասպուրականի լեռները, ձորերն ու դաշտե-  
 րը հայ կտրիճների արյունով ներկեցիր ու  
 դեռ էս կշտացել: Հը Պարսկաստանից էիր  
 բերել այս եզները: Ով գիտե, որ հային  
 էիր սպանել և ձեռքից հափշտակել:  
 Տեր Մուշեղն ուզում էր դարձյալ իր  
 վիճակարը շարունակել, բայց միտքը բե-  
 րեց սպանված դերվիշի դիակը. դարձյալ լըր  
 տեսեց յուր չորս կողմը. ոչ ոք չեր երե-  
 վում, մոտեցավ սպանված դերվիշին, այս  
 անգամ զզվանքով բռնեց նրա ոտներից և  
 հերկված ար տի ալոսների մեջ ծածկեց.  
 արյան հետքերն էլ մաքրեց և սկսեց հան-  
 դարտությամբ գործը շարունակել. մտածեց,  
 որ դերվիշի բերած եզներն էլ մատնում  
 էին իրեն, արձակեց նրա եզներն էլ մատ-  
 նում էին իրեն, արձակեց նրա եզներն  
 էլ և քշեց. դեպի այն կողմը, որ տեղից  
 բերել էր նա, իսկ ինքն լուծն առնելով  
 գյուղը վերադարձավ:  
 Այս դեպքից մեկ ամիս անցել էր. նա  
 կոսենց պառավ Մանիշակը մեռավ. նորա որ-

դիները խնդրում էին, որ Տեր-Մուշեղը պատարագով թաղեր իրենց մորը, բայց նա չպատարագեց: Ծնունդը, զատիկ և նավակատիկ էին գալիս, Տեր-Մուշեղը չէր պատարագում, նա բացի պատարագ մատուցելուց, մնացյալ Օթենքներն անթերի կատարում էր, միայն պատարագ անելու անունը լսելիս:

Օհանը շատ համոզեց նրան, որ պատարագեր, բայց նա միշտ պատասխանում էր, «Մնարժան եմ պատարագ մատուցելու», «Մուկ Ավին իր կուսակիցների հետ բողոքեց Տեր-Մուշեղի վրա որը այդպիսի աւիթի էր սպասում արդեն: Առաջնորդը Տեր-Մուշեղին քաղաք կանչեց. հոգեվոր ժողովի անդամները որչափ հարցում արին նրանից, նա շարունակ իր անարժան լինելն էր հայտնում: Խնդիրը՝ քանի գնար՝ հետաքրքրակէ կան կերպարանք էր ստանում: Առաջնորդը հասկացավ, որ սրանում մի թաքուն միտք լինելու է. գյուղական մի պարկեշտ քահանա ինչ ծանր մեղք գործած կ'էին, որ նրա խիղճը չէր թույլատրեր իրեն պատարագելու. նաք հրամայեց Տեր-Մուշեղին եկեղեցի իջնելու և իր գործած մեղքն այնտեղ խոստովանվելու: Տեր-Մուշեղը

հնազանդվեցավ. ինչ ճար ուներ խեղճը. Լ. գյուղի ժողովուրդը միաբերան վկայում էր, որ նա մի տարուց ավելի է չէր պատարագել: Շոքա պահանջում էին առաջնորդից, համոզել նրան պատարագելու կամ մի ուրիշ քահանա ուղարկել գյուղը: Առաջնորդը Տեր-Մուշեղին մտցրեց Ս. Շշան եկեղեցու փոքրիկ տաճարը, դռները փակեց և սկսեց համոզել նրան, որ եթե մի մահացու մեղք գործել էր խոստովաներ ու թողու թյուն ընդուներ, որովհետեւ քահանաների կարգ, Օծում տուողն, արձակողն ու կապողը ինքք, առաջնորդն էր: Տեր-Մուշեղն այս անգամ ստիպվեցա՞ ճշմատությունը խոստովանելու: Թեեւ տաճարում ոչ ոք չկար, եթե մի ատրճանակ էլ արձակելու լինէին, ձայնը դուրս չէր ելներ. բայց և այնպես Տեր-Մուշեղը խիստ ցածր, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Մրբազան, գող Մժղոն եմ սպանել:

— Ե հե, այդ էր պատճառը, տուր որ այդ ազատարար ձեռքը համբուրեմ. Դու ողջ վասպուրականը փրկել ես մի մեծ փորձանքից:

Մրբազանը նրա ձեռքը խլեց և ազահաբար համբուրներ էր դրոշում նրա վերաջ

երկյուզած ջերմեռանդութեամբ յուր աջ  
ձեռքը նրա գլխի վրա դրավ և , ողորմեսց  
ցի, , արթնկով արձակեց նրան գործած հան-  
ցանքից , ասելով .

—Տեր— Հայր, ոչ թե միայն ես, այլ և  
—Ասոված պիտի ներեք քեզ հանդերձյալ աշխար-  
—հուսմ, որ մի այդպիսի առաքինութիւնն են  
գործեւ: Դե գնա, մաքուր սրտով պատարագի  
ներդ շարունակիր: Աստահ եղիր, որ խոստո-  
վանութիւնդ երկուսիս մեջ գաղտնիք կ մնա:

Առաջնորդը և Տեր—Մուշեղը Մ. Նշանի  
տաճարից դուրս ելան և առաջնորդարանը մը  
տան, ուր հողեվոր ժողովը և Ղ. գյուղի ժո-  
ղովուրդը անհամբեր սպասում էին նոցա վե-  
րադարձին: Սրբազանն այսքան միայն հայտնեց .

Եթե Վասպուրականում մի քանի հատ  
էլ Տեր— Մուշեղի նման քահանաներ էլ ու-  
նենայինք հայ ժողովուրդն իր կատարյալ  
ազատութիւնը ձեռք պիտի բերեր: Խեղճ քա-  
հանան մի մեծ առաքինութիւնն է գործեւ,  
իսկ իր կարծիքով մեղք է համարում:

Այնուհետեւ Տեր—Մուշեղը Վասպու-  
րականի առաջնորդի ամենասիրելի քահանան  
դարձավ և այս գաղտնիքը ոչ ոք չիացավ,  
մինչեւ Տեր—Մուշեղի վախճանվելը:

Faint, illegible handwritten text on aged, yellowed paper, likely bleed-through from the reverse side of the page.

Blank, light greenish-grey paper surface, possibly the back cover or endpaper of a book.

« Ազգային գրադարան  
  
NL0347602



46.973

891.99.

2-83